# ՍԻՈՆ

## ԱՄՍԱԳԻՐ

## ԿՐՕՆԱԿԱՆ–ԳՐԱԿԱՆ–ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ

ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԺԵ. ՏԱՐԻ 1941

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ԵՐՈՒՍԱՂԷՄ

digitised by A.R.A.R.@

# ՍԻՈՆ

ԺԵ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1941 — ՅՈՒՆՈՒԱՐ-ՓԵՏՐՈՒԱՐ — ԹԻՒ 1-2


## ԱՄԵՆ. Ս. ՊԱՏՐԻԱՐՔ ՀՕՐ ԽՕՍՔԸ

### ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՒ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒԱԾ

Երէկ երեկոյ, մեր հրաժեշտի ողջոյնը տուինք 1940 տարիին: Այս առաւօտ, 1941 տարուան գալուստը կ'ողջունենք սրտագին մաղթանքներով, որ ան ըլլայ բարի գալուստ մը ամէնուս համար:

Մեզմէ անդարձ բաժնուող 1940 տարին սեւ տարի մը եղաւ իսկապէս: Ալէկոծուած է աշխարհը: Օդերու եւ ամպերու մէջ, ծովերու եւ ցամաքներու վրայ մղուած ահաւոր պատերազմին աղէտներն ու աւերածութիւնը ծաւալած են մէկէ աւելի երկիրներու ու անոնց բնակիչներուն վրայ: Երէկուան խաղաղ եւ ազատ ու երջանիկ ազգերու ձեռքէն խլուած է իրենց ազատութիւնն ու անկախութիւնը, ու այսօր անոնք կը հեծեն բիրտ ու անողոք ոյժի մը երկաթէ թաթերուն ներքեւ:

Եւ սակայն, ամենամեծ մխիթարութիւն մըն է մեզ համար, որ համաշխարհային այս թոհուբոհին ու տագնապներուն մէջ, որ չենք գիտեր թէ որքան պիտի տեւէ տակաւին, մենք ազգովին, թէ՛ Հայրենիքի եւ թէ Սփիւռքի մէջ, զերծ մնացինք այն զարհուրանքէն ու աղէտներէն, որոնց ենթարկուեցաւ Հայութիւնը անցեալ մեծ պատերազմի եղերական տարիներուն: Այո՛, կը մխիթարուինք՝ երբ կ'իմանանք թէ վերելքի ու շինարարութեան խաղաղ աշխատանքները, ամէն մարզերու վրայ, մեծ թափով առաջ կը տարուին Արարատի ստորոտը՝ մեր Հայրենիքին մէջ, ուր կ'ապրի հայ ժողովուրդի մայր զանգուածը, եւ որ Հայութեան սիրտն ու անոր գոյութեան միակ յենակն ու խարիսխն է: Այս իրողութիւնը մեր սիրտերը կը լեցնէ անխառն հրճուանքով, արդար հպարտութեամբ եւ անյողդողդ յոյսով՝ իր աճիւններէն վերածնող մեր դարաւոր ու նուիրական Հայրենիքի երջանիկ ապագայի մասին:

Իսկ Սփիւռքի մէջ, հայը կը շարունակէ իր խաղաղիկ ու օրինապահ կեանքը, թէեւ տեղ տեղ, որոշ չափով, ցնցումներ կրելու վրայ է ան՝ պատերազմական վիճակէն անխուսափելի դժուարին պայմաններուն երեսէն:

Արդարութեան պարտք մըն է խոստովանիլ թէ, մենք՝ Սուրբ Երկրի բնա-


152-93 19352

digitised by A.R.A.R.@

կիչներու, զէթ մինչեւ հիմա, բախտաւոր բացառութիւն մը կազմեցին: Ամէն ազգերու եւ կրօններու պատկանող հաստատութիւններու, այս երկրին մէջ, կ՚ապրին խաղաղ ու բնականոն կեանքով, Մեծն Բրիտանիոյ բարեխնամ կառավարութեան հպատակասէր ու արդարակորով մականին ներքեւ:

Գալով Սուրբ Աթոռիս, երջանիկ եմ յայտարարելու՝ թէ չիրականացան անցեալ տարուան մեր յոռետեսութիւնները, հակառակ որ պատերազմը, վերջացող տարիին կէսէն ասդին, դուրս ելլելով իր կայուն վիճակէն՝ կայծակնային բնոյթ մը առաւ, ու հետզհետէ ծաւալեցաւ ու հասաւ մինչեւ Պաղեստինի սահմանները, որոնք մերթ ընդ մերթ ընդունեցան նաեւ թշնամիին օդապլաց այցելութիւնները:

Միւս կողմէ, ինչպէս Երուսաղէմի մեր պատրիարքական թեմերու հայ ժողովուրդը, նմանապէս Միաբանութիւնս, զերծ՝ պատերազմական վիճակէն անբաժան տագնապներէ, կարողացաւ շարունակել իր կանոնաւոր ու խաղաղիկ կեանքը՝ եկեղեցական, վարչական, թեմական, կրթական, տնտեսական եւ այլ մարզերու վրայ. ու այսօր կ՚ողջունենք Նոր Տարին՝ յոյսը սըրտերնուս մէջ, եւ մաղթանքը՝ մեր շրթունքներուն, որ 1941 տարուան ընթացքին, վերջնական յաղթանակովը իրաւունքի եւ արդարութեան դատին, եւ զարթումովը ու ծաւալումովը քրիստոնէական սիրոյ եւ եղբայրութեան զգացումին, երջանիկ բախտն ունենանք ողջունելու ցանկալի խաղաղութեան գալուստը ու ազատելու ներկայ մահասփիւռ ու համայնաւեր պատերազմի ծանր մղձաւանջէն:

Մինչ ցայն, չեմ տարակուսիր՝ թէ Սուրբ Աթոռոյս սիրելի Միաբանութիւնը, կշռելով ժամանակիս փափկութիւնն, ու թերեւս տակաւին չնախատեսուած նորանոր անակնկալներու պատահականութիւնը, ըստ նախընթացին, պիտի շարունակէ իր խոհեմ ու շրջահայեաց, համերաշխ ու եղբայրասէր կեանքն ու կենցաղը, ու ամէն մէկը ի գլուխ իր աթոռանուէր պարտականութեան՝ հոգածու պիտի ըլլայ կատարել իրեն ինկած աշխատանքի բաժինը:

Խօսքս փակելէ առաջ չեմ կարող առանց յիշատակելու անցնիլ այն դառն սուգը, զոր կրեցին Կիլիկիոյ Աթոռը ու իր ժողովուրդը, անսպասելի վախճանումովը հազիւ չորս ամիս առաջ օծուած իրենց յաւէտ ողբացեալ հայրապետին՝ Տ. Պետրոս Ա. Կաթողիկոսին: Հանգուցեալը, իր փոխանորդութեան ու տեղապահութեան չորս տարուան ընթացքին ունեցած իր ժողովրդանուէր ու շինարար արդիւնքներով, արժանացած էր ընդհանուրի անվերապահ ու լիակատար վստահութեան. այդ պատճառաւ, անցեալ Մայիս 30-ին Անթիլիասի կաթողիկոսարանին մէջ գումարուած Ընտրական Ժողովը միաձայնութեամբ անոր վրայ կեդրոնացուցած էր իր քուէները: Բայց, աւա՜ղ, վերահաս անակնկալ մահը ի դերեւ հանեց ամէնուն իր վրայ դրած ակնկալիքը: Երանաշնորհ Կաթողիկոսի մահուան վիշտը առաւելապէս զգացի ես, որ Սուրբ Աթոռիս մէջ իր դպրոցական ընկերը եւ ի վարդապետութեան օծակիցը եղած էի, ու աւելի քան կէս դարու բարեկամութիւն մը կը կապէր մեզ իրարու:

Այս վերջին քանի մը տարիներուս մէջ Հայաստանեայց Ս. Եկեղեցին

digitised by A.R.A.R.@

երեք գլխաւոր աթոռներու հաստատուն սիւները իրարու ետեւէ տապալեցան այսպէս, երբ անոնք տակաւին կրնային ապրիլ, եւ ամուր յենակն ու պահապանն ըլլալ մեր մարտիրոս Եկեղեցիին ու անտէրունչ ազգին:

Համազգային այս սուգին մէջ, եթէ կայ յոյսի եւ մխիթարութեան նշոյլ մը, այն է՝ որ Ամենայն Հայոց Հայրապետութեան Ամենապատիւ Տեղակալին եւ Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի գնահատելի ջանքերուն շնորհիւ արտօնութիւն ստացուած է, 1941 տարուան Ապրիլ 10-ին, Մայր Աթոռին մէջ գումարել Ազգային-Եկեղեցական Ժողով՝ ընտրելու եւ երեք տարիէ ի վեր այրիացած հայրապետական Աթոռին վրայ բազմեցնելու Սուրբ Լուսաւորչի արժանաւոր յաջորդը: Արդէն արտասահմանի թեմերէն ոմանք, ինչպէս Երուսաղէմի մեր պատրիարքական թեմը, նշանակած են իրենց պատգամաւորները, որոնք պատրաստ ունին անձամբ երթալու Ս. Էջմիածին ու մասնակցելու ընտրութեան: Մաղթենք որ անակնկալ պատճառներ պատճառ չըլլան Ազգային-Եկեղեցական Ժողովի յետաձգուելուն, ու ազգն համօրէն, քանի մը ամիսէն, բախտն ունենայ ողջունելու իր ազգընտիր ընդհանրական հայրապետը՝ Ս. Էջմիածնի նուիրական ու պատմական Աթոռին վրայ:

Հուսկ ուրեմն, պարտք կը համարիմ անկեղծ ու զգածուած շնորհակալութիւններս յայտնել Սուրբ Աթոռիս արբանեակ Միաբանութեան, եւ վարժարանաց պատուական ուսուցիչներուն եւ բարեջան ուսանողութեան՝ Նոր Տարւոյ առթիւ իրենց համակիր ու սրտագին մաղթանքներուն համար: Գովեստի ու գնահատութեան արտայայտութիւնները պիտի չուզէի, ու իրաւացի ալ չէր, որ իմ տկար անձիս միայն ուղղուէին: Սիրով կ'ընդունիմ զանոնք ու կը բաժնեմ Տնօրէն Ժողովի ինձ գործակից Հոգեշնորհ անդամներուն, եւ Սուրբ Աթոռիս մէջ ու անկէ դուրս ծառայող Հոգեշնորհ տեսուչներուն եւ Միաբանութեանս բոլոր աւագ եւ կրտսեր պաշտօնակալներուն հետ, որոնք ամէնքը իրենց ժիր ու աթոռանուէր աշխատանքներով գործակիցներ եղան ինձ, ու ջանացին թեթեւցնել յոգնաբեկ ուսերուս վրայ դրուած լուծը:

Նախախնամութեան օրհնութիւնը կը հայցեմ ամէնուն վրայ, ու ես ալ փոխադարձաբար կը շնորհաւորեմ Նոր Տարին, եւ սրտիս բոլոր ջերմութեամբ կը մաղթեմ որ ըլլայ անիկա արշալոյսը խաղաղաւէտ ու երջանիկ ապագայի մը՝ թէ՛ ներկայ խռովայոյզ աշխարհին համար եւ թէ Հայ ազգի ընդհանրութեան, ու մասնաւորապէս Ս. Աթոռիս Միաբանութեան, եւ Պաղեստինի ու Անդրյորդանանի մեր սիրելի հաւատացեալ ժողովուրդի լրութեան համար:

digitised by A.R.A.R.@

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ**

# ԱՄԱՆՈՐԻ ՍԵՄԻՆ

*Մեռալ տարին չըլլար ըսել թէ պատմութեան մէջ իր նմանը չունեցող տարի մը կը թողունք մեր ետին. չենք վերլուծեր անոր մէջ անկման և բարձրացման սովորական, իմաստալից ազդակները։ Այդ վերիվայրումները ընտել են պատմութեան։ Բան մը սակայն աւելի քան ստոյգ է. ամենէն խոր նուաստացումները վերադնելի են, պայմանաւ որ վճարելու սէրը չպակսի զանգուածներուն մէջ. ինչպէս նաև ամենէն բարձր վստահութիւնները խոցելի են ու կործանելի, եթէ պաշտպանուած չեն աւելի խոր և մարդկային ազդակներէ։*

*Անցնող տարին անգամ մը ևս մարդկային կեանքի այդ երկուութիւնը ցուցադրեց կսկիծի ու կասկածի խոր յուզումներով։ Այս վերիվայրումները սակայն պէտք չէ որ ջլատեն մարդկային յառաջդիմութեան և բարձրացման հաւատքով և սիրով տոգորուն հոգիները։*

*Յոյսին և երկիւղին միջև ծփանք մըն է մարդկային կեանքը. լաւագոյն խորհրդատուն՝ յոյսն է սակայն. անիկա գաղափարին յաղթական գնացքն է յաւիտենականութեան ճամբուն վրայ։ Որքան ալ դառն ըլլայ իրականութիւնը, և դժնդակ՝ պայմանները, առօրեայէն վեր մտածող հոգիներուն մէջ չի մթագնիր ընաւ փոթորկոտ գիշերէն անդին նշմարուող արշալոյսը։*

*Արդարև՝ որքան ալ դժնդակ ըլլան պայմանները, որքան ալ դառն լինին յուսախաբութիւնները, աշխարհը նորէն կը մնայ անհուն Բարութեան գործ մը։*

*Այսօր աւելի քան երբեք, ոգեղէն ուժին դերը, զոր գիտութիւնը սիրեց արհամարհել, ի զօրու է և անհրաժեշտ. և այդ՝ մեր կրօնքն է, կեանքի նկատմամբ Աւետարանի կեցուածքը։ Պատմութեան ծանօթ եղողները գիտեն թէ ինչ վիճակ կը պարզէր քաղաքակիրթ աշխարհը, երբ այդ կրօնը իր խանձարուրքը կը քակէր։ Խախտած էին ընկերութեան հիմերը, ինկած էր բարոյականը, եւ ծաղրանքի նշաւակ որդեգրեալ նուիրականութիւնները ժամանակին. սակայն շնորհիւ աշխարհ եկող լոյսին, մարդկային կեանքը նոր ոգի և շնորհք զգեցաւ, և նորոգուած ուղիով մը քալեց դէպի իր ճակատագիրը։*

*Այսօր, դարձեալ չարագուշակ ամպը կը մթագնէ կեանքին բոլոր հորիզոնները, վարանքի մատնելով ամենէն յուսալից և պայծառ մտածողներն անգամ. սակայն նոր տարւոյ առաւօտը, նոր յոյսերու արևածագն է գերագանցապէս. ամենէն վհատ հոգիներն անգամ անցեալի մխուր կողմերը մոռնալու պատրաստակամութեամբ կը սիրեն դիմաւորել զայն։*

*Ամանորը յոյսի տօնն է. անոր համար, տօնն է նաև կեանքին, և անոր նորոգութեան պայծառ ըմբռնումին։ Իսկ Ծնունդը՝ որ այդ նորոգուած ժամանակին մէջ կը նորոգէ առաւելապէս կեանքին ըմբռնումը, վաղեմի սովորութեան*

digitised by A.R.A.R.@

մը, կամ հինաւուրց աւելորդապաշտութեան մը զունազեղ մէկ վերջամնացութիւնը չէ, այլ մարդկային ճակատագրին կրած մեծագոյն յեղաշրջումին յիշատակը՝ և անոր տևականացման տօնը։

Ինչ փոյթ թէ զանգակներուն «... յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» համերգին, այսօր, կը խառնուի թնդանօթներու որոտը և մեռնողներուն հռնդիւնը, աղարտելով Աստուծոյ պատկերը անգամ մը ևս մարդուն մէջ. Ան նորէն կը ծնի սակայն, ինչպէս մսուրին՝ այնպէս ալ մարդոց հոգիներուն խորը։

Կեցած Նոր Տարւոյ սեմին, անստոյգ ապագայի մռայլ հորիզոններու դիմաց, փոխ առած մարգարէին խօսքը կը հարցնենք՝ «Իսկ այս ո՞վ է որ դիմեալ գայ յԵդովմայ, կարմրութիւն ձորձոց իւրոց ի Բոսորայ». ու կը սիրենք լսել պատասխանը Նոր Տարիին՝ «Ես խօսիմ զարդարութիւն և իրաւունս փրկութեան»։ Բոլոր հոգիներուն մէջ կայ այն խորունկ հաւատքը թէ բարին հզօր է չարէն, և արդարութիւնը անիրաւութենէն, թէ վերջին յաղթանակը միշտ բարիին կը մնայ. այլապէս անապրելի բան մը պիտի ըլլար կեանքը։ Կը հաւատանք թէ կարմրած զգեստներով եկող Նոր Տարին իրաւունքի և արդարութեան խօսքը ունի իր շրթներուն, վասնզի չկայ փրկութիւն առանց արդարութեան, առանց ազատութեան, որոնց համար տարիները կը հագնին յաճախ իրենց կարմիր պատմուճանները։ Ատոնք նշաններ են թէ աշխարհը ազատութեան և արդարութեան ծարաւը ունի, և այս նոր չէ։ Այդ իտէալը սակայն պայմանաւորուած չէ տեսութիւններով, ոչ ալ անոր համար մղուած պայքարներով, այլ այն ոգիով որ Աւետարանինն է, որ կը հրահանգէ երկու շապիկէն մէկը տալ չունեցողին։

Այսօր կրկին կը ծնի խորհրդանշանը այս վարդապետութեան, ի հեճուկս աշխարհին, որ կը շարունակէ իր սպանդին ահաւոր ու խելագար հանդէսը։

* * *

Այս քիչ մը ընդհանուր նկատողութիւններուն մէջ, մենք չենք մոռնար մեր իրականութիւնը։ Ուրախ ենք կարենալ զգալու թէ, աշխարհի այս տագնապին մէջ մեր գոյութիւնը ուղղակի սպառնալիքի ենթարկող աղէտ մը դեռ մարմին չէ առած։ Մեր հայրենիքը պատերազմի անմիջական ազդեցութենէն կը մնայ հեռու, երբ կը գրուին այս տողերը։ Մեր գաղթաշխարհի կարգ մը երկիրներու մէջ պատերազմի հետևանքները աւելի ծանր եղան, տնտեսական տագնապի մատնելով նաև մեր ժողովուրդը, որոնք դարմանելի են անշուշտ, եթէ խաղաղութիւնն ու արդարութիւնը չուշանան։ Ինչ որ զգալի, այրող տագնապն է մեր գաղթային կեանքին, տակաւ ոգեղէն վերանորոգման, հասարակաց իտէալի մը պակասին հարցն է։

1915-ի սերունդին իտէալը փշուր փշուր ինկաւ, և 1941-ի Սփիւռքի հայութիւնը անիտէալ ըլլալու դժբախտութիւնը ունի։

Անշուշտ մեծ աղէտին յաջորդող տարիներուն, մեր ժողովուրդը Սփիւռքի մէջ չհեռացաւ իր պապերէն, հաւատարիմ՝ զինքը կանխող սերունդին, շարու-

digitised by A.R.A.R.@

նակեց անոր աւանդութիւնը, յառաջ տարաւ կրթական գործը, դարձուց իր մամուլը, և շարունակուեցաւ մեր մտքին աշխատանքը՝ իր արժէքներուն փըշրանքներ աւելցնելով նախորդ սերունդի ժառանգութեանը վրայ։

Ապրեցանք մեր «երեսին ջուրով»ը, մեր ճակտին քրտինքովը. չմուրացինք, և տոկացինք այն բոլոր դժուարութիւններուն որոնք մեր շուրջը անպակաս եղան միշտ։ Հակառակ մեր դժնդակ պայմաններուն՝ Աստուծոյ գործը շարունակեց ապրիլ անհերքելիօրէն։ Հաւատարիմ մեր պապերուն, մենք մեր հոգին չփակեցինք երբեք Աստուծոյ անուան, և մեր շրթներուն՝ չլռեց իր փառքին ալէլուն։ Սակայն հակառակ վերոյիշեալ սրտառուչ հանգամանքներուն, մեզի կը պակսի տակաւին այն ոգեղէն իրականութիւնը, հասարակաց այն յարացոյցը, որուն մէջ կարենային հաշտուիլ բոլոր հայ հոգիները, որուն մտածումով տոգորուէին բոլոր սիրտերը։

Մեծ ազգերը յարդարած ու հանդերձած են դարերէ ի վեր իրենց գոյութեան խարիսխները. անցեալը, ներկան ու ապագան, ինչպէս իրենց կեանքին՝ այնպէս ալ իրենց մտածումին մէջ, հոգիէ ու արիւնէ շինուած գիծ մըն է. ցնցումներն ու աղէտները ժամանակաւոր կերպով միայն կը խանգարեն զիրենք։ Այդպէս չեն սակայն փոքր ժողովուրդները. այս վերջինները անհրաժեշտաբար պէտք ունին իտէալի մագնիսին, կարենալ ամբողջ մնալու աշխարհասասան աղէտներուն դիմաց։ Չունինք տակաւին այդ իտէալը, որուն մէջ հաշտուէին մեր սուր տարանջատումները, մեր բուռն տրամադրութիւնները և մեր անհաշտ ըզգացումները. և սակայն մեզ կանխող սերունդները երբեք անիտէալ չեղան՝ նոյն իսկ իրենց կեանքի ամենէն դժնդակ օրերուն, երբ իրենց առօրեայ կեանքն անգամ արիւնով գնելու ստիպուած էին։

Չունինք տակաւին «մեր ամէն բանէ վեր»ը, հասարակաց այն հոգեզինեալ կարգախօսը՝ որ ոսկի թելով մը առընչէր մեր հոգիները իրարու։ Այդ պիտի ըլլար առաջին՝ և մեզմէ կախում ունեցող այն միակ պայմանը, որուն իրագործած գետնին վրայ կեցած՝ պիտի կրնայինք ողջունել մեր պապերէն ըղձագին երազուած, և մեզմէ եղերօրէն կապտուած արդար ու հարազատ Ամանորը։

ԽՄԲ.

digitised by A.R.A.R.@

## ԿՐՕՆԱԿԱՆ

# ԺԱՄԱՆԱԿԻ ՆՈՐ ՏԱՐԻՆ

Կրօնական բաժնի մը մէջ այս վերնագիրը տարօրինակ է քիչ մը, քանի որ վարժութիւն եղած է մեզի Նոր Տարիին նայիլ միշտ հաճոյքներու սեղանէն, և ուրախութիւններու գիրկուած փափաքներ վերապահել այդ օրուան։ Ունինք նոյնիսկ մասնաւոր կրօնական արարողութիւն՝ այդ օրուան յատուկ, որով լոկ աշխարհիկ հանգամանքով մը կուգայ ան մեզի, մինչև իսկ իր հետ բերելով հեթանոս օրերու սովորութեանց ձևեր ալ, որոնց ստուերին ներքև հեռու խորհուրդով մը կը պարուրուինք ամէնքս, զատորոշելու համար տարուան այդ օրը իր բազմաթիւ միւս ընկերներէն։

Նոր Տարիին այդ բոլոր հանգամանքներուն կը խառնուի սակայն բան մը մեր զգացումէն, մեր յոյսէն, մեր ուրախութենէն ու տրտմութենէն, անբացատրելի րոպէ մը կը հագնի ան, որ խորհուրդն իսկ է, սրտագեղ յորդութեամբ մը քօղարկուած։ Այդ խորհուրդը իր հանգրուանը կը գտնէ կրօնական պահի մը բացատրութեամբ, ու կը մտնենք հայեցողութեանց գիծերէն ներս՝ քակելու համար ծալքերը այդ զգացումին, որ տարբեր չէ բնաւ կրօնականէն, ու կըրնայ բացուիլ անոր լոյսին ցոլացումին մէջ։

Այդ իրողութիւնը ուրեմն իրաւունք կուտայ դիտել տարին աւելի իրական գետինէ մը, որմէ կը շահի՛ ան միայն, ու կը ձերբազատէ մեզ աւանդութեան կրկնութեամբը մեզի բերուած թեթև մերձեցումէ մը անոր, քանի որ այդ օրը առանցքն իսկ է կեանքի առեղծուածին շուրջ կատարուած խորհրդածութեանց խտացած մէկ պատկերին։

Նոր տարին. անիկա մեր իմացումին յարաբերութեամբը չինուած, ու ժամանակին խաղերուն մէջ ապաստան գտած նոր մըն է, ոչինչ տարբեր անցեալ տարիին նորէն, որ հինցաւ, զոր հինցուցինք առանց երբեք կարենալ նորոգելու զայն անգամ մըն ալ, ու հինցածի յանցանքը պատրուակելով անոր վրայ՝ նետեցինք մէկ կողմ, նոր ատաղձներու վրայ փորձելու համար մեր՝ ժամանակէն պարտուած կարողութիւններուն վաստակը։ Առանց մեր հասկացողութեան յանցանքին չկայ ուրեմն տարիին նորն ու հինը, բայց կայ զայն հինցնելու մեր մեղքը, ու նորոգելու կամ նորոգ պահելու առաքինութիւնը, անկախ՝ ժամանակին սահանքէն ու փլուզումէն, ինք իր մէջ նոր, մեծ ու յաւերժական։ Վասնզի տիեզերականութեան յարաբերութեամբը տարիի մը անցումը կամ գալուստը անհունութեան մէջ քայլ մ'իսկ առնել չէ բնաւ, մեր իմացումին մէջ յառաջդիմութիւն մը արձանագրելու համար անոր անունով, եթէ մահուան հանդէսին հասնելու իրողութիւնը՝ այդ զարգացումէն անցնելու պարտադրութեան մէջ չդնէ զմեզ, ու եթէ անցեալին աւերակներէն չնայինք ապագային բերելիք նոր կարելիութեանց վրայ։

Եթէ այդպէս, ուրեմն ամէն օր նոր տարիի մը առաջին օրն է, հինին կորուստին վրայ՝ սուգի ծաղիկ մը, պարտուած՝ ժամանակէն, եթէ զանիկա իր ատենին քաղելու երջանկութիւնը մեր իմաստութեան բերուած օժիտը չեղաւ։

Ունինք միջոցը զերծ մնալու ժամանակին փլուզումէն։ Ամէն ինչ իրն է. ու մենք՝ իր հիւրերը, մեր թշնամիին սեղանին շուրջ շարուած։ Կը թաւալի այդ սեղանը, ու ինչե՞ր կը տանի իր հետ, զանոնք հինցնելէ յետոյ, զանոնք մերկացնելէ ետք իրենց ժպիտէն ու գեղեցկութենէն։ Բայց տակաւին ունինք երջանկութիւնը նայելու տարիին որ կ'երթայ, և աւելին՝ ողջունելու տարին որ կուգայ, վասնզի ամէն անցնող տարի եկողին նորութեան ու գեղեցկութեան ազդարարն է միայն, ժամանակին անապատին մէջ զետեղուած ովասիս մը՝ կանաչներով զարդարուած, հոգ չէ թէ յուղարկաւորը հինին, որ կը քալէ դէպի սգաւոր ափերը մոռացումին. բայց երիտասարդ է ան հիմա, ու ծաղիկներ կը հաւաքէ իր ոտքերուն տակէն կեանքի հեւքով մը զարդարելու զանոնք։

Բայց չըլլայ որ մանուկի մը միամիտ հետաքրքրութեամբը մօտենանք անոր, դիտելու երջանիկ պահը այդ տեսարանին, ուր ծաղկազարդներ կը բոնկին ու աստղերը կուլան վերէն իրենց կուրծքէն հեռու բուսած այդ ծաղիկներուն համար։

digitised by A.R.A.R.@

Ականթարթներու պարն է միայն այդ տեսարանը, և ժամանակի հիւլէները գիրար կը հալածեն մեր մազերուն սպիտակներէն ապարանքներ շինելու համար իրենց շիրիմներուն շուրջ։ Վա՜յ եթէ ինկաւ մարդը հմայքներու խաբկանքէն հիւսուած այդ քունին մէջ, որովհետև մահուան զանգակներէն միայն պիտի կարենայ արթննալ իր ննջարանէն բացուած գերեզմանը դիտելու համար հիմա։ Ա՛հ, մեր սպասումին կը նայի մահը՝ հասնելու համար մեզի, ու վերջին րոպէին միայն պոռալու իր սովորական հեգնանքովը թէ չկայ սպասում, պէտք է սկսիլ արշաւը որևէ ատեն, որևէ կէտէ։

Հեգնութիւն մըն է դարձեալ մեր պայմանաւորած Նոր տարին, ստեղծուած՝ առանց առնելու հաւանութիւնն ու կամքը ժամանակին, որուն օրէնքներէն դուրս պիտի մնայ ան իսպառ, ի՛ր օրէնքներով դատելու կրկին մեր գործերն ու տօները։

Մէկ անգամ միայն պիտի տայ ժամանակը իր Նոր տարին, տարածելով զայն մեր ծնունդէն մինչև մահը երկարող ճամբուն վրայ, ուրկէ քալող մարդը գիտակցութիւնն ալ պիտի մոռնայ հաւանաբար անոր, եթէ մահը, որ պէտք է գայ, իր դաժան ծիծաղը չնետէ մեզի՝ վերջացող տարիի իր դուռը փակելով մեր վրայ, առաջին և վերջին անգամը։

Ու կ՚անցնի ժամանակին մէջ նետուած այդ գարունն ալ, որ եղաւ կեանքը մարդուն, կարճ՝ ծաղիկի մը չափ, առանց զարդարուելու միշտ անոր գեղեցկութեամբը, բայց ապրելով շարունակ ժամանակին ցուրտին մէջ ու սպառնալիքին տակ։

Սարջանքը կը սահի հիմա հոգիներէն ներս, երբ վերջին հանդէսին՝ Նոր փափաքներ ու սէրեր կուգան շար ի շար, իրենց իրաւունքի պահանջով՝ մեկնած յոյսերը քրքրելու անհետացած կարելիութիւններուն, ուր ծաղիկ մ՚ալ իրենք կրնային աւելնալ ա՜լ խամրած այն պարտէզին մէջ, որուն հմայքին օրօրումներուն վրայ դիւթանք մը կը խայտար երբեմն, հովերուն ցանուած գգլխանքի ծովերէն։ Որքա՜ն միամիտ է մարդը, երբ կ՚ուզէ ետ նայիլ հիմա գերեզմաններու պարիսպներուն արգելքին առջև, մինչ կրնար առա՛ջ նայիլ ատենին՝ անշիրիմ հորիզոններուն դիմաց, կրակ մըն ալ ինք ցանելու ամպերու հրդեհին մէջ։

Ժամանակէն հեռու ու անծանօթ ապրած մեր սարջանքին քայքայումը կուլանք այժմ, եթէ կ՚սպասենք վախճանին, որ պիտի պսակէ ամէն ինչ, ինք ալ իր կարգին պսակուելու համար իր վախճանը յօրինող ժամանակէն։

Որովհետև, իրողութիւն է այլևս, թէ մարդերու թափօրը, որ իր անգիտութեանը մէջէն իսկ քալեց իր հև ի հև ընթացքը դէպի այդ վախճանին, իր բաժանումներուն կը վերածուի հիմա, կազմելով խումբերը հասկացողութեան իմացումին, հոգ չէ թէ այդ դասերը համախումբ պիտի մտնեն ներս ճակատագրի դարպասին երախէն, Նոր աշխարհի իրենց բաժինին խառնուելու ամանորեան հանդիսաւորութեան մը մէջէն։

Երեք խումբ են այդ մարդերը, իրենց յատկանշական տարազին ներքև ծածկուած նոյն պատմուճանովը երէկուան մարդուն, որ ժամանակով միայն կը կանխէ այսօրուանը, առանց ունենալու զինք զատորոշող ուրիշ յատկանիշ ամանոր կեանքի մը գնացքին վրայ։ Ատոր համար ալ հեռու կը մնանք սխալէն երբ կը վերցնենք պատկերը հին օրերու մեզի բերած կեանքին, ունենալու համար անխախտ կաղապարը այսօրուան խումբերուն, վաւերական՝ հինին կընիքին փորձովը հաստատուած իրողութեան հանդէսին պատճառովը։

Առաջինը մեծ խումբն է ժամանակէն դուրս ապրողներուն։ Անոնք մնացած են դասական տիպարը իմացական աշխարհէն հեռու ապրողներուն, իրենց անգիտութեան ստեղծած երջանկութեանը մէջ, ժամանակին մէջ՝ անկէ դուրս ապրելով շարունակ։ Անոնց մտածումին սևեռումը օրուան մը միջոցի սահմանէն աւելին չէ կրցած չափել երբեք, գետնաքարշ կեանքի մը անիմաստէն վեր բան մը փնտռելու համար, ու գործի մղելու իմաստի իրենց զգայարանը աւելիին ի խնդիր։ Բայց անոնք ալ մարդեր են ամէնուն պէս, ու կոչուած յարգելու այդ կեանքին իմաստը իրենց վստահուածին չափ ու իրենց ուժին տարողութեանը մէջ։ Ո՞ւր է սակայն մեղքը երբ իմաստութեան ժպիտէն շող մ՚իսկ չ՚իյնար անոնց անխռով հոգիէն ներս, գէթ տառապանքի մը սփոփանքը կաթեցնելու, ու ցնցելու պահ մը այդ զանգուածը որ կը քալէ անծանօթէն՝ անծանօթին, առանց դժելու

digitised by A.R.A.R.@

հետքը իր անցած ճանապարհին, ու տառապելու՝ տենչանքի մը համար, որուն լրումը կը նայի ժամանակին։

Ինչո՞ւ սակայն ան ըլլայ մեղք․ ինչո՞ւ չկարդալ այդ զանգուածին հոգեբանութենէն այլապէս հասկցուած իմաստութեան մը երջանկութիւնը, զուրկ՝ այո՛, իմաստաւորուած խուզարկութիւններէ, բայց զուրկ նաև այդ իմաստութենէն ծնած տառապանքին անհեթեթ պարտադրութիւններէն․․․։

Բայց ցորենի դաշտերէ չէ որ կը քալենք վերջապէս, որոնց մէջէն երկու կակաչ հաւաքելու համար եղած ըլլար ցանքը կարծես։ Մարդեր է որ կը քալեն նորէն մեր առջևէն իրենց ամբողջական կազմով ու գիտակցութեամբ, որոնք արհամարհոտ մերժումով մը նայած են իրենց քալած ուղիին, ամէն ինչ փոշի տեսնելու տրամադրութեամբ հոն՝ ուր ուրիշներ վարդեր կը քաղեն և մեղուները իրենց թիւմը կը ծծեն փեթակներ պարարտացնելու համար։

Ուրեմն կա՛յ մեղքը, խարանուած՝ անոնց ճակատին, ժամանակին մէջ՝ ժամանակէն օտար ապրելու, հոգ չէ, գիտակցաբար կամ անգիտակցօրէն․ մեղքին սակայն հեռու է միշտ անմեղութենէն։

Ահա թէ ինչո՛ւ այս մարդերը հեռու կ'ապրին միշտ նոր տարիի մը ուրախութենէն, քանի որ տարին իրենց համար չէ բնաւ, և չունի խօսք մը անոնց հասցէին նոր կամ հին, ուրախ կամ տխուր։ Աւելին․ մահը, որ պէտք է գայ, ամէնէն աւելի այս զանգուածին առջև կը դողայ, կը տկարանայ հոս իր վարկէն, կը թեթևնայ իր սարսափէն, ու կը տարուի մինչև իսկ պարտութեան մը մասին խորհելու գէթ անգամ մը, վասնզի կա՞յ աւելի զօրաւոր զէնք մահուան դէմ, քան անճանաչ անցնիլը անոր առջևէն․․․։

Ու ժամանակը կը ծալլուի այդ խումբին վրայ, երկինքին երեսին խաղացող ամպի մը պէս։ Ուրիշներ Նոր Տարի թող անուանեն այդ ծալքը, ի՛նչ փոյթ, հեգնուած է այդ ժամանակը իրմէ խուսափած զանգուածին զօրութենէն, որ պատառ մը չկրցաւ փրցնել անկէ իր հոգիին բոպիկը փաթթելու հոն, ու զայն ի՛րը ընելու յաղթանակի մը փառքով։ Կը մտնէ այդ սերունդը իր նոր տարիէն ներս, առանց կռուելու, յաղթելու կամ յաղթուելու։ Վատնուած ժամանակը իր վրէժը կ'առնէ զանոնք վատնելով։ Արձանագրութիւնները կը լռեն այդ մասին։

Տողանցքէն կը զատուի երկրորդ խումբը ժամանակին մէջ ապրողներուն։ Միջին զանգուածն է այս երկու ծայրերուն։ Կտրուած՝ երկու պոչերէն, բայց կայ իրանը գիտակցութեան։ Նոր Տարին աւելի վստահ կը մօտենայ անոնց․ նաև՝ յարգանքով։ Այս խումբը կը ճանչնայ ժամանակը, թէև չի կրնար նայիլ անկէ դուրս։ Ունի իր ձայնը փակելէ առաջ նոր տարին, ու իր անցած ճամբաները անապատներու մէջ չեն շինուած ապուշ արևի մը հրկիզումին տակ մեռնելու համար։ Հոն յարգուած է մահը, վասնզի մարդիկ գիտեն չափել անոր սահմանները հոն մտնելէ առաջ։ Հոն կայ սերունդ մը իր բարձրագոյն զգայութիւններուն գիտակցութեանը մէջ ապրող․ որ կը խօսի, կը խորհի ու կը տառապի։ Երջանկութիւնը, իր վերլուծումին մէջ, անկէ աւելին չի պարունակեր արդէն։ Մնացածը երազներու աշխարհին կը կապուի, ու չի կրնար փրթիլ անկէ։

Ուրեմն, պէտք չէ վախնալ անոնց մօտենալէ։ Ընդհակառակը պէտք է ջանալ ապրիլ անոնց մէջ, անոնց հետ ու անոնց պէս։ Ժամանակը կը վախնայ աւելի անոնցմէ․ անոր համար շուտ կը փախի։ Բայց հոս րոպէներն ալ հաշուուած են, ու կը ծանրացնեն զանոնք մարդիկ՝ արգիլելու համար արագութիւնը անոնց խուսափումին։

Ժամանակի նոր տարին իր հաշուեյարդարը դժուար կ'ընէ հոն, քանի որ մահէն վեր գործեր կան կատարուած իրենց տէրերուն ետևէն նայող։ Փոխուած է հոս ժամանակին դէմ դարձած զէնքին բնոյթը, բայց սպանական է ան, տոկուն ու անխոցելի, ուղղուած՝ մահուան կուրծքէն ներս, հոգ չէ թէ հեռու անոր սիրտէն։

Այս խումբը ապրա՛ծ է իր ժամանակը, կամ ժամանակ մը գէթ, իր փառքին անունովը յատկանշուած։

Մահուան նոր տարին քիչ բան կը տանի անոնցմէ։ Արձանագրութիւնները կը մնան անաղարտ։

Ժամանակէն վեր ապրողներու խումբը երրորդ դասակարգն է ընդհանուր զանգուածին։ Քիչեր կը մտնեն այս թիւէն ներս,

digitised by A.R.A.R.@

որովհետեւ մեծ է պահանջուած արժանիքը. ու արժանաւորները բացառութիւններու մաս կը կազմեն միշտ։

Բարձրագոյն հայեցողութիւններու ոլորտին մէջ կ'ապրին անոնք, գրեթէ կըտըրուած երկիրէն, աւելի մօտ երկինքներուն։ Իրենց արժանիքին մեծութեանը համար ամէնէն դժբախտներն են անոնք հաւանաբար, ժամանակէն վեր՝ բայց անոր ճնշումին տակ ապրելու հարկադրութեան պատճառով։ Անոնց մէջ հոգիին խորհուրդը կը խառնուի միտքի զգայարանքին՝ հրաշալիին առջեւ բացուելու համար։ Ու փառաւորութիւններ կը մահանան հոն, որովհետեւ ճղճիմ են ու թունաւոր։

Մի՛ մօտենաք անոնց, մեզի սովորական արժէքներու չափանիշովը դիտելու այդ նոր աշխարհին ձգտումները։ Նիւթի թանձրութենէն պարպուած ու իմանալի սահմաններու մէջ խարսխուած մարդեր են անոնք. իրենց արժանիքը չինուած յաճախ մեր արժէքներուն մերժումին թափովը ու քաջութեամբը։ Կրնան հատորներով չքալել անոնք պատմութեան մէջէն, ոչ ալ խառնուիլ զանգուածներուն՝ ընկերային կարգերու իշխելու համար։ Վասնզի հմտութիւնն ու զարգացումը իմաստութիւն չէ անպատճառ, ոչ ալ դպրոցներէ պէտք է գան, թուղթի կտորի մը ետին արժանիք կարդալու համար։

Անոնք տեսած ըլլան այդ կարծեցեալ արժանիքները կամ ոչ, վեր են միշտ անոնցմէ, ու կ'ապրին հոն՝ ոչ թէ արհամարհած ըլլալու համար վարինները, այլ զանոնք ճանչնալու մեղքէն խուսափելու համար։

Ժամանակը պատկառանքով կ'անցնի անոնց քովէն։ Բայց անոնք ստուերով կ'անցնին անոր վրայէն, դարերը սեղմելով ակնթարթներու բաժակին մէջ։ Վասնզի հոս տարիներով չէ որ կը չափուի ըլլալիք գործին տարողութիւնը. մնաց որ մեղքին անհագնութիւնը կրնայ պառկիլ տարիներու երկայնքին վրայ։

Հոս՝ Նոր տարիի հաշիւները կը լռեն։ Ամէն ինչ դուրս է անկէ։

Երուսաղէմ

Պ. Վ. ՄԻՆԱՍԵԱՆ

# ԲԱՆԻՆ ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆԸ ՍՏՈՒԳՈՒԹԻՒՆ Է

## «ԵՒ ԲԱՆՆ ՄԱՐՄԻՆ ԵՂԵՒ»

Աստուծոյ Բանը, Խօսքը, մարմին առաւ, մարդացաւ։

Քրիստոնէական ընդհանուր Եկեղեցին Աստուածայայտնութեան «մեծ եւ սքանչելի խորհուրդին» շուրջ կը հաւաքէ նորէն մարդոց մտածումները, անոնց հոգիներուն առջեւ բանալու համար աստուածային Խօսքին հրաշքը, որ «բնակեաց ի մեզ»։

Արդարեւ, խօսքը որ մարդկային սեռը յատկանշող կարողութիւն մըն է, մտածումին արտաքին զգեստն է, միտքին ու խորհուրդին հարազատ արտայայտութիւնը։ Խօսքը կը ծառայէ խորհուրդին, կ'օգնէ անոր, ինքզինք ըմբռնելու, եւ յետոյ արտայայտելու. մտածումով կը ճանչնանք իրականութիւնը, եւ խօսքով կ'արտայայտենք այդ ճանաչումը, այնպէս որ, մարդ նախ կը խորհի իր խօսքը, եւ ապա կը խօսի իր խորհուրդը։ Խորհուրդը, այս ըմբռնումով, կը դառնայ հայելին իրականութեան, իսկ խօսքը՝ հայելին՝ մտածումին, խորհուրդին։ Առանց խորհուրդի չկայ խօսք. ու նաեւ առանց խօսքի՝ խորհուրդ։

Խորհուրդը՝ մտածումը՝ կարելիութիւնն է ի զօրութեան եղած խօսքին, իսկ խօսքը՝ կատարումն է խորհուրդին, որ կը թանձրանայ, կը պատկերանայ, մարմին կ'առնէ խօսքին մէջ։ Խորհուրդ մը այն ատեն միայն ծանօթ կ'ըլլայ մեզի երբ զայն արտայայտենք խօսքով. ամէն անգամ որ խորհուրդ մը կ'ուզենք որ ճշդուի, իր բոլոր պարունակութիւնով, զայն կը խօսինք. ներքին խօսք մըն է ան. չէինք կրնար խօսիլ մեր խորհուրդը առանց խորհելու մեր խօսքը. կը խօսինք՝ ներքնապէս մտածելով, ու կը մտածենք՝ ներքնապէս խօսելով։ Ու ներքին այդ խօսքը ճշմարիտ չափանիշն է մարդուն էութեան. վասնզի խօսքը, կ'արտայայտէ խօսքին ետին կեցող մարդը. ամէն մարդ իր խօսելու կերպին մէջ կը դնէ ինքզինք. մարդուն խօսքը իր ըլլալու մէկ կերպն է։ Ու մարդ մը այնքան իրական ու ճշմարիտ մարդ է որքան իր խօսքը թափանցած է ցոլքովը այն խօսքին, որ Աստուծոյ

digitised by A.R.A.R.@

Բանն է, և որ մարմին առաւ և բնակեցաւ մարդերու մէջ։

Եթէ մարդկային խօսքը ունի հաղորդուելու, ազդելու և արտայայտուելու կարելիութիւն, որովհետև մարդ ոգեկան աշխարհի կը պատկանի, Աստուած՝ որ գերագոյն խորհուրդն է, տիեզերական ստեղծագործ բարին, վեհագոյն կամքը և կատարեալ Սէրը, գերազանցապէս անշուշտ պիտի ունենայ արտայայտուելու, հաղորդուելու կարելիութիւնը. Աստուած ունի այդ կարելիութիւնը, զոր մարդկային լեզուով պատկերօրէն կը կոչենք բան, խօսք։ Այս Խօսքը, Բանը, տիեզերքի ստեղծագործութեան ազդարար նշանը եղաւ. «Ասաց և եղեն, հրամայեաց և հաստատեցան», «որով ամենայն ինչ եղև»։ Աստուածային Բանը՝ — Լոգոս —, Խօսքն էր որ գոյութիւն տուաւ ամէն բանի. Աստուած համագոյքը ստեղծեց բանով, ռեզօնով, իր ստեղծագործութիւնը իրեն անմիջական միջոց ունեցաւ բանականութիւնը։ Այսինքն, Աստուծոյ Բանը՝ որ կարելիութիւնն էր, օր մը կատարուեցաւ, ակտի վերածուեցաւ, երբ Աստուած խօսեցաւ, բսաւ, երբ իր խորհուրդը, մտածումը խօսեցաւ, առարկայացուց, շարժման մէջ դրաւ. ու շարժումը՝ ի զօրութեան եղած բանի մը իրականացումն է, և ինչ որ բան մը կարելիութենէն (puissance) կատարումին (acte) կ'անցընէ, շարժումն է. այս կերպով Աստուծոյ խորհուրդը շարժեցաւ, ու խօսք—արտայայտութիւն դարձած՝ մարմին առաւ, ձև հագաւ, չօշափելի, ըզգալի յատկութիւններով օժտուած՝ եկաւ մարդոց մէջ բնակեցաւ. ինչ որ կար Աստուծոյ մէջ իբր խորհուրդ, կարելիութիւն, զօրութենաբար, եղաւ կատարեալ խօսք։ Աստուած բսաւ, ու ինքզինք ու իր խօսքը շարժման մէջ դրաւ, պատճառի և արդիւնքի կապակցութեամբ։

Աստուած ըսաւ և եղաւ. Բանը եղաւ վախճանական պատճառը (cause finale) գոյութեան և լինելութեան. Աստուած՝ բնութեամբ ստեղծագործ բարին, առաջին պատճառ ամէն իրականութեան, բարութեամբ ինքզինք իրագործեց, հոսեցուց ժամանակի ու միջոցի մէջ, ու թանձրացուց, չօշափելի, զգալի ընծայեց իր խորհուրդը. Աստուծոյ անտեսանելի խորհուրդը՝ իմանալի խօսքը եղաւ ժամանակի ու միջոցի, տևողութեան ու տարածութեան մէջ։

Ու տիեզերքը՝ Աստուծոյ արտայայտութիւնը եղաւ. Աստուծոյ Բանը գրկած է տիեզերքը իր թևերուն մէջ, որովհետև Բանին մարդեղութիւնը՝ աստուածայայտնութեան մեծ ակտը՝ խտացեալ մանրանկարն է տիեզերքի լինելութեան և պատմութեան։

Բայց իբր հոգի, հոգեղէն էակի՝ մարդո՛ւն ուղղուած է խօսքը. առ մարդն ուղղուած յայտնութիւն մըն է ան. վասնզի իր հոգեկան կազմութեամբ ու իր հոգիին աշխարհով, Աստուծմէ փրթած գաղափար մըն է մարդը, որուն հոգիին մտերիմ ծալքերուն մէջ՝ աստուածայինին հայրենաբաղձութիւնը կայ, անոր մէջ Աստուծմէ եկած ճառագայթ մը կը բնակի, ու այդ իսկ պատճառաւ Աստուծոյ խօսքը, իրե՛ն՝ մարդուն ուղղուած յայտնութիւն մըն է։

Այդ յայտնութիւնը որ հեթանոսներու մէջ անգամ չափով մը եղած է, վասնզի անոնք ալ ունեցած են մարմնաւորուած աստուածներու հաւատքն ու պաշտամունքը, աւելի գեղեցիկ և կենդանի կերպով եղած է Իսրայելի տեսանողներուն քով. «Եւ եղեւ բան Տեառն առ իս». մարգարէն Աստուծոյ հետ խօսիլ գիտցող անձ մըն է. բայց, մարգարէներու կրօնքը, ինքզինք «յայտնուած» նկատելու հանգամանքովն իսկ, կ'ազդարարէր իր ջնջումը, տեղ տալու համար նոր կրօնքի մը, որուն մէջ պիտի գար օր մը, երբ իր ամբողջութեամբ պիտի յայտնուէր Բանը, մարմին առնելով՝ ու մարդոց մէջ բնակելով, անոնց մտածումին ու հոգիին մէջ թափելով իր յաւիտենական խորհուրդներուն լոյսը։

Բայց տարբերութիւն մը կար, մարգարէներուն մէջ խօսող, և Յիսուսի մէջ ապրող Բանին. մարգարէները տեսան միայն զԱստուած, իբր արագ յայտնատեսութիւն մը, մինչ մարմին առած Աստուծոյ Բանը — Յիսուս — իր անձին վրայ տեսաւ զայն, իր մարմնին մէջ չօշափելի եղած, զայն ապրեցաւ և կրցաւ ըսել. «Ճանաչէ զիս Հայր, և ես ճանաչեմ զՀայր»։

Քրիստոսի ծնունդով՝ Բանին մարդեղութեամբ, քրիստոնէութիւնը աշխարհին չէր բերեր նոր իմաստասիրական դրութիւն մը, քովը դրուելիք զինք կանխող Յունաստանի և Հռովմի նախաքրիստոնէական մտածումի բոլոր ուղղութիւններուն՝ որոնց լաւա-

digitised by A.R.A.R.@

գոյն ներկայացուցիչներուն բերնով՝ «աշխարհ յաւիտենական փոփոխութիւն մըն էր, կեանքը՝ պարզ կարծիք մը, ու մարդկային ամէն ինչ՝ ծուխ միայն», այլ նոր կեանք մը, յայտնութեամբ լուսաւորուած, թեւաւորուած հոգեկան պատմութեան մէջ նոր կեանք մը, նոր իրողութիւն մը, բարգաւաճում մը, լինելութիւն մը, ծրագիր մը, աստիճանական, որ տիեզերքը կը մեկնէր իբր կեանք մը, որ իր պատմութիւնը ունի։ Աստուած՝ քրիստոնէական ըմբռնումի մէջ, ոչ թէ մարդկային բանականութեամբ և անոր ճիգերով գտնուած ու ապացուցուած Աստուած մըն է, ինչպէս էր հին հելլէն մտածումին մէջ որ տիեզերքը կը ստեղծէր հարկաւորաբար, այլ յայտնուած՝ ապրուած՝ ճանչցուած Աստուած մը՝ որ կը ստեղծէ աշխարհը սիրելով: Բանին մարդեղութեամբ մեզի տրուած յայտնութեան մէջ, Աստուած չսպասեր որ իր մասին մտածելով, բարձրանանք իր հայեցողութեան մեր մտքով, այլ գինք սիրելով, վասն զի այդ սէրն է որ զԱստուած կը դարձնէ Հայրը տիեզերքին, ու այդ սիրով՝ սրտով պիտի բարձրանանք իրեն. Քրիստոնէութիւնը չի մտածուիր, այլ կ'ապրուի. Բանին մարդեղութեամբ տիեզերքը կը լեցուի բարութեամբ մը, անհուն ու խոր սիրով մը, որ տիեզերքի մէջ պատմութիւն մը կը դնէ, և մարդոց կեանքին մէջ ալ տրամա մը. տիեզերքը սիրտ մը կը ստանայ, ու կեանքը իմաստ մը կը հագնի, երբ կը զգանք թէ անոր սկիզբը և վերջը տիեզերական Հայր մը կայ, որ իր սիրելի և սիրող որդին, Բանը, Սէրը, մարդոց մէջ կը ղրկէ, որ մարդոց տառապանքով ապրինի ու զանոնք եղբայր ընէ Իրեն ու Երկինքին։

Անոր ներկայութեամբ, մարդոց մէջ աստուածախառն շունչ մը պիտի թափանցէ ապականուած հոգիներու անդունդին մէջ ու քայքայուած ընկերութեան մը ծոցը. այդ շունչը պիտի փոխէ մարդուն բնութիւնը, մարդուն վերաբերմունքը՝ առ Աստուած։ Սիրոյ խոր պաշտումի ձև մը պիտի յաջորդէ մարդուն առ Աստուած ունեցած յարաբերութեան. այդ սէրը որ Աստուծմէ կուգար մարդուն, և որ ամէն մարդու կ'երթար, կ'եղբայրացնէ մարդերը Աստուծոյ մէջ, և իբր այդ, ամէնքն ալ նոյն Աստուծոյ որդիներ, համամարդկային եղբայրութիւն մը կ'իրականացնէ. ամբողջ մարդկութիւնը անցեալի, ներկայի ու գալիք օրերու Քրիստոսի անձով՝ Աստուծոյ մէջ կ'եղբայրանան։

Բայց ոչ այսչափ միայն. Աստուծոյ Բանը կ'ուզէ մարմնանալ միշտ մեր մէջ. Քրիստոս՝ Բանը՝ Լոգոսը՝ որ կը ծնի յաւիտենապէս ի Հօրէ, անգամ մը միայն ծնաւ պատմութեան մէջ, միջոցի ու ժամանակի մէջ, ու իր պատմական մարդեղութեամբ ամէնքս ալ Աստուծոյ կատարեալ միութեան և սիրոյն մէջ առնուեցանք, եղբայրացանք ու որդեգրուեցանք Երկինքին. բայց անիկա կ'ուզէ ամէն օր մարմնանալ, ծնիլ կեանքերուն մէջ այն մարդոց, որոնք իրենք զիրենք յարդարած են, տաճարներն ըլլալու Բանին մարդեղութեան, որոնց սրտերուն մէջ բարոյական և հոգեկան արժէքներու բարձր գնահատումներ կը գտնէ, մաքուր հոգի մը ու անուշ պճեղ մը սիրտ, որոնք կարենան մսուրքը ըլլալ մանկացեալ Աստուծոյ։

Այսպէս, Աստուծոյ խօսքը կ'ուզէ մարմնանալ, ծնիլ մեր մէջ. անգամ մը միայն պատմութեան մէջ իբր թագաւոր ծնած՝ ամէն օր կրնայ ծնիլ մեր բարոյական կեանքին մէջ, երբ գտնէ մսուրքի մը բարի ու խաղաղ մթնոլորտը։ Արժէքաւոր ու արդիւնաւէտ ոևէ գործ զոր կը կատարենք մեր՝ անհատական, ընկերային ու հաւաքական — կրօնական կեանքէն ներս, Բանին ի մեզ մարմնառութեան մէկ եղելութիւնն է. քրիստոնեայ մարդը իր կեանքի ամէն մէկ րոպէին՝ զՔրիստոս կը ծնի իր մէջ։

Բանին մարմնառութեան «սքանչելի և մեծ խորհուրդը», յիշատակի տօն մը և դէպք մը ըլլալէ աւելի, ներքին ու ներկայ փորձառութեան մը տօնը պէտք է ըլլայ իւրաքանչիւր քրիստոնեայի համար։

Քրիստոնեայ մարդը՝ ծնունդն է Աւետարանին, ու քրիստոնէութիւնը՝ աստուածախառն վերածնունդը բովանդակ մարդկութեան, և որպէսզի, արդարև, քրիստոնէութիւնը շարունակէ ըլլալ աստուածախառն վերածնունդը մարդկութեան, հարկ է որ ամէն օր Աստուծոյ Բանը կարենայ մարմին առնել ու ծնիլ մարդոց սրտերուն ու կամքերուն մէջ և մենէ իւրաքանչիւրը ամէն օր կարենայ ծնիլ Անոր մէջ և լսել՝ Իր էութեան մտերիմ խորքերէն արձագանգող երկնային ձայնի մը թովիչ զանգիւնը որ կ'ըսէ իրեն. «Որդի իմ ես դու և ես

digitised by A.R.A.R.@

# ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ԻՆՔՆԱՏՊՈՒԹԻՒՆԸ

«Զի հինն անց եւ նոր եղեւ ամենայն:»
Բ. ԿՈՐՆԹ. Ե. 17:

*Նկարչութեան դպրոցներու մէջ, կը պատահի որ ուսուցիչը սրբագրէ աշակերտներու աշխատութիւնը. այն ատեն արտայայտութիւն չունեցող գիծագծեր անմիջապէս նկարագիր կ'առնեն, աչքերը կենդանութիւն կը ստանան, շրթունքները կը խօսին. իսկ դաշտանկարի մը մէջ, հեռու տեղերը մեղմ կը նկարուին, առաջին շարքերը կ'անջատուին, զօրաւոր հակապատկերները կը մեղմանան:*

*Առաջին նայուածքով, դիտողներ պիտի չտատամսին ըսելու.*

*«Վարպետը անցեր է այդ տեղէն»:*

*Նոյնպէս, տաղանդաւոր գրագէտ մը, աչքէ անցնելով նորավարժի մը իրեն ներկայացուցած գրական գործը, կը կրճատէ երկարաբանութիւններ, կրկնութիւններ, աւելորդաբանութիւններ. առանց անհրաժեշտաբար նոր գաղափար մը դնելու անոր մէջ, կը զօրացնէ կարգ մը գիծերը. աշակերտը յարգանքով պիտի խոստովանէր.*

*«Վարպե՛տ, ձեր ձեռքերուն մէջ գործս յաջողած է հարիւրին հարիւր»:*

*Աշխարհին՝ Քրիստոսի նոր բան մը չըբերելու առարկութեանց ի պատասխան կ'արժէ վերյիշել փորձառութեան վերագրեալ իրողութիւնները: Քրիստոս գոհացաւ սրբագրելով միայն զինք կանխող իմաստասէրներու և կրօնի հիմնադիրներու նախագիծերը:*

*Իրականին մէջ սակայն ան աւելին ըրած է:*

*Դարերէ ի վեր, մարդկութիւնը զանազան կերպերով կը ջանար գիրք մը խմբագրել. Կեանքին Գիրքը, որ պարունակէր մեր ծնունդին, մեր բնութեան, մեր ճակատագրին վրայ այն ամէնը՝ զոր մենք պարտինք գիտնալ թէ՛ այս՝ և թէ՛ միւս աշխարհին մէջ: Արդ, շատ անգամ, երջանիկ իր գեղեցիկ գիւտերուն մէջ, մարդկութիւնը յաճախ կը մոլորէր: Դիւրին չէր տեսնել զգալի երեւոյթներէն անդին, և գտնել կանոնք ճշգրտօրէն:*

*Քրիստոս եկաւ: Զօրաւոր ձեռքով մը, առանց երբեք ջնջելու այդ գիրքէն տող մ'իսկ, զոր առողջ տրամաբանութիւնը կրնայ ընդունիլ, ան մերժեց ինչ որ այդ գիրքը կը դատապարտէ: Պահեց կարգ մը հարցեր, յայտագրեց գաղափարներ՝ արդէն շօշափուած շատ մը դպրոցներէ եւ մանաւանդ քարոզուած իսրայէլի մարգարէներէն, լայնօրէն մշակեց ուրիշ յըղացումներ, որոնց՝ մարգարէները հազիւ մօտեցած էին: Հեթանոս իմաստասիրութեան նախագիծերը, և նոյնիսկ հրէական աստուածաբանութիւնը իրմով ձեւափոխուած են: Ան տուաւ նոյն տեսակէն նոր գիրք մը: Աւելին՝ ինքն իսկ կեանքի գիրքը եղաւ:*

*Կը տեսնէ՞ք այն՝ ինչ որ կը յօրինէ Իր ինքնատպութիւնը՝ իբրեւ վարդապետ: Ձայնին մէջ ի յայտ եկող հեղինակութեան Իր եղանա՞կը, Իր անհուն բարութի՞ւնը, Իր մըտածումին յստակութի՞ւնը, Իր լեզուին պարզութի՞ւնը: — Այո՛, այս բոլորը և աւելին. բայց մենք ժամանակ չունինք կենալու այս յատկութիւններուն դիմաց: Ուրիշ ե-*

---

*այսօր ծնայ զքեզ». այդ այսօրը, ամէն օր պէտք է ըլլայ քրիստոնեայ մարդուն համար:*

*Աստուած սիրոյ մէջ ստեղծեց մարդը. մարդու սիրոյն մէջ Աստուած պէտք է ուրախանայ, իսկ Աստուծոյ սիրոյն մէջ մարդը պէտք է օրհնուի. մեզի հետ ու մեր մէջ ունինք այլեւս Աստուծոյ ներկայութիւնը, եղբօր մը, բարեկամի մը, սիրելի էակի մը խոնարհ, բայց սրտագրաւ կերպարանքին ներքեւ: Աստուածայինը եկած խառնուած, հիւսուած է մարդկային կաւէ հին կանթեղին՝ կեանքին մէջ, ուր կը նշուլէ աստուածային նայուածքի մը պայծառ լոյսը: Կեանքը Աստուծմով ու սիրով լեցուեր է ու յորդեր. տիեզերքի մէջ տաք սրտի մը բաբախումը կայ. Աստուծոյ սէրը կը ճառագայթէ տիեզերքի և կեանքերու վրայ, ու մարդերը իր թեւերուն վրայ առած՝ Աստուծոյ ու Երկինքին կը տանի:*

*Բանին մարդեղութիւնը՝ Քրիստոսի ծընունդը՝ սրտառուչ քերթուածն է կեանքին ու կրօնքին, բանաստեղծութիւնը երկինքին ու երկրին. երանի՜ անոր որ կ'ըմբռնէ այդ քերթուածը, ու կ'ապրի զայն:*

ԱՐԹՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

digitised by A.R.A.R.@

ընքներ կը գրաւեն մեր ուշադրութիւնը, նախ իր լռութիւնները, ապա իր գլխաւոր գաղափարները, ու վերջապէս այն միակ կերպը՝ որով ան ամփոփած է կենդանի եւ հրապուրիչ պատկերի մը մէջ իր ամբողջ ուսուցումը։ Ան լռեց երբ պէտք էր լռել. ըսաւ այն՝ ինչ որ ուրիշ մը չէր ըսած. եւ այս՝ այնպիսի ձեւով մը, զոր ոչ ոք ըսած էր իրմէ առաջ։

Ան կը մնայ վարդապետներուն ամենէն ինքնատիպը, ուսուցիչներուն ուսուցիչը։

## Ա. — ՅԻՍՈՒՍԻ ԼՌՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ան լռեց։

Այնքան մեծ արժանի՞ք մըն է սակայն լռելը։ Պիտի չկասկածէի՞ք այդ մասին, եթէ նկատէք որ իր հակառակորդները՝ հեթանոս իմաստասէրներ կամ ուրիշ կրօններու հիմնադիրներ, լուծել ուզած են ինչ ինչ հարցեր, արագ և վճռական կարծիք յայտնելով։

Ոմանք, ճիշդ է, Կոմփիւկիոս և Պուտտա օրինակի համար, ի հարկին ըսած են «չեմ գիտեր» կամ, «կը վերապահեմ կարծիքս»։ Աւա՜ղ, Սաքեամունի նոյն վերապահութեամբ արտայայտուած է մեզ ամենէն աւելի ահարեկող խորհուրդին շուրջ. Ո՞ւր կ'երթանք մենք. դէպի անստուեր և անծայր մխիթարութի՞ւն, և կամ՝ ոչինչին։ Այն ատեն անխուսափելի էր որ իր աշակերտները, ուշ կամ կանուխ, ուղղութիւն մը չընտրէին, և ատիկա ըլլար երբեմն իրենց վարդապետի մտածման հակառակ։

Միւսները, սակայն, որոնց մէջ չեն պակսիր շատախօսները, խօսած են այնպէս, կարծես թէ ամէն բան գիտնային։ Ոչ մէկ տաճար, բացի Երուսաղէմի տաճարէն, ուր քահանաները յայտնած չըլլան աստուածներու ազգաբանութիւնն ու անոնց արկածները։ Ոչ մէկ իմաստասիրական դպրոց, ուր բացատրելու ջանք եղած չըլլայ աշխարհներու սկիզբը, մարմիններու բաղադրութիւնը, բնութիւնն ու բոլոր անմահներու պաշտօնները։

Դժբաղդնե՜ր։ Դուք թէ՛ շատ և թէ՛ քիչ կը խօսիք. շատ՝ քանի որ հոգիներուն կ'ընծայէք երեւակայական գիտութիւն մը. քիչ՝ քանի որ անոնց չէք կրնար հայթայթել ապահովաբար պահանջուած լուսաբանութիւններ։

Ա՜հ, որքա՜ն տարբեր է Յիսուսի ընթացքը։

Թող՝ ան բան մը սորվեցուցած չըլլայ, թող՝ ան միայն որդիական գթութեան մը օրինակը տուած ըլլայ հանդէպ Աստուծոյ, ու թէզը պաշտպանելի է։ Ճիշդ է, տոր փոխարէն չափաւորած է իր յայտնութիւնները ծայրագոյն խնայողութեամբ։

— Վարդապետ, ի՞նչպէս կազմուած է տիեզերքը։

— Կարդացէք Ս. Գրքին առաջին գլուխները, կը պատասխանէ մեզ։

— Մեկնէ մեզի բնութեան գաղտնիքները։ Ցայտնէ մեզի արուեստներու և գիտութեանց խորհուրդները։ Ըսէ մեզի թէ ինչո՞ւ Ցաւիտենականը այնքան աշխարհներ արձակած է միջոցներու անհունութեան մէջ. ո՞րքանը անոնց բնակուած է, ո-րոնցմո՞վ։

Ոչ մէկ պատասխան։

— Անհուագն Աստուծոյ մասին խօսէ մեզի։

— Ես ձեզի յայտնեցի երրորդութիւնը աստուածային անձերուն, իրենց յատկանշական տիտղոսները՝ Հայր, Որդի, Ս. Հոգի, իրենց հաւասարութիւնը, իրենց փոխադարձ սէրը, այն բաժինը զոր անոնք կը ստանձնեն ձեր փրկութեանը մէջ. ահա ա՛յս է ինչ որ դուք պէտք է գիտնաք։ Մտածեցէք այս ցուցմունքներուն վրայ։

— Պիտի մերժե՞ս մեզի աւելի ընդարձակ մանրամասնութիւններ՝ մեր ապագայի մասին։ Դուն մեզ կը սպառնաս դժոխքով. ամէն բանէ վերջ, ընտրեալնե՞ր աւելի պիտի ըլլան՝ թէ դատապարտուածներ։
— Ես ձեզ ըսի. երկինքի ճամբան նեղ է. ամէն մարդ ըստ իր գործերուն պիտի դատուի։

— Բայց տակաւին, ե՞րբ պիտի հնչէ վերջին դատաստանի ժամը։ — Հօր Աստուծոյ գաղտնիքն է ատիկա։

— Մինչև այն ատեն, գոնէ, ի՞նչպէս պէտք է կազմակերպուի քու եկեղեցին և այն սուրբ պաշտամունքը զոր դուն սահմանեցիր։ — Ես ըսած եմ էականը։

Այո՛, սիրելիներ, այս և ուրիշ շատ մը հարցերու մասին, որոնք իսկապէս մեզ կը մտահոգեն, Յիսուս մերժած է պատասխանել, և կամ շատ քիչ բան ըսած։ Աւետարանները, ապահովաբար, մեզ չեն փո-

digitised by A.R.A.R.@

խանգեր ամբողջ և իւրաքանչիւրը իր խօսքերուն։ Սակայն անոնք մեզ կը հայթայթեն գրեթէ կատարեալ ամբողջութիւն մը այն գլխաւոր խնդիրներու շուրջ, զորս Ինք մշակած է, և վճիռներուն՝ զորս իրենց տուած է։ Արդ, այս հաւաքածոյին համառօտութիւնը կը հերքէ մեր բոլոր նախատեսութիւնները։

Ի՞նչ։ Քրիստոս նշանակուած ըլլայ Երկնային Հօր պատգամաւորը, խորհրդակիցը, հարազատ որդին, և իր յայտնութիւնները հազիւ պզտիկ գրքի մը քանի մը էջերը միայն լեցնեն։

Բայց եւ այս կերպով սխալ տրամաբանեցի, քանի որ ձեզմէ ոմանք տակաւին թերեւս չեն իսկ ընդունիր անոր գերբնական առաքելութիւնը, և ոչ ալ անոր աստուածային ըլլալը. ըսենք ուրեմն. թէ՛ աւետարանիչներ և թէ՛ առաքեալներ, Յիսուսը Աստուծոյ Որդին կը նկատէին, և Ս. Պօղոս, առանց ամենափոքր մեղադրանքէն իսկ վախնալու, կը սորվեցնէ. «Զի ի նմա բնակէ ամենայն լրումն աստուածութեանն» յետոյ, Ս. Յովհաննէս զայն կը կոչէ Լօկոս, Աստուծոյ Բանը։ Աւետարանիչներն ու առաքեալները իրենց Տիրոջ կը վերագրէին աննուազն անսահման գիտութիւն մը. անոնք կը խոստովանէին տակաւին. անոնք Փրկիչը կը ցուցնեն հարցաքննուած ամէն նիւթերու շուրջ, և կը յիշատակեն մարգարէութիւններ անոր վերաբերմամբ, որոնք ապագան կ'ենթադրեն։ Եւ իրեն հաւատացողները, իրմով խանդավառները, անվերապահօրէն ընդունած և յայտարարած են այս պարագան։

Ընդունինք իսկ պահ մը որ աւետարանները ճշմարտախօս ականատեսներու տեղեկագրեր եղած չըլլան, այլ նախնական համայնքներու մէջ խմբագրուած առասպելներու պարզ հաւաքածոյ։

Սակայն անանուն հնարիչները այդ առասպելներուն, իրենք ալ կը հաւատային Քրիստոսի անսահման գիտութեան, ինչպէս իր ամենազօրութեան, և կ'ուզէին որ մարդիկ հաւատան ատոնց։ Գիտնալով թէ ինչ խնդիրներ կը ձգտէին լուծել ժամանակի իմաստասիրութիւններն ու կրօնքները, մտահոգ՝ ապացուցանելու թէ իրենց Տէրը ատոնց մասին ուրիշներու չափ գիտէր, անոնք պարտաւոր էին անոր շրթունքներուն քանի մը ճառեր դնելու փորձուիլ, աստուածային անձերու ծագման ու բնութեան խորհուրդներուն մասին։ Արդ, ինչպէս անոնք սովոր էին խուսափիլ ծանրանալու անոր հրաշքներուն մանրամասնութեան, հրաշքներ. բոլորովին տարբեր հեթանոսներու զարմանալիքներէն, անոնք կը խուսափէին նոյնպէս զայն խօսեցնելէ ամէն բաներու շուրջ, ինչպէս կ'ընէին իր հակառակորդները։ Կարգ մը պարագաներու, կը հաւատեն անոնք, որ ան մերժած է խօսիլ։

Իրապէս, ասոնք առասպելներու հնարիչնե՞ր են, որոնք Մեսիային և Աստուծոյ Որդիին այս տեսակ տիպար մը երևակայած են։

Խոստովանինք որ հակադրութիւնը ուշագրաւ է, և աւետարանիչներու անկեղծութեան վերաբերմամբ մեզի լայն վստահութիւն ներշնչող։ Իմաստասիրական դրութիւններու և հեթանոսութեան սրբարաններուն մէջ կան մարդեր, որոնք շատ կը խօսին. միւս կողմէն, վարդապետ մը՝ զոր իր աշակերտները ամենագէտ կարծած են, եւ որ յաճախ կը լռէ։

Այսքան աղաղակող հակադրութիւն մը, կ'ենթադրէ արդարև զինք բացատրող պատճառներու մէջ, կարգ մը ոչ նուազ խորունկ տարբերութիւններ։ Փորձեցէք ճըշգորոշել այդ պատճառները։

Հին քահանաներու և հեթանոս իմաստակներու երկարաբանութիւնն ու անխոհեմութիւնը արդիւնք են, մէկ կողմէն քմածին երևակայութեան, ու ժողովուրդներու չափազանց դիւրահաւանութեանը, միւս կողմէն մարդկային խեղճ տրամաբանութեան, որ ընդունակ է իւրացնելու հաւանականութեան ցոլքեր՝ իբր յայտնութիւններ։

Գալով Քրիստոսի վերապահումին, դըժուար է մեզի հասկնալ պատճառները։

Ի՞նչ ընելու կուգար ան։ Ի՞նչ կ'ուզէր։ Ան ըսած է զայն. մոլորած հոգիները Աստուծոյ տանիլ, «փրկել ինչ որ կորսուած էր»։ Անիկա պարտ էր ուրեմն խօսիլ բարոյականին ու գթութեան նախնական ըսկըզբունքներուն վրայ, Հօրը բարութեան, Անոր անսահման ողորմութեան մասին։ Ըրաւ այդ ամէնը առանց կրկնութեան վախի։ — Պէտք ունէ՞ր ասոր փոխարէն մեզ քօղազերծելու բնութեան խորհուրդները, արուեստներու և գիտութեանց գաղտնիք-

digitised by A.R.A.R.@

ները։ — Ապահովաբար ոչ։ Գերբնական յայտնութիւն մը պարտի օգնե՛լ մարդկային իմացականութեան, և ոչ թէ զարգացնել անոր գործունէութիւնը։ Այդ պատճառաւ եթէ պէտք ըլլար որ Յիսուս հաստատէր քանի մը հիմնական ճշմարտութիւններ ուղղակի յարաբերութեամբ զթութեան կեանքին հետ, աւելի յարմար էր որ ան ձգէր Փիզիքական աշխարհը գիտուններու պրպտումներուն։

Անհրաժեշտ էր որ մեզ տեղեկութիւններ տար վերջին դատաստանի ժամանակին, ընտրեալներու թիւին, ու նման հարիւրաւոր խնդիրներու մասին։ — Անշուշտ այո, եթէ մեր վեհանձնութիւնը առով խթանուէր։ Պատասխանեցէք անկեղծաբար, դուք ամէնքդ աւելի՞ ջերմեռանդօրէն պիտի ծառայէիք Աստուծոյ, եթէ վստահ ըլլայիք թէ Ան աւելի ներողամիտ է մեղքին հանդէպ…։ Ինչպէս որ ալ ըլլայ, մեզի համար որոշապէս աւելի օգտակար չէ՞ սպասել և միշտ ի մտի ունենալ հետեւեալ ազդարարութիւնները. «Երկինքի դուռը նեղ է. հսկեցէ՛ք, աղօթեցէ՛ք, միշտ պատրաստ եղէք»։

Այլեւս պէտք ունէ՞ր աւելի լայնօրէն ցուցադրելու աստուածային կեանքին խորհուրդները։ Բայց մենք չենք գիտեր իսկ թէ ան ոչինչ կրնար աւելցնել մեզի իմանալի։ Ամէն պարագայի մէջ, իմաստութիւնը իրեն կը հրամայէր մեզ տալ ապահով ուղղութիւններ, և ոչ մանրամասնուած լուծումներ զորս բացատրաբար պիտի ուզէինք ըսել։

Յիսուս, ի վերջոյ, երկիրը ձգելէն առաջ, պէտք ունէ՞ր սահմանել վերջին մանրամասնութեամբ կազմակերպումը իր Եկեղեցիին և պաշտամունքին։ — Ո՛հ, անկասկած, իր մրցորդները՝ հեթանոս կրօնքներու հիմնադիրները, նախանձով պարտաւորուած են ամէն ինչ նախատեսել և կանոնաւորել։ Անխոհեմները չեն մտածած որ ծայրայեղ կանոնաւորութիւնը կը ջլատէ ամէն գործունէութիւն, և անգործութեան կը պատրաստէ։ Յիսուս իրեն հաւատարիմներուն պետեր տուած է՝ առաքեալները. ան հաստատած է կարգ մը ծէսեր, խորհուրդներ, և սահմանած՝ զոհագործութիւնը, ամբողջացնելու միւս բոլորը՝ Ս. Հաղորդութեամբ. նախընտրած է ան էականը, ճշդել սկզբունքները, և իր պաշտօնական ներկայացուցիչներուն թողուլ զանոնք կիրարկելու խնամքը։

Հեթանոս կրօնքներու հիմնադիրները չեն հասկցած թէ միակերպ օրէնսդրութիւն մը չի կրնար յարմարիլ բոլոր ժողովուրդներուն և ամէն ժամանակներու։ Ան որ կը պատուիրէր իր աշակերտներուն քարոզել իր Աւետարանը աշխարհի ծայրերը մինչև, Ան որ գիտէ թէ իր Եկեղեցին սահմանուած է տեւելու մինչև դարերուն վերջը, պէտք էր տեղ ձգէր իր մտածումին հետ հաշտ բոլոր պատշաճեցումներուն, անշօշափելի այն միակ կէտերը զորս ինք իսկ պէտք էր կանոնագրած ըլլար. բարեկարգելի բոլոր այն տրամադրութիւնները զորս իր յաջորդները գործադրութեան պիտի դնէին իրենց իշխանութեամբը։

Կրօնքներու հիմնադիրները բազմապատկած են պատուէրները. վստահ իրենց յատուկ ծանօթութիւններուն, չեն վստահած իրենց յաջորդներուն։ Սակայն Յիսուս կը վստահէր իրեններուն։ Կը վստահէր, տրամաբանութեամբ մը զոր իրեն միայն յատուկ էր. որովհետև ինքզինքին կը վըստահէր։ «Երբ ձեզ ձգեմ, կը խոստանայ անոնց, պիտի ղրկեմ ձեզի ճշմարտութեան հոգին. . . Ան ձեզի պիտի հասկցնէ ինչ որ ես սորվեցուցի. . . Ես իսկ պիտի վերադառնամ ձեզի. . . ձեզ հետ բնակելու մինչև ժամանակներուն վերջը»։

Ո՞ր մէկ օրէնսդիր երբեք համարձակած է գործածել այս խօսքերը։

Ինք, միա՛յն ինք, որովհետև ան Մի է Հօր և Ս. Հոգիին հետ, որովհետև ան, իր աստուածութեամբը, անոնց հետ ներկայ է ամենուրեք, ներկայ բոլոր հոգիներուն մէջ, ներկայ այն անձերուն մէջ, զորս իրեն փոխանորդ նշանակած է իր երկինք վերանալէն առաջ։

Այս պայմաններուն մէջ դուք զինք պիտի մեղադրէի՞ք, ինչպէս զինք քննադատողներէն ոմանք, աւելի խօսած չըլլալուն համար։

Ան քիչ խօսած է, որովհետև լաւ կը ճանչնար մեր հոգիներուն անհրաժեշտ պակասները, որովհետև իր նայուածքը կը տեսնուէր բոլոր դարերուն. որովհետև ան ընդմիշտ իր Եկեղեցիին սրտին կը կենար, անոր կրկնելու համար ինքզինքը, ապահովցնելու համար իր մտածումին հասկացողութիւնը, անոր թելադրելու համար, ի դէպս, յարմար կիրարկումները։

Շատ խօսիլը ազէտներու, անխոհեմներու, յաւակնոտներու սովորական թերութիւնն է. լռելը երբ պէտք է, իմաստուններու յատկութիւնն է. և աւելի զօրաւոր իրաւունքով, կը վայելէ Աստուծոյ։

Հ. ՓԻՆԱՐ ՏԸ ԼԱ ՊՈՒԼԷՅ Թրգմ. Տ. Գ.

(Շարունակելի)

digitised by A.R.A.R.@

## ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ

# ՍԱՂՈՄԷ (*)

Գարնան առտուն նոր կը բացուէր
Դագաթներուն՝ այրեցուեր եւ հեռաւոր
Մովաբ լերանց:
Մառախուղը արծաթածուփ,
Կը ծածանէր Մեռեալ Ծովի եզերքներուն,
Պաստառ պաստառ,
Լոյսի զուարթ նետերուն տակ:
Մամբրոնի բերդը՝ հեռուն,
Կոհակներուն մէջէն հողին՝ լերկ, մոխրագոյն,
Կը բարձրանար:
Արեւածագ գարնանային.
Ափ առ ափ ոսկի կը տեղար վար.
Ամայքներուն մէջ մերձակայ,
Առանց ծուխի հրդեհ մը կար:
Բոյրը թեթեւ, ծաղիկներէն՝
Որոնք հիւրեր անապարող, այս այրուած
Հողին վրայ.
Եւ օդին մէջ՝ խուլ, անանուն
Մրմունջներու կը շարժէր թեւ:

Արքայադուստր Սալոմէն,
Կանուխ ձըգած մահիճն իր պերճ,
Իջեր պարտէզ,
Քաղցրօրէն՝ լուռ եւ անտարբեր,
Կը դիտէր շուրջ:
Դէմքին վրայ կը տժգունէր
Լոյսը օրուան:

(*) Հոս կը դնենք ի տպագրութեան եղող **«Մագդաղինէն Մեղաւորն է»** խորագրով հատորէն (ԵՂԻՎԱՐԴԻ) **Սալոմէ** կտորի Բ. հատուածէն մաս մը:

digitised by A.R.A.R.@

Գիշերն երազ էր ունեցեր.
— Ափսէին մէջ՝ արիւնաներկ գլուխ մարդու,
Գոց աչքերով:
Արթընցեր էր խոր սարսափէն,
Մինչ մութին մէջ իր սենեակին,
Աղջընակի երկու ձեռքեր,
Ըսկուտեղն այդ կը տանէին
Ետ ետ դէպի սիրտը մութին:

Ու չէր կըրնար, աղջիկն անփորձ,
Վանել՝ աչքի հորիզոնէն,
Յամառ տեսիլն այդ արիւնոտ:
Դէմքին վըրայ՝ կը տըժգունէր
Լոյսը օրուան.
Եւ իր նայուածքը սեւեռուն,
Աւազանի հայլիին խոր,
Կարծես մեռած գըլուխ մըն էր:

Մէկէն սուր մը ըզգաց սըրտին.
Ձայնն էր կըրկին
Վիրապատոյզ մարգարէին.
— Պատուհա՞սը իր պըղծութեան.
Ամուլ է ինք չորիին պէս...»

Ձայնն անսովոր այդ ետ տարաւ
Զինքը նորէն,
Տեսարանին շաբաթ մ'առաջ,
Սենեակին մէջ իր մայրիկին,
Որ ուզեր էր՝ հեծեծելէն,
Զոյգ բազուկներն արձակած վեր,
Ամենատուր Եհովայէն,
Գըլուխը պիղծ Յորդանանու մարգարէին:
Յետոյ լացե՛ր, լացեր էր շատ,
Թըրջելու չափ խարտիշագեղ
Մազերն իր նուրբ:
— Շուներն ուտեն պիտի անոր
Մարմինը պիղծ,

digitised by A.R.A.R.@

Որ ամուսինին իր առաջին,
Շըղթայապիրկ՝ ղըրկեց Հըռովմ,
Ու պառկեցաւ ուրիշին ծոց:»

Դարաստանի զառիթափէն,
Մէկէն ճամբայ մը բացուեցաւ
Անոր աչքին,
Որ կ'երկարէր մինչեւ քաղաքն արքայական.
Վըրան՝ մարդ մը՝ շըղթայապիրկ,
Որ կը քալէր նայուածքը ետ՝
Մաքերոնի ապարանքին:
— Պիտի փըտտի ոսկորն անոր՝
Ժայռերէն կախ,
Որ սեփական աղջիկն ահա
Կը յարդարէ
Սիրահարին իր մահիճին:»

Սառ կըտրեցաւ արիւնն իր մէջ.
Փըրթան, ըսես, ծունկերն իր խեղճ.
Հազիւ կըրցաւ ինքզինք նետել
Բազկաթոռին՝ ջուրի ափին,
Որ կը վէտէր, կը դողդըղար կարծես վախէն,
Ձայնէն փըրթող այդ ահաւոր
Սեւ պատգամին:

Կապոյտին մէջ խաղաղ զարնան՝
Երբ նիզակ արեւն առեր էր իր ճամբան,
Անզէտ՝ թէ ի՞նչ կըրակ կ'իջնէ
Կուրծքերուն տակ մատաղատի.
Թէ ի՞նչ անդունդ կինն է երբեմն,
Ալիքներուն մէջ մետաքսին:
Քո՞ւն թէ երազ, ան չըզգիտցաւ.
Կըրկնըւեցաւ պատկերը մութ՝
Ընկուտեղին արիւնաներկ,
Զոր զոյգ ձեռքեր աղջընակի,
Կը տանէին դահիին մը պերճ:

ԵՂԻՎԱՐԴ

digitised by A.R.A.R.@

## ԿՐՕՆԱՊԱՏՄԱԿԱՆ

# ՅԱԿՈԲՈՍՆԵՐԸ ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻՆ ՄԷՋ

(Շար. ՍԻՈՆ, 1940 Դեկտ. էջ 298 էն)

---

### ՅԱԿՈԲՈՍ ԱՆՈՒՆԻՆ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ ՍՈՒՐԲՆ ՂՈՒԿԱՍԻ ԵՒ ՍՈՒՐԲՆ ՊՕՂՈՍԻ ԹՈՒՂԹԵՐՈՒՆ ՄԷՋ

*Զեբեդեան Յակոբոս (Գլխադիր) Առաքեալին կենդանութեան, Գործք Առաքելոցին հեղինակը, ամէն անգամ երբ կը խօսի, իր ընթերցողաց ուշադրութեան առարկայ կը դարձնէ թէ՝ ո՞ր Յակոբոսի մասին է որ կը խօսի։*

*Ընդհակառակը, անոր մարտիրոսութիւնը պատմող հատուածէն վերջ (հաւանաբար ան գլխատուեցաւ 42 (կամ 44) թուականին, Հերովդէս–Ագրիպպասի հրամանաւ), ո՛չ մէկ մանրամասնութիւն կայ Յակոբոս անուան շուրջ. ան՝ երիցս կը յիշէ զայն առանց մակդիրի և բացայայտիչի։*

*Այսպէս, Սուրբն Պօղոս Առաքեալն ալ, խօսելով Կորնթացւոց եւ Գաղատացւոց թուղթերուն մէջ, Յակոբոս Զեբեդեայի որդւոյն մահէն վերջ տեղի ունեցած կարգ մը դէպքերու մասին, Յակոբոս անունը կը յիշէ, առանց ընելու աւելին (Ա. Կորնթ. ԺԵ. 7, Գաղտ. Բ. 9 և 12)։ Շատ հետաքրքրական է գիտնալ թէ՝ ո՞ր Յակոբոսին կը վերաբերի վերի խօսքերուն ակնարկութիւնը։*

*Ապահովաբար, Երուսաղէմի եպիսկոպոսին մասին է, պիտի ըսուի, քանի որ, բոլոր այն դէպքերը որոնք հոն ցոյց կը տրուին, Սուրբ Քաղաքին մէջն է որ տեղի կ'ունենան։ Սակայն, պէտք է ի մտի ունենալ թէ, ո՛չ Սուրբն Ղուկաս և ո՛չ ալ Սուրբն Պօղոս, մեզի ոչինչ կ'ըսեն Երուսաղէմի եպիսկոպոսի գոյութեան մասին, և թէ ան առաքեալ էր կամ ոչ։*

*Միակ գոյութիւն ունեցող անձը այս անունով, և զոր Գործք Առաքելոցի ընթերցողները կը ճանչնան, միւսին (իմա՛ Գլխադրին) մարտիրոսութենէն վերջ, այն անձն է զոր Ղուկաս աւետարանիչ մեզի ցոյց կուտայ իբրև* Առաքեալ *և* Որդի Ալփեայ *(Գործք. Առաք. Ա. 13)։*

*Բնականաբար բոլորին միտքը անոր միայն կ'երթայ։ Եթէ երբեք Սուրբն Ղուկաս Աւետարանիչի պէս գրագէտ մը ուրիշ ոևէ մէկը չէ նշանակած, եթէ երբեք Սուրբն Պօղոս, նոյն բանը ըրած է առանց զանազանութեան, ուրեմն պէտք է եզրակացնել թէ, Զեբեդեան Յակոբոս Առաքեալին մահէն վերջ, քրիստոնէական նախնական Եկեղեցւոյ մէջ յիշուած այդ անձը ուրիշ մէկը չէ եթէ ոչ Յակոբոս, Որդի Ալփեայն Առաքեալը։*

### ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

*Առաջին դարուն՝ միակ Յակոբոսը, որու մասին կը խօսուի, մեծ կարևորութիւն և հեղինակութիւն ունեցող անձնաւորութիւն մըն էր։*

*Պետրոս Առաքեալ բանտէն հրաշքով ազատուելէն վերջ, անո՛ր մարդ կը ղրկէ լուրը հաղորդելու համար. երբ Պօղոս Առաքեալ Երուսաղէմ կը ժամանէ, առաջին անգամ անո՛ր կը ներկայանայ։*

*Յետոյ Պօղոս Առաքեալը առաջին տեղը կուտայ անոր, Յովհաննէսէն և Պետրոսէն առաջ նոյնիսկ։*

*Առաքելոց մէջ ամենէն հեղինակաւորը կը նկատուի, և ազգականը Փրկչին։ Պօղոս՝ Եկեղեցւոյ սիւն կը կոչէ Յակոբոսը։ Եթէ այս Յակոբոսը, փոխանակ Ալփէոսի որդին՝ Յակոբոս Առաքեալը ըլլալու, Փրկչին աշակերտներէն մին է, թէ իսկ Անոր զարմիկը, իր խօսքերը, իր գերատիճան հանգամանքը, ժողովներու մէջ ունեցած դիրքն ու հեղինակութիւնը, Քրիստոսի Եկեղեցիին սահմանադրութեան հետ անհամաձայն ըլլալ կը թուին, որ ինչպէս կ'ըսէ նոյնինքն Պօղոս Առաքեալ «Շինեալք ի վերայ հիման առաքելոց» (Եփես. Բ. 20), ինչպէս կը յարէ նաև Սուրբն Յովհաննէս Առաքեալ «Հիմունս երկոտասան, և ի նոսա երկոտասան անուանք երկոտասան առաքելոց Գառինն» (Յովհ. ԺԱ. 14)։*

digitised by A.R.A.R.@

## ՅԱԿՈԲՈՍ ԵՒ ՅՈՒԴԱՅ

Փրկչին «եղբայրներ» կոչուածներուն մէջ, ինչպէս Սուրբն Մարկոս և Սուրբն Ղուկաս մեզի ցոյց կուտան, երկու եղբայրներ կը գտնուին որոնք կը կրեն Յակոբոս և Յուդայ անունները. դարձեալ, Երկոտասան Առաքելոց մէջ, երկու եղբայրներ կան որ կը կոչուին Յակոբոս եւ Յուդայ։ Այս զուգադիպութիւնը թերեւս մեզ կարծել տայ որ այս երկու խումբերը իրարու հետ նոյնացուին, սակայն այդ զուգադիպութիւնը շատ ուշագրաւ կը դառնայ, նկատի առնելով որ, երկու անուանակից խումբերէն իւրաքանչիւրին մէջ, Յուդան նուազ կարեւորութիւն մ'ունի և կը յիշուի իր եղբօրը պատճառաւ։

Սուրբն Ղուկաս, Գործք Առաքելոյին (Ա. 14) ինչպէս նաև իր Աւետարանին մէջ (Դ. 16), Յուդայ Առաքեալը կը յիշէ Յակոբոսի եղբայրը ըլլալուն պատճառաւ միայն, որ յայտնապէս միւսէն աւելի աչքառու էր։ Արդ, Թուղթ Կաթողիկեայցի հեղինակը, Սուրբն Յուդայ, որ ըստ աւանդութեան Փրկչին «եղբայր»ն է, կը ճանչցուի իրմէն աւելի հեղինակաւոր եղբայր մ'ունենալուն պատճառաւ միայն «Յուդայ, Յիսուսի Քրիստոսի ծառայ, և եղբայր Յակովբայ...» (Յուդայ Ա. 1)։

Կարելի պիտի ըլլայ մեծ հաւանականութեամբ եզրակացնել թէ, սոնք նոյն երկու խումբին եղբայրներն են։ Եւ այս նոյնացման հաւանականութիւնը աւելի համոզիչ պիտի ըլլայ, խորհելով որ, Յուդան՝ այս Թուղթին հեղինակը, ինքզինքը լաւ կերպով ճանչցնելու համար, երկդիմի արտայայտութիւն մը գործած է, Նախնական Եկեղեցւոյ անձնաւորութիւններուն մէջ. ինչպէս տեսանք արդէն երկու աչքառու Յակոբոսներ կան, սոնցմէ միոյն անուան գործածութիւնը իր կողմէն, թերեւս գրաւական կ'ըլլայ ամենաճիշդ ճանաչման մը, կերպով մը ճշգրտակ (criterium) մը, անսխալ նոյնացման...։ Եւ ինչպէս որ հեղինակը իր Թուղթը կ'ուղղէ «Հեթանոսաց որ յԱստուծոյ Հօրէ էք սիրեցեալք», այսինքն՝ առաջին բոլոր քրիստոնէից, առանց ցեղի և երկրի խտրութեան, ուրեմն մեզի համար անհրաժեշտ կը դառնայ ճշդելու համար թէ՝ այս Յուդան ո՞ր Յակոբոսին եղբայրն է, «Տեառնեղբօ՞ր», եթէ ոչ Երկոտասան առաքեալներէն միոյն։

## ՄԱՐԻԱՄ ԿՂԷՈՎՊԱՅ

Սուրբն Մատթէոսի և Սուրբն Մարկոսի համաձայն, Տիրոջ «եղբայրներ»ուն մայրը, որ ներկայ կը գտնուէր խաչելութեան ատեն, Գողգոթայի վրայ, Մարիամ անունով կը կոչուէր, կամ Սուրբն Յովհաննէսի համաձայն, Մարիամ Կղէովպայ, որ էր առ ոտս խաչին (Տե՛ս, Մատթ. ԻԷ. 56, Մարկ. ԺԵ. 40, Յովհ. ԺԹ. 25)։

Պէտք չէ՞ եզրակացնել արդեօք որ այս երկու Մարիամները նոյնն են, և թէ, Յակոբոս «Տեառնեղբայր»ը Կղէովպայի որդին է և ո՛չ Ալփէոսի։ Մեր այս եզրակացութիւնը, հեռու է խիստ ըլլալէ, վասնզի՝ կարելի է այս երեւութական անհամաձայնութիւնը բացատրել և մեկնել շատ մը կերպերով։

1. — Ոչ մէկ բան կ'արգիլէ տեսնելու Կղէովպասի և Ալփէոսի անուններուն մէջ նոյն անձը, վասնզի առաջին անունը յունական է, իսկ երկրորդը՝ սեմական։ Այդ դարերուն մանաւանդ, Արեւելքի մէջ շատ տարածուած սովորութեան մը համաձայն, երկու անուններ կը կրէին, մին՝ յունական, իսկ միւսը՝ սեմական։

2. — Յակոբոսին հայրը՝ Ալփէոսը, կրնայ Մարիամին առաջին ամուսինը նկատուիլ, իսկ Կղէովպասը իր երկրորդ ամուսինը, ինչ որ բոլորովին պիտի արդարացնէր Մարիամ Կղէովպայ անուանումը զոր կուտայ անոր Սուրբն Յովհաննէս Աւետարանիչ։

3. — Պէտք է գիտել տալ թէ՝ Մարիամ Կղէովպան նոյն անձը չէ «Մարիամ Յակովբայ»ի հետ, վասնզի որոշ բան մը չենք գիտեր իրենց մասին. միայն սա՛ որոշ է որ, երկուքն ալ ներկայ գտնուած են խաչին մօտ։

Վերոյիշեալ երեք մեկնութիւններէն ո՞րն է արդեօք ճշմարիտը։ Ոչ ոք կրնայ որոշ և գրական կերպով բան մը յայտնել այդ մասին։ Մեր բոլոր ըսածները երեւութական ենթադրութիւններ են. և սակայն բաւական է մեզի ըսելու համար թէ՝ ինչպէս որ Նոր Կտակարանին ուրիշ հատուածները քննելու և լուսաբանելու ատեն ըսած

digitised by A.R.A.R.@

էինք արդէն, Ալփէոսի որդին՝ Յակոբոս Առաքեալը ուրիշ մէկը չէ եթէ ոչ մեր Տիրոջ ազգականը, կամ ուրիշ բառով «Տեառնեղբայր» Յակոբոս Առաքեալը։

## ՏԻՐՈՋ «ԵՂԲԱՅՐՆԵՐ»ՈՒ ԱՆՀԱՒԱՏՈՒԹԻՒՆԸ

«Տեառնեղբայր» Յակոբոսին նոյնացումը իրեն համանուն առաքեալին հետ, կ'ըսեն թէ բաւական գէշ շրջանակ մը չինած է իրեն, Տիրոջ «եղբայրներ»ու անհաւատութեան պատճառաւ, որու մասին կը խօսի Սուրբն Յովհաննէս Առաքեալ (Է. 5)։

Կրնանք պատասխանել թէ՝ Տիրոջ բոլոր «եղբայրներ»ը Առաքեալներ չէին, ինչ որ արար աշխարհ կ'ընդունի, քանի որ Աւետարանիչներու կողմէն չորս եղբայրներ և երեք քոյրեր կը յիշատակուին, և աւելին, անոնք կատարեալ թուումն մասանց չեն ըրած Փրկչին բոլոր ազգականներու մասին։ Իսկ անոնք որ անհաւատ ըլլալ կը թուին, պէտք է զանոնք փնտռել Յակոբոսէն և Յուդայէն դուրս։ Բաց աստի, հոս՝ խնդիրը յարաբերական անհաւատութեան մասին է, Յիսուսի այս ազգականները դեռ անհաղորդ էին իր մեսիականութեան։

Ուստի, այս շրջանին, առաքեալներուն հաւատքը շատ անյողդողդ, հաստատուն և խորունկ էր, թէև յետագային՝ իր յարութենէն վերջ, Յիսուս յանդիմանած էր զիրենք. «երևեցաւ նոցա եւ թշնամանեաց զանհաւատութիւն նոցա և զխստասրտութիւն» (Մարկ. ԺԶ. 14)։

## ՅԻՍՈՒՍԻ ԵՐԵՒՈՒՄԸ ՅԱԿՈԲՈՍԻՆ

Սուրբն Պօղոս Առաքեալ, իր առ Կորնթացիս գրած առաջին թուղթին մէջ, խօսելով յարութենէն վերջ Յիսուսի մասին, կը գրէ. «Եւ ապա երևեցաւ Յակովբայ, ապա առաքելոցն ամենեցուն» (Ա. Կորնթ. ԺԵ. 7)։

Հոս եւս կարծես թէ, Յակոբոս, առաքելական խումբէն դուրս կը ձգուի, հետևաբար անոր մաս չի կազմեր։

Սակայն, վերի հատուածին նախորդ մասերը այս հատուածին նշանակութիւնը կը պարզեն և կը լուսաւորեն։

Վերջապէս նոյն գլխուն չորրորդ համարին մէջ կ'ըսուի. «Եւ թէ՝ երևեցաւ Կեփայի, և ապա երկոտասանիցն»։

Պէ՞տք է եզրակացնել թէ Պետրոս առաքելական խումբին մաս չէր կազմեր։ Տակաւին, մեզի կ'ըսուի թէ՝ Տէրը, Յակոբոսէն ետքը երևցաւ նաև «Առաքելոցն ամենեցուն»։ Ինչո՞ւ համար է ուրեմն երևմանց այս թուումը։ Վասնզի՝ ասոնցմէ ոմանք մասնակի, իսկ ոմանք ալ ընդհանուր երևումներ էին, առաքելական նոյն խումբին Յակոբոս՝ որուն առանձինն երևցաւ մեր Տէրը իր սուրբ յարութենէն վերջ, անհրաժեշտօրէն երկոտասան առաքեալներէն մին էր, ինչպէս որ վերոյիշեալ հատուածներէն կարելի է մակաբերել և եզրակացնել։

## ՅԱԿՈԲՈՍ «ՏԵԱՌՆԵՂԲԱՅՐ»(*) ԱՌԱՔԵԱԼԻՆ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Քրիստոնէական Եկեղեցւոյ առաջին իշխանութեան մէջ, ան՝ առաջինը կը յիշուի Պետրոսի և Յովհաննէսի հետ (Գաղտ. Բ. 9)։

Անոր խօսքերը մեծ կշիռ և արժէք կը ներկայացնեն (Գործք. Առաք. ԺԵ. 13)։ Պօղոս Առաքեալ, Յակոբոս «Տեառնեղբայր»ը Եկեղեցւոյ սիւներէն մին կը կոչէ (Գաղտ. Բ. 9)։

Յովսեփոս և Հեգեսիպպոս, «Արդար» մակդիրը կուտան անոր։ Յակոբոս «Տեառնեղբայր» իր սրբութեամբը, իր աստուածպաշտութեամբը և կրօնական խմորով՝ եղած է ոչ միայն «Արդար», այլ նաև խորունկ հաւատացեալ մը։ Իրեն անունով մեզի հասած կաթողիկեայց Թուղթին մէջ ան իբրև ճշմարիտ քահանայապետ մը կը ներկայանայ։ Յակոբոս և Պետրոս Առաքեալներու վարդապետութիւնները իրենց խորքին մէջ բացարձակապէս նոյնն են եւ կը մնան։ Յակոբոսի վարդապետութիւնը (օրէնքը) Պօղոսի կողմէ պանծացուած հաւատքը իրենց խորքին մէջ նոյնն են։

(*) Երուսաղէմի Հայոց Ս. Պատրիարքներ Յակոբոս «Տեառնեղբայր» Առաքելոյն տօնին օրը, «Փառք ի բարձունս»էն սկսեալ մինչեւ աւարտումը առաւօտեան ժամերգութեան, Առաքելական Աթոռին վրայ կը բազմին, իբրեւ ճշմարիտ յաջորդները Յակոբոս «Տեառնեղբօր», Երուսաղէմի առաջին եպիսկոպոսին: «Տեառնեղբայր» Յակոբոս Առաքեալին տօնը, տօնն է Երուսաղէմի Առաքելական Ս. Աթոռին, որուն զոյգ պաշտպաններէն մին է ան, միւսը ըլլալով Յակոբոս Զեբեդեան «Գլխադիր» Առաքեալը:

digitised by A.R.A.R.@

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Նոր Կտակարանին բոլոր հատուածներէն, զորս մենք ուսումնասիրեցինք, երեւան եկաւ որ, «Տեառնեղբայր» Յակոբոս Առաքեալը և Ալփէոսի որդին Յակոբոս Առաքեալը նոյն անձերն են։ Այս իրողութիւնը հաստատուեցաւ, Սուրբն Պօղոս Առաքեալին առ Գաղատացիս ուղղած թուղթին բնագրէն (Ա. 19)։

Եթէ երբեք, իւրաքանչիւր հատուածը առանձինն նկատի առնել ուզէինք, թերեւս յստակ և սեղմ եզրակացութեան մը չըկարենայինք յանգիլ, ամբողջ գրուածքին շարայարութիւնը անտպաւորիչ ըլլալուն պատճառաւ։

Յիսուսի կենդանութեան, Զեբեդեայի որդին Յակոբոսը, Պետրոսի և Յովհաննէսի հետ գերակշիռ տեղ մը ունի առաքելական խումբին մէջ, իսկ Ալփէոսի որդին Յակոբոս, երկրորդական աստիճանի մը վրայ կը գտնուի. և բարոյապէս շատ կը պատշաճի իրեն տրուած Կրտսերն Յակոբոս մակդիրը։

Սակայն, մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի մահէն վերջ, անոր սրբութիւնը, օրէնքին հանդէպ իր նախանձախնդրութիւնը և հաւատարմութիւնը, ինչպէս նաև իր պաշտօնակիցներուն կողմէ կատարուած միահամուռ ընտրութիւնը մինչև Երուսաղէմի եպիսկոպոսապետութեան, իր անձին հեղինակութիւնը տակաւ առ տակաւ բարձրացուցին. իր անուան հմայքը, Զեբեդեայի որդիին՝ Յակոբոսի մահէն վերջ մանաւանդ, աւելի հռչակաւոր դարձաւ։ Ս. Քաղաքին մէջ իր տևական բնակութիւնը միւս կողմէն նուազ չնպաստեց իր այս հանգամանքին։ Այսպիսով ուրեմն, կը հասկցուի թէ, ան՝ նախապէս տասներկուքին մէջ նսեմացած դիրք մ'ունէր, սակայն տակաւ առ տակաւ Պետրոսի և Յովհաննէսի հետ նըշանաւոր դարձաւ, և եկեղեցւոյ սիւներէն մին եղաւ։ Յակոբոսի կեանքին մէջ, երկու համանուն առաքեալներուն ներդաշնակութիւնը այնքան լաւ եղած է որ, Յակոբոս Առաքեալին, Յակոբոս «Տեառնեղբայր»ին հետ նոյնացումը իբրեւ վարդապետութիւն մը չէ որ երեւան կուգայ, ո՛չ ալ առարկելի եղելութիւն մը, այլ՝ բարոյական ճշմարտութիւն մը և ստուգութիւն մը որ միտքը կը գոհացնէ ընդմիշտ։

Հայացուց՝ ՊԱՐԳԵՒ ՎՐԴ. ՎՐԹԱՆԷՍԵԱՆ

# ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՈՒԺԱԿԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

«Քրիստոնէութիւնը երեւան բերաւ մեծագոյն կարելի ուժական զօրութիւնը (dynamic force) մարդկային գործունէութեան, այն ազգերուն մէջ, որոնք ընդունեցին զայն»։

ՊԵՐՏԻԱԷՎ

Այսպէս կը գրէ «Քրիստոնէութիւն ու մարդկային գործունէութիւն» խորագրով իր մէկ ընդարձակ յօդուածին մէջ, քրիստոնէութեան արդի մեծագոյն մտածողներէն մին, Պէրտիաէվ։ Այս արտայայտութիւնը անով կ'ըլլայ մասնաւորապէս ուշագրաւ, երբ նկատի առնուի յետ պատերազմեան աշխարհի լոյս բերած հոգեկան և իմացական պատկերը.— պատկեր՝ զոր, երկու դարեր՝ յաւակնոտ քանդումի և անճապարտ յօրինման, իր լրումին հասցուցին, աշխարհը վերածելով իմացական քաոսի մը։ Վոլթէռէն մեկնող և Նիցչէ ու Մարքս հասնող ժխտումին եռանդը, մարդկութեան արժեց անդարմանելի հոգեկան ու նիւթական աղէտ։ 1914-ի պատերազմը, իր յիսուն միլիոնի մօտեցող զոհերով, հանգրուան մըն է այդ աղէտի պողոտային վրայ։ 1940-ի պատերազմը ուրիշ աւելի ահաւոր հանգրուան մը կը դառնայ տակաւ, քանի որ մարդկային արիւնը, անոր արժէքը, այնքան թեթև կշիռ կը մնեն քրիստոնէութեան օխորդ վարդապետութեանց կողմէ։ Գաղտնիք չէ թէ Գերման երկու մտածողները (Նիցչէ և Մարքս) դժբախտութեան կրօնք մը դաւանած են զայն։

Ցաւէն աւելի բան մըն է զոր կ'զգանք մենք՝ երբ մեր դատումը կը փորձենք արդի ընկերային եւ իմացական վարդապետութեանց խարխափներուն։ Ըստ անոնցմէ ոմանց, կրօնը պաշտպանն է կրաւորականութեան եւ ճակատագրի ենթարկման, մարդէն կորզելով իր պատասխանատուութեան զգացումը, զայն յանձնելու համար Աստուծոյ։ Քրիստոնէութեան կրօնին մէջ, կը յարեն ուրիշներ, Աստուած է միայն գործողը, իսկ մարդը՝ անոր գթութեան ենթակայ խլեակ մը, հետևաբար զուրկ ինքնաստեղծ գործունէութենէ։

digitised by A.R.A.R.@

Նիցչէ՝ որ դժբախտաբար չէ ճանչցած իրական քրիստոնէութիւնը, խստութեամբ դատած է զայն, քրիստոնէութեան յաղթանակը ընդունելով հիւանդներու յաղթանակ՝ առողջներու վրայ, և գերիներու տիրապետութիւն՝ ազատներու վրայ։ Սակայն անկարելի է համաձայնիլ Գերման ժխտողին հետ, քրիստոնէական բարոյականին մէջ ստրուկներու վայել քօմբլէքսը միայն հաստատելով։ Աշխարհի ոչ մէկ երկրամասին վրայ գերիներով քաղաքակրթութիւն մը չտրուեցաւ մեզի ողջունել։ Եւ դիւրին չէ բառերով կործանել այն չքեղ երեւոյթը, որուն անունն է Արեւմտեան Քաղաքակրթութիւն, գործը՝ գրեթէ բացառաբար քրիստոնեայ բարոյականով տոգորուած և ապրած ցեղերու։ Նիցչէի յարձակումը տկարութեան քօմբլէքսին վրայ քրիստոնէութեան մէջ, ուրացումն իսկ է սրտառուչ և սխրալի գեղեցկութեան, ոյժի այն զարմանահրաշ պոռթկումին, որ արդիւնքն է հոգեկան զօրութեան՝ ընդդէմ աշխարհիկ ոյժերու։ Ի՞նչ գեղեցկութիւն կարելի է մօտեցնել քրիստոնեայ նահատակներու անբաւ շարանէն պարզուած պատկերին։ Կա՞յ աւելի մեծ ոյժ մը, քան այն՝ որ այդ բիւրաւորները մահուան դէմ կը զինազարդէ։

Քրիստոնէութիւնը, մաքուր և ուղղափառ իր խորքին մէջ, պաշտպանն է մարդուն վերազանցութեան։ Արեւելքի հին քաղաքակրթութեանց մեծ ժողովուրդները, Չինաստան, Հնդկաստան, Պարսկաստան, որոնք չընդունեցին քրիստոնէութիւնը, եւ շարունակեցին ապրիլ այն տուեալներուն մէջ, որոնք մասամբ անցեալէն, և մասամբ ալ նոր տուեալներէ բանի իրենց պարտադրուեցան, այսօր մեզի կուտան ոչ մխիթարական համապատկեր մը, որ ոչ միայն համեմատելի չէ արեւմտեան քաղաքակրթութեան փարթամ տեսարանին, այլ և աղօտումն իսկ է երբեմնի վաղանցուկ պայծառութեանց։ Ժ. դարու արաբ քաղաքակրթութիւնը անշուշտ բան մը կ'ապացուցանէ. փորձեցէք զայն փոխադրել սակայն Ի. դար, ոչ միայն ձեր սիրտը, այլ նաև ձեր միտքը պիտի ճմլուի այն եղերական անկումին, որուն դատապարտուած են փառաւոր այդ ազգերը։

Ընկերաբաններ, իմաստասէրներ, կըրնան զանազան ազդակներ հնարել այդ իրողութիւնները վերլուծելու եւ կշռելու. աւելի դիւրին չէ՞ սակայն արեւմտեան մըշակոյթին փառքը փնտռել, գտնել ու հաստատել պարզագոյն իրողութեան մը մէջ, որ քրիստոնէական կրօնին խորքը կազմեց։ կ'ակնարկեմ կատարելութեան ձգտումին, ոգեղէն արժէքներու արդար գնահատումին, կեանքը աշխարհին միայն չվստահելու հեռահայեաց ըմբռնողութեան, որոնք բոլորը մէկ, մեզի կը մատուցուին քաղցր, տարօրէն մարդկային պատգամի մը մէջ — Երկինքի Արքայութեան ձգտումին։

Ամբողջ հին քաղաքակրթութիւնը, կեանքի նեղ՝ պարագայապաշտ հասկացողութեան մը պարունակէն չէ ուզած շատ հեռանալ։ Յոյներ և Հռովմէացիք, կեանքը տեսած են մեր աշխարհի համար միայն. իրենց երկինքը (դժոխք և արքայութիւն) դադարում մըն է, խաւարում մը, կեանքէն հիմնովին անջատում մը, ճիշդ հակառակը քրիստոնեայ երկինքին՝ որ շարունակութիւն մըն է, աճում մը, անհունացում մը։ Դէպի յաւերժութիւն այս ձգտումը, քրիստոնէութեան նուէրն է մարդկութեան։

Աւելի կատարեալ կեանքի հեռանկար մը, վերջին երկու դարերու մէջ փորձուած բոլոր վարդապետական ձեռնարկները, պատահմամբ չէ որ բխած են քրիստոնեայ մըտածողութեամբ աշխարհի մը ծոցէն։ Մարդիկ աւելի թշուառ կ'ապրին Արեւելքի ընդարձակ կայսրութեանց խորերը, և սակայն ընկերային ձգտումներու պատմութիւնը ոչինչ ունի արձանագրած այդ ժողովուրդներէն՝ ի նպաստ անոնց տառապանքի բարձման, առնուազն ամոքման։

Աներեւոյթ ակնարկ մը ժամանակակից կեանքին վրայ, և քրիստոնեայ արժէքներու նահանջը մեր մէջ, թերեւս զմեզ զատած է ուղիղ դատողութենէն, և մղէ գերգնահատելու մեր տկարացումը, քաղաքակրթութիւն տեսնել հոն, ուր մեքենաներ կան, մշակոյթ տեսնել հոն, ուր վայելք և հեշտանք կը տիրեն։ Բայց իրերուն խորը թափանցողները միայն գիտեն թէ բուն մշակոյթը ծածկուած կը մնայ. ան է իրական զսպանակը քաղաքակրթութիւնները յառաջ մղող։ Այդ ազդակը հոգին միայն կրնայ ըլլալ. եւ ո՞ր վարդապետութեան մէջ ան այնքան պայծառ է և իրաւ, որքան քրիստոնէութեան։

digitised by A.R.A.R.@

Քրիստոնէութիւնը ամէն բանէ աւելի, մարդկային հոգիին արժէք տուող կրօնն է. անոր շնորհիւ ազատագրուեցաւ մարդը բնութեան ուժերու տիրապետութենէն, այն տարրերէն՝ որոնցմով շրջապատուած ապրեցաւ հեթանոս մարդկութիւնը դարերով։

Քրիստոնէութենէն առաջ մարդը ենթակայ էր պետութեան, քաղաքին, իրեն զլացուած էր ներքին հոգեկան ազատութիւնը։ Արեւելքը իր քաղաքակրթութեան ամենէն բարգաւաճ օրերուն իսկ, իր ծոցին մէջ ապրեցուց դարերով մարդ–գերիներու լէգէոններ։ Քրիստոնէութիւնը ազատագրեց մարդը բնութենէն և պետութենէն, և զայն դրաւ Աստուծոյ դէմ, իր խղճին հետ։

Պատմական միւս մեծ կրօնները, Հրէութիւն, Պրահմանականութիւն և Իսլամութիւն, Աստուծոյ միայն կը հաւատան, քրիստոնէութիւնը կը հաւատայ ոչ միայն Աստուծոյ, այլ նաև մարդուն, ուր, Աստուած՝ մարդացած, ու մարդը աստուածացած է։ Հինտուիզմը կը մերժէ մարդը, լուծելով զայն անանձնական աստուածութեան մը մէջ. քրիստոնէութիւնը սակայն կը յարգէ մարդը, և կը պատրաստէ զայն յաւիտենականութեան։ Մարքսիզմը՝ որ կը յաւակնի մեր օրերու վերջին և կարելի կրօնը ըլլալ, իր գաղափարաբանութեանը մէջ, մարդուն մտածումն ու գործունէութիւնը բխման կը բերէ նիւթական իրականութենէն։ Հոն մարդը կը մղուի առաջ, փոխան հոգեկան ազդակներու, նիւթա–ընկերային ուժերէ, որոնք դուրս կը մնան իր էութենէն։ Ինչպէս կը տեսնուի, նիւթը Մարքսիզմի իմաստասիրութեան մէջ օժտուած է ազատութեամբ, կեանքով. սակայն նիւթը չի կրնար ազատ և գործօն ըլլալ. ատոնք հոգիին յատկանիշներն են միայն։ Նիւթը անգործ է և կրաւորական։ Հոգեկան ազատութեամբ օժտուած էակը միայն գործօն կրնայ ըլլալ. Մարքսիզմը կը զլանայ մարդուն այդ ազատութիւնը, վերածելով զայն ընկերութեան պարզ գործիքի մը։

Քրիստոնէութիւնը, ընդհակառակն, կը բարձրացնէ անհատը իր միջավայրէն, օժտելով զայն հոգեկան ազատութեամբ. ատով ան վեր կը մնայ նիւթէն ու աշխարհէն, անոր պատկանելով հանդերձ։

Այժմու ընկերա–իմաստասիրական վարդապետութիւններու մէջ, մարդը ինքզինքին չի պատկանիր իր ներքին ապրումով, այլ մաս կը կազմէ նիւթին, մեքենային, և գործիք մըն է ընկերութեան, տէրութեան, դասակարգին։

Մարդը ապերջանիկ է հոս, և իր պատմութիւնը ողբերգական, որովհետև ան օժտուած է հոգեկան ազատութեամբ, և կը նախընտրէ մնալ այսպէս, քան ծախել իր այդ ազատութիւնը նիւթական հացին։

Պատերազմը պատրաստեց սերունդ մը՝ որ կը հաւատայ միայն ուժին. մարդկային հոգին անգամ ազգայնացած ու ընկերայնացած է։ Այսօրուան տագնապը մարդկութեան ըլլալէ աւելի՝ տագնապն է մարդկայնութեան։ Մարդը դադրած է նկատուելէ իբր գերագոյն արժէք, և պատկեր Աստուծոյ, և եղած՝ պատկեր մեքենային։ Միւս կողմէն առհաւական բնազդներ, հակառակ՝ քաղաքակրթութեան պարզուտէն անցած ըլլալուն, դասակարգերու և գաղափարաբանութիւններու ետին պահուըտած, նորէն անգթութեան և անասնութեան կը մղեն քաղաքակիրթ կարծուած մարդկութիւնը, որ դէպի Աստուած–մարդ չէ որ կը քալէ, այլ դէպի անասուն–մարդը։ Ազգային և ցեղային սուր բնազդներ՝ որոնք ժամանակէ մը ի վեր նորէն սկսած են իրենց խօսքը ապրիլ, ապացոյցներ են այս իրողութեան։

Նիցչէ և Մարքս մեծ դեր ունեցած են այս անմարդկայնացման մէջ, յարդարելով այսպէս հակաքրիստոնէական ճակատներ, անցեալ և այժմու ընկերութիւններու մէջ։ Արդի քաղաքակրթութիւնը՝ մեքենայի եւ զանգուածներու արգասիք, վտանգի ենթարկած է մարդկային անձն ու իր անհատականութիւնը. ազատութիւնը ծանր բեռ մըն է իր ուսերուն դրուած։

Մեր օրերու պատմութիւնը պայքարի մէջ դրած է մարդկային միտքն ու բնութիւնը, ազատութիւնն ու պէտքը, անհատն ու ընկերութիւնը. և մարդկային այս ուժերը ոգեկան կեդրոնի մը կապուած չեն դժբախտաբար։ Հակառակ այս տխուր երեւոյթներուն սակայն, բանայնականութիւնը տակաւ տեղի կուտայ հոգեկանութեան։ Քրիստոնէութեամբ, մարդը կ'ամբողջանայ՝ միանալով Աստուծոյ, կ'ազատագրուի՝ պատկանելով ինքզինքին։

Ինչպէս բնութեան, նոյնպէս ալ պատմութեան մէջ կշռոյթ մը կայ, յաջորդա-

digitised by A.R.A.R.@

## ԼԵԶՈՒԱԳԻՏԱԿԱՆ

# ՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿԻ ԲԱՐԵՓՈԽՈՒԹԻՒՆԸ

*Հայերէնի ուղղագրութիւնն ունի մէկ տասնեակից աւելի դարերի պատմութիւն։*

### ՄԵՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

*Թէեւ ոչ որոշակի, սակայն հիմնականում յայտնի է գրաբարի ուղղագրութիւնը, որ կիրառւում էր։ Մեսրոպեան այբուբէնի մէջ չկային օ եւ ֆ գրերը։ Վերջինս չկար, որովհետեւ գրաբար լեզուի արտասանութեան մէջ չկար այդ հնչիւնը։ Այդ հնչիւնով սկսուող գրաբար բառեր չկան։ Գրաբար լեզւով այդ հնչիւնով սկսուող օտար բառերը տառադարձւում էին* փ *կամ* ճ *տառերով, օրինակ, պարսկերէն* Ֆարսախ *բառը գրւում էր կամ* փարսախ *կամ* ճարսախ: Օ *տառը եւս չկար գրաբարում, որովհետեւ գրաբարը չունէր մաքուր օ ձայնաւորը։ Այդ օ գրի գիմաց մենք գրաբարում գտնում ենք* աւ *երկբարբառը, ժԳ. դարից սկսած ձեռագրերի մէջ երեւում է օ տառը իբրաքանչիւր անգամ գրաբարի* աւ *երկբարբառի գիմաց։ Յետագայում օ գիրը գործածւում է իբրեւ փակ վանկի մէջ* աւ *երկբարբառը փոխարինող։*

### Ե ԵՒ Է ԳՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆԸ

*Գրաբարի ուղղագրութեան մէջ* ե *և* է *գրերի գործածութիւնը եւս չատ որոշ չէ։ Մօտաւորապէս կարելի է ասել, որ գրաբարեան* ե *գիրը արտայայտւում էր քըմային* ե = յե, *իսկ* է *գիրը արտայայտւում էր* եյ *երկբարբառը։ ԺԳ. դարում կայունացաւ նաեւ* ե *եւ* է*-ի ուղղագրութիւնը, ըստ որում բառասկզբին լսուող* յե *երկհնչիւնի գիմաց գրւում էր* ե, *իսկ* է *մաքուր ձայնաւորի գիմաց գրւում էր* է:

է *գրւում էր նաև բառամիջում սովորաբար չեշտի տակ, և այն դէպքում, երբ վանկն աւելանալիս,* էն *վերածւում էր* ի–*ի։* է *գրւում էր նաեւ բառավերջում։ ԺԳ. դարի ուղղագրութիւնը հիմնուած էր որոշ պայմանականութեան վրայ, քանի որ այդ դարերում գրութիւնն այլեւս չէր համապատասխանում արտասանութեանը, մինչդեռ գրաբարում ուղղագրութիւնը գերաղանցապէս ֆոնետիկ էր, հնչիւնային, գրում էին այնպէս, ինչպէս արտասանում էին։ Օրինակ,* յ *կիսաձայնը գրաբարում գրւում էր բառավերջի ձայնաւորներից յետոյ, որովհետեւ այդպէս էլ արտասանւում էր. օրինակ,* տղայ, կաթսայ *եւ այլն։ ԺԳ. դարից սկսած* յ *կիսաձայնի գործածութիւնը խառնաշփոթւում է, որովհետեւ արտասանութեան մէջ բառավերջի ձայնաւորներից յետոյ այլեւս* յ *չկար, այդ պատճառով մոցուեց որոշ պայմանականութիւն՝* յ *գրել բոլոր ձայնաւորներից յետոյ, բացի դերանուններից և հրամայական եղանակի ձեւերից։*

*Այսպիսով մեր ուղղագրութեան առաջին կանոնները սահմանուել են ԺԳ. դարում, քանի որ այդ ժամանակ անհնարին էր գրել ըստ արտասանութեան։ Այդ ընդունուած ուղղագրութիւնը գործածուեց*

---

*կանութիւն մը՝ զանազան կերպի մշակոյթներու, իրենց արշալոյսներով և վերջալոյսներով, բարձրացումներով և անկումներով։ Լուսաւոր և խաւար շրջաններ կան, որբագան և աշխարհիկ վիճակներ։ Այժմ կ'ապրինք կարեւորութիւններով լի շրջանի մը մէջ, որ անկինագարձ մ'ըլլալէ աւելի վերջակէտ մըն է հին աշխարհը շինող շատ մը կարծեցեալ արժէքներու, և սկիզբ մը՝ նոր աշխարհին, որ ի ծննդեան է։*

*Միւս կողմէ սակայն, ո՛չ հին աշխարհը և ոչ ալ միջին դարերը չեն կորսուած. անոնց երկունքով կը ծնի նորը, որ հոգեկան է առաւելաբար։*

*Աւետարանի ոգին համբուրելի է նորէն այսօր առաւել քան երբեք, մարդկային այս տխուր ճակատագրով մտահոգուած հոգիներուն համար։ Վասնզի, հոն ուր Աստուած չկայ, մարդը անամբողջ է և տրուկ։*

*Ե. Վ. Տ.*

թէ՛ գրաբար լեզուով և թէ՛ միջին հայերէնով գրուող գրականութեան մէջ։ Այդ ուղղագրութիւնը պահպանուեց նաև մեր ազգային գրական լեզուի՝ նախահոկտեմբերեան գրական լեզուի խոշոր ջատագովների և մշակողների՝ Նալբանդեանի և Նազարեանցի կողմից։ Այսպիսով աշխարհաբար գրական լեզուն, փոխելով գրական լեզուի ամբողջ սիստեմը, ընդունելով ձևաբանական եւ շարահիւսական նոր սիստեմ, իր աւանդական կապը պահպանեց նախորդ գրական լեզուի՝ գրաբարի հետ նրանով որ, ոչ մի փոփոխութիւն չմտցրեց բառապատկերների մէջ, ձեռք չտուեց ուղղագրութեանը։ Այդ հասկնալի էր և արդարացի, որովհետև աշխարհաբար գրական լեզուն պատահական չէր, այլ արդիւնք էր հասարակական զարգացման օրինաչափութեան։

**ՄԵՐ ՀԻՆ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ**

Աշխարհաբար գրական լեզուն իրապէս ժողովրդական լեզուների՝ բարբառների և գրաբարի համադրական մի լեզուասիստեմ էր։ Այդ լեզուասիստեմը կառուցուած էր շատ խելահաս, իմաստաւոր ձևով։ Մի կողմից նկատի էր առնուած այդ լեզուի հասկընալի լինելու անհրաժեշտութիւնը, այդ պատճառով էլ լեզուի ձևաբանութիւնը և շարահիւսութիւնը իւրացուած էին ժողովրդական լեզուից, միւս կողմից նկատի էր առնուած լեզուի աւանդականութիւնը, քանի որ իւրաքանչիւր լեզու բազմաթիւ դարերի բազմահազար սերունդների լեզուական ստեղծագործութեան, կուլտուրական նուաճումների արդիւնք է։ Ո՛չ մի նոր սերունդ չի կարող իր համար յանկարծական կերպով լեզու ստեղծել։ Ամէն մի սերունդ ստանում է պատրաստի լեզու՝ իր նախորդ սերունդների կողմից մշակուած, և ինքը մշակելով՝ հաղորդում յաջորդ սերնդին։ Այդ պատճառով էլ տարբեր էպոխաների գրական լեզուների միջև բացարձակ կտրըուածութիւն լինել չի կարող։ Սա աւանդականութիւնն է լեզուի մէջ, որ իբրև անհրաժեշտութիւն անխուսափելի է բոլոր տեղերում, բոլոր դարերում։ Լեզուական փոփոխութիւնները, սակայն, կատարւում են ոչ միայն էվոլիւցիոն, այլև ռէվոլիւցիոն կերպով։ Այդ արդէն կապուած է գերապանցապէս հասարակական փոփոխութիւնների հետ։ Երբ հասարակական յարաբերութիւնների ռէվոլիւցիայի հետևանքով մի դասակարգ է հանդէս գալիս իբր իշխող, նա լեզուի մէջ մտցնում է իր դասակարգային նախորդների տրադիցիան, որու հետևանքով կտրւում է, մինչև այդ իշխող գրական լեզուն, և նրա մատերիալը, նիւթը օգտագործում իր լեզուական շինարարութեան համար։ Այդ դէպքում եւս աւանդականութիւնը չի ժխտւում եւ գործօն է լինում։ Այսպէս՝ օրինակ, հայ բուրժուական հասարակութեան կազմաւորումը ազգային լեզու ունենալու պահանջ առաջարկեց։ Այդ լեզուն, ինչպէս ասացինք, պէտք է լինէր հասկնալի, իսկ ժողովրդին հասկընալի էր իր լեզուի շարահիւսութիւնն ու ձևաբանութիւնը, ուրեմն՝ ազգային լեզուի հիմքը պէտք է լինէին ժողովրդական լեզուի ձևաբանութիւնն ու շարահիւսութիւնը։ Բայց այդ կերպ կազմուելով՝ աշխարհաբար գրական լեզուն կտրում էր գրաբարի ամբողջ սիստեմը, և այն սիստեմից վերցնում միայն որոշ ձևեր և օգտագործում, օրինակ՝ ըստ իս, խստիւ, ի հարկէ և այլն։ Դրա հետ միասին այդքան մեծ փոփոխութիւնը հասարակութիւնը բոլորովին կը կտրէր նախորդ կուլտուրայից, որ իբրև դարերի եւ սերունդների մշակոյթ, պէտք է ժառանգուէր՝ օգտագործելու համար։ Ուստի գրական լեզուն պահպանեց գրաբարի ընդունուած ուղղագրութիւնը և բառապաշարի զգալի մասը։

**ԳՐԱԲԱՐԷՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ**

Բուրժուական հասարակութեան շրջանում բաւականաչափ օգտագործուեց գրաբարը։ Աշխարհաբար գրական լեզուն իր աւանդական կապը պահպանեց գրաբարի հետ իր բառապաշարով և իր ուղղագրութեամբ։ Սակայն, երբ աշխարհաբար գրական լեզուն սկսեց դառնալ մասսայական, այդ ուղղագրութիւնը վերածուեց իր հակառակութեան՝ մեխանիկական խոչընդոտի։ Իր դժուարութեան

digitised by A.R.A.R.@

*պատճառով նա համարեա անմատչելի էր աշխատաւորական մասսային։ Այդ ուղղագրութիւնը իւրացնելու համար անհրաժեշտ էր առնուազն 7–8 տարուայ դպրոցական ուսում, որպիսի հնարաւորութիւն չէր տըրւում աշխատաւորին, բուրժուական հասարակութեան պայմաններում։ Այդ պատճառով էլ բուրժուազիան այդ ուղղագրութիւնը օգտագործում էր աշխատաւոր մասսային գրականութեան օգուտներից և գրագիտութիւնից հեռու պահելու համար։*

*Ուրեմն աշխատաւորութեան կուլտուրական զարգացումը դէմ էր առնում մասամբ նաև ուղղագրութեան դժուարութիւններին։ Այդ պատճառով էլ Հայաստանում սովետական իշխանութիւն հաստատուելու օրից, երբ առաջնահերթ խնդիր դարձաւ մասսաների գրագիտութիւնը, առաջնահերթ խնդիր դարձաւ նաև ուղղագրութեան ռեֆորմը, որը կատարուեց 1922ին։ Բայց այնպէս, ինչպէս շատ զայրացած անձը իր զայրոյթի օբեկտի գլխին խփելու համար բռունցքն աւելի շատ է բարձրացնում, քան պէտք է, այդպէս էլ ռեֆորմը կատարելիս որոշ ծայրայեղութիւն տեղի ունեցաւ։ Նկատի առնուեց միայն մի սկըզբունք՝* մի հնչյուն – մի գիր: *Այդ սկզբունքը, սակայն, ընդունելի է բոլոր այն լեզուների համար, որոնք նոր էին գիր ստեղծում իրենց համար, բայց 1500 տարիքի գիրը չի կարող հետեւել միայն այդ սկզբունքին, նա պէտք է այդ սկզբունքին կողքին նկատի առնի նաև* ավանդականությունը:

ՄԻ ՀՆՉԻՒՆ՝ ՄԻ ԳԻՐ

Մի հնչյուն՝ մի գիր *սկզբունքը առաջին հայեացքից, կարծես, հեշտացնում է ուղղագրութիւնը. բայց դրա հետ միասին նա ժխտում է աւանդականութիւնը։ Քսան տարուայ մեր պրակտիկան ցոյց տուեց, որ այդ սկզբունքն ունի երկու հիմնական թերութիւն։*

*1. — Ժխտում է աւանդական այբուբէնը, դուրս են ընկնում նրա միջից* օ *և* է *ձայնաւորները։*

*2. — Միևնոյն բառն ունենում է տարբեր տեղերում տարբեր ուղղագրութիւն (գնում* եմ, *բերելու* յեմ*)։*

*Այս երկու թերութիւնները տանելի թերութիւններ չէին։ Առաջինը բաւական դժուարացնում էր գրաբարի և նախահոկտեմբերեան գրականութեան ընթերցումը, վնասում էր լեզուի պատմականութեան ըմբռնումին։*

*Երկրորդ թերութիւնը տեղի էր տալիս նոր տիպի ուղղագրական սխալների։*

*Այդ երկու հիմնական թերութիւններից զատ, ռեֆորմն ունէր նաև մի մասնակի թերութիւն. դա՝ տնտեսման սկզբունքի խախտումն էր։ Օրինակ՝ գրաբարեան կամ հին ուղղագրութեան մէկ տառի փոխարէն* (ե *և* ո) *գրւում էր երկու տառ* (յե *և* վո)*։ Ընդարձակւում էր նաև* ե*-ին փոխարինող երկհնչիւնը՝ դառնալով* եյ (եյին, եյիր, եյինք *և այլն)։ Չկար նաև* յ *ձայնակապի գործածութեան որոշակիութիւն. շատ որոշ չէր թէ,* յ *ձայնակապը,* ու *ձայնաւորից յետոյ, պէ՞տք է դնել թէ ոչ. (կենգուրուի՞ թէ կենգուրույի)։ Ուղղագրութեան ռեֆորմի վերջերս ընդունուած մասնակի բարեփոխութիւնը վերացնում է վերոյիշեալ բոլոր թերութիւնները։*

*Ո՞րն է ռեֆորմի մասնակի բարեփոխութեան էութիւնը։*

Ուղղագրական ռեֆորմի մասնակի բարեփոխությունը շոշափել է միայն բառասկզբի ձայնավորների և յ ձայնակապի ուղղագրության հարցը, *ուրիշ* ոչի՛նչ:

*Այդ մասնակի բարեփոխութեամբ վերականգնւում է աւանդական կապը նախորդ գրական լեզուների հետ, չի կտրւում ուղղագրական ռեֆորմի հիմնական սկզբունքներից և վերացնում է նրա հիմնական թերութիւնները։*

*Ուղղագրական ռեֆորմի մասնակի բարեփոխութիւնը սահմանում է հետեւեալ նոր կանոնները.*

ՆՈՐ ԿԱՆՈՆՆԵՐ

1.— Բառասկզբին *յե* լսելիս գրել միայն *ե*, իսկ *ե* լսելիս, գրել միայն *է*: *Օրինակ՝*

Ես, երեկո, երկու, եզ, Երևան, եղել, ենթարկել, երբ, Եփիմ, Երվանդ, Եզեկիա, երգ *և այլն։*

է), էլ, էշ, էզ, էջ, էմին, էմմա, էգուց,

digitised by A.R.A.R.@

Եղվարդ *եւայլն. (Հայերէն լեզուի մէջ* եով *սկսւող գործուն բառեր քիչ կան, դրանք համարեայ այն բառերն են, որոնք բերուած են օրինակում։ Փոխառեալ բառերը գերազանցապէս* էով *են լինում, օրինակ՝* էպոս, էրա, էպոխա, էտիկա *եւայլն)։*

2.— Բառասկզբին *վո* լսելիս գրել *ո*, իսկ *Օ* լսելիս գրել *Օ: Օրինակ՝*

Որդի, ոգի, ոտ, որբ, որոճ, որս, ողողել, ոռոգել, Որմիզդ, Ոստանիկ, *եւայլն։*

Օր, օղ, օդ, օրէնք, օրօր, օձ, օվկիանոս, *եւայլն։*

*Բացառութիւն են կազմում միայն* ով *եւ* ովքեր *բառերը. գրութիւնն անփոփոխ է եւ միեւնոյն՝ թէ՛ գրաբարի, թէ՛ նոր ուղղագրութեան եւ թէ՛ բարեփոխութեան մէջ։*

Բառամիջին ձայնաւորների ուղղագրական որեւէ փոփոխութիւն չի կատարւում, *ուղղագրութիւնը վերաբերւում է* միայն բառասկզբի ձայնաւորներին:

3.— Բարդութեան եւ ածանցման ժամանակ ոչ մի բառ իր ուղղագրութիւնը չի փոխում:

*Այդ նշանակում է, թէ ամէն մի բառ ինչպէս գրւում է անկախ, առանձին, նոյն ուղղագրութիւնը պահպանում է նաեւ բարդութեան եւ ածանցման ժամանակ, ուրիշ կերպ ասուած՝* բառապատկերը որեւէ կերպ փոփոխութեան չի ենթարկւում: *Օրինակ՝*

երկու-*տասն*երկու, երեք-*տասն*երեք, երես-*ան*երես, երգ-*համ*երգ, երթ-*չք*երթ, երեւոյթ-*ան*երեւոյթ, *եւայլն.* էջ-*վայր*էջք, էգ-*ար*էգ, էական-*ան*էական, *եւայլն.*

որոճ-*բն*որոճ, ոտ-*չորք*ոտանի, ոգի-*փոքր*ոգի, որդի-*քեռ*որդի-*եղբօր*որդի, ողորմ-*ան*ողորմ, *եւայլն.*

օր-*այս*օր, օղ-*ան*օղ, օթեւան-*ան*օթեւան, օրօր-*մեղմ*օրօր, *եւայլն։*

*Այս վերջին կանոնը վերացնում է ուղղագրութեան ռեֆորմի այն թերութիւնը, ըստ որի փոխւում էր բառապատկերը եւ միեւնոյն բառն, առանձին՝ տարբեր ուղղագրութիւն ունէր, իսկ բարդութեան մէջ՝ տարբեր. օրինակ՝* յերգ-*համ*երգ, վորոճ-*ան*որոճ *եւայլն։ Բացի այս, ուղղագրութեան այս կանոնը նաեւ կը նպաստի ածանցաւոր եւ բարդ բառերն աւելի խոր ըմբռնելուն, քանի որ ուղիղ գրելու շահագրգռութիւնը կը թելադրէ ստուգաբանելու բառը, հասկնալու այդ բառը։*

4.— *Մի առանձին կանոն կայ նաեւ օժանդակ բայերի նկատմամբ։ Այդ կանոնը հետեւեալն է.*

Օժանդակ բայի ներկայ ժամանակի ձեւերն սկսւում են *եով*, բացի երրորդ դեմքից, որ գրւում է *է: Օրինակ՝* եմ, ես, է, ենք, եք, են:

Օժանդակ բայի անցեալ անկատար ձեւերը սկսւում են *էով*:

*Օրինակ՝* էի, էիր, էր, էինք, էիք, էին:

*Օժանդակ բայերի այդ ուղղագրութիւնը իմաստաւոր է, բնական է։ Մասնակի բարեփոխութիւնը որեւէ փոփոխութիւն չի մտցնում օժանդակ բայի եզակի առաջին եւ երկրորդ, յոգնակի առաջին եւ երկրորդ ձեւերի մէջ. այդտեղ ուղղագրութիւնը միեւնոյն է թէ՛ գրաբարում, թէ՛ աշխարհաբարում եւ թէ՛ նոր ուղղագրութեան մէջ։ Տարբերութիւնը միայն յոգնակի երկրորդ դէմքի մէջ է, որ գրաբարում ու աշխարհաբարում* էով *է (էք), իսկ նոր ուղղագրութեամբ* եով *(եք)։ Այդ տարբերութիւնը լուծուած է յօգուտ նոր ուղղագրութեան, որովհետեւ յոգնակի երկրորդ դէմքում* եով *գրելը որեւէ կերպ չի հիմնաւորւում։*

*Եզակի երրորդ դէմքի* էն *ենթարկւում է վերեւում բերուած 1ին կանոնին, այսինքն՝ բառասկզբին* է *լսելիս գրել* է, *իսկ* է *բառը ինքն առանձին բառ է եւ բառասկիզբ է, ուրեմն* է *պէտք է լինի* է: *Օժանդակ բայի անցեալ ժամանակի ձեւերն* էով *սկսելը նոյնպէս ենթարկւում է 1ին կանոնին եւ նորութիւն չէ։*

*Բարդութեան եւ ածանցման մէջ այդ ուղղագրութիւնը չի փոփոխւում. օրինակ՝* չեմ, չես, չէ, չենք, չեք, չեն. չէի, չէիր, չէր, չէինք, չէիք, չէին, *էական եւայլն։*

5.— Յ ձայնակապը գործածւում է միայն *ա* եւ *ո* ձայնաւորներից յետոյ:

*Այս կանոնը հասկնալու համար պէտք է նախ գիտնալ, որ մեր* յ *հնչիւնը կարող է կազմել երկհնչիւններ* յա, յո, յու, յի, *եւ* այ, ոյ, ույ, եյ: *Օրինակ՝* ոսկյա, յոթ, յուր, այս, խոյ, բույս, դեյրա:

*Բացի այս,* յ *հնչիւնը կապում է երկու ձայնաւորներ, որպիսի դէպքում կոչւում է* ձայնակապ. *օրինակ՝* այա *(կայարան),* այո *(այո),* այու *(կայուն),* այե *(հմայել),* այի *(կային).*

digitised by A.R.A.R.@

Ոյե *(Նոյեմբեր)*, ոյա *(գոյական)*, ոյի *(խոյի)*, ոյու *(գոյութիւն)*։

*Այս բոլոր օրինակներում չի կապւում* է ա և ո *ձայնաւորները միւս ձայնաւորների հետ*, նա ձայնակապ է։

*Նոր ուղղագրութեան օրէնքների համաձայն յն կարող էր կապել նաև* ե *ձայնաւորը միւս բոլոր ձայնաւորների հետ, օրինակ*, եյա *(քուէարկութիւն)*, եյի (եյինք, եյիք, եյին), եյու *(գործունէութիւն)*, *և այլն։*

*Ռեֆորմի մասնակի բարեփոխութեամբ յ ձայնակապը գրւում է* միայն

ա *և* ո *ձայնաւորներից յետոյ.*

*չի գրւում՝* ե *եւ* ու *ձայնաւորներից յետոյ։*

*Օրինակ՝ ինչպէս հին ուղղագրութեամբ և նոյնպէս և այժմ գրւում է կային, կայարան, այս և այլն։*

*Բայց՝*

Նոր ուղղագրությամբ գրվում էր

եյակ, եյություն

եյի, եյիր, եյինք, եյիք, եյին,

գործունեյություն, մարգարեյություն *և այլն։*

*Այժմ գրւում է*

էակ, էություն

էի, էիր, էր, էինք, *և այլն*,

գործունէություն, մարգարէություն *և այլն։*

*Ուղղագրութեան մասնակի բարեփոխութիւնը, ինչպէս ասացինք, չի վերաբերում բառամիջի ձայնաւորներին։ Բառամիջի ձայնաւորների ուղղագրութիւնը, ինչպէս և* ը *ձայնաւորի բառասկզբի ուղղագրութիւնը մնում է անփոփոխ, այսինքն այնպէս, ինչպէս ընդունուած է նոր ուղղագրութեան մէջ։*

*Առաջին հայեացքից թւում է դժուար, թւում է թէ չփոթմունք կարող է ստեղծել, սակայն վերոյիշեալ հինգ պարզ կանոնների իւրացումը և շատ կարճատև պրակտիկան շատ հեշտութեամբ իւրացնել կտան ուղղագրութեան մասնակի բարեփոխութիւնը։*

**Ա. ՂԱՐԻՊԵԱՆ**

(Լեզվաբան. Գիտութիւնների Տոքթոր)

---

# ՆԱԽԱՀԱՅԵՐԷՆ ԼԵԶՈՒՆ(*)
## ԵՒ
# ՆԱԽԱՀԱՅԵՐԻ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՈՒՐՈՒԱԳԻԾԸ

*Լեզուական այն վիճակը որ ներկայացնում էր հայերէնը Հնդեւրոպական նախահայրենիքից հեռանալու միջոցին, կոչւում է նախահայերէն։ Ապագայում այդ լեզուն պիտի կրէր երկու կարգի փոփոխութիւն. ա. Լեզուական ձևերը ենթարկուելով բարեշրջութեան հրամայական օրէնքներին, դարէ դար պիտի ստանային նոր կերպարանք, մինչեւ հասնէին այն ձեւին, ուր գտնում ենք այսօր։ բ. Շփուելով օտար ցեղերի և լեզուների հետ, կամ ենթարկուելով նրանց քաղաքական կամ քաղաքակրթական ազդեցութեան, հայերէնը պիտի ընդունէր նրանցից նորանոր տարրեր։*

*Այն ձեւերը՝ որոնք կրելով առաջին կարգի փոփոխութիւնները, կազմում են այսօր նախահայերէնի անընդհատ շարունակութիւնը, կոչւում են բնիկ ձեւեր. իսկ այն ձեւերը՝ որոնք իբրև նոր տարրեր աւելացել են մեր լեզուի մէջ, կոչւում են օտար կամ փոխառեալ ձեւեր։ Արդի հայերէնը, ինչպէս և որևիցէ դարի հայերէնը, ներկայացնում է այդ երկու կարգի ձեւերի (բնիկ և փոխառեալ) գումարը։*

*Հայերէն լեզուի պատմութեան և նրա հետ զուգընթացաբար հայ կեանքի ուսումնասիրութեան համար կարեւոր է երևան հանել նախահայերէնի վիճակը։*

*Ի՞նչ միջոց ունինք դրա համար։*

*Հայերէնը աւանդուած է մեզ շատ ուշ ժամանակ. դժբախտաբար որևէ օտար աղբիւր էլ չէ գտնուած մինչև այժմ, որ հայերէնի հնագոյն վիճակի մասին որևէ լուսաբանութիւն ընձեռէր մեզ։ Ուստի մնում է մեզ դիմել գիտական մեթոդների։*

*Վերևում տրուած սահմանից հետևում է՝ որ եթէ հայերէնի գանձարանից դուրս հանենք զանազան ժամանակ փոխառեալ*

(*) Վերցուած՝ մեծանուն հեղինակի **«Պատմութիւն Հայ Լեզուի»** գործէն (Դ. Գլուխ):

ձևերը օտար լեզուներից կ'ունենանք նախահայերէնի պատկերը։ Մինչև Ե. դարը, երբ հայերէնը առաջին անգամ գրի առնուեց, մեր լեզուն փոխառութիւններ կընքել էր պարսկերէնից, ասորերէնից, յունարէնից, լատիներէնից, մասամբ նաև ասորերէնից, վրացերէնից, խալդերէնից և Փոքր-Ասիական զանազան անծանօթ լեզուներից։ Երբ փոխառու լեզուն յայտնի է, բնականաբար դիւրին է նրանից եկած փոխառութիւնները գտնել և հաստատել։ Ըստ այժմ շատ լաւ ուսումնասիրուած են պարսկերէնից, յունարէնից, լատիներէնից, ինչպէս նաև ասորերէնից և վրացերէնից փոխառեալ բառերը հայերէնի մէջ։ Սակայն ոչ մի միջոց չկայ խալդերէնից և Փոքր-Ասիական զանազան լեզուներից եկած փոխառութիւնները որոշելու և հաստատելու, որովհետև այս լեզուները կորած ու անհետացած են։ Բարեբախտաբար այստեղ օգնութեան է հասնում մեզ հնդեւրոպական լեզուների համեմատական լեզուաբանութիւնը, որ որոշում է թէ այս ինչ բառը հնդեւրոպական է թէ ոչ, որով բնիկ հայերէն բառերը ըստ կարելւոյն ճշտւում եւ հաստատւում են։ Ասացինք՝ ըստ կարելւոյն, որովհետեւ հնդեւրոպական նախալեզուի և հայերէնի ձայնաբանութեան բոլոր գաղտնիքները դեռ երեւան հանուած չեն և անշուշտ կարող են գտնուել զանազան անծանօթ կէտեր։ Կարևոր է նկատել և այն՝ որ որոշ հնդեւրոպական ձևեր կարող են բոլոր միւս լեզուների մէջ ջնջուած և միայն հայերէնի մէջ պահուած լինել։ Այսպէս է օրինակ ծանր բառը, որ պատկանում է ու բունով ածականների շարքին (ծանր-ծանու, կարծր-կարծու, մանր-մանու, բարձր-բարձու)։ Հաստատուած է որ այս կարգի ածականները ամենախոր հնութիւնն ունին. այսպէս՝ բարձր-բարձու ածականը՝ որ մինչև այժմ առանձնացած մի ձև էր, և ոչ մի հնդեւրոպական լեզուի մէջ գոյութիւն չունէր, երևան եկաւ քուչերէնի և հաթերէնի մէջ, ուր շատ ընդարձակ գործածութիւն ունի։ Բայց այս կարգի ձևերը ճանաչել և իբրև բնիկ հայերէն երևան հանել անկարելի է։ Վերջապէս կան անշուշտ բազմաթիւ հնդեւրոպական բառեր, որոնք գոյութիւն ունեցել են նախահայերէնի մէջ, բայց յետոյ օտար ազդեցութեանց առաջ անցի տալով ջնջուել են։ Այսպէս օր. նախահայերէնի մէջ գոյն ցոյց տուող բառերից ծանօթ են միայն դեղին և դեղձան. մնացեալներից կարմիր, կապոյտ, սեաւ, սպիտակ պարսկերէն են, կանաչ, թուխ, գորշ անծանօթ են. արդ՝ անկարելի է որ յիշեալ գոյները անծանօթ լինէին նախահայերէնին, քանի որ հնդեւրոպական լեզուների մէջ ընդհանուր են. այսպէս օր. «կարմիր» — լտ. ռուբեր, յն. երիւթրոս, հոլ. ռուդրը, սանս. ռուդհիրաս, քուչ. րատրեմ, լիթ. րուդաս, գոթ. ռաութս, իռլ. րուադ, գերմ. ռօթ որ պիտի տար հայերէն արուրդ կամ արուր։ Հնագոյն հայերէնի մէջ (նախ քան Ե. դար) անշուշտ եղել է արուրդ կամ արուր «կարմիր» բառը, բայց յետոյ ջնջուել է՝ փոխանակուելով պրս. կարմիր բառով, որ անշուշտ կարմիր գոյնի պատրաստութեան մի նոր եղանակի հետ ներմուծուել է Հայաստան։

Այս բոլորից հետևում է այն՝ որ բնիկ հայերէն բառերի գումարը՝ որ համեմատական լեզուաբանութիւնը կարողացել է երևան հանել մինչև այժմ իր ունեցած միջոցներով, կազմում է նախահայերէն բառագանձի միայն մինիմումը։ Այդ բառերի թիւը 600 է։ Մնացեալը անյայտ է։

Բայց բնիկ հայերէն բառերը ճշտել և երևան հանել դեռ չի նշանակում նախահայերէնի պատկերը երևան հանել, ինչպէս որ Ե. դարի հայերէն լեզուի քերականութեան հնդեւրոպական գծերը որոշել չի նշանակում նախահայերէնի քերականութիւնը երևան հանել։ Որովհետև բնիկ հայերէն բառերը թէև նախահայերէն բառերի հետ էապէս նոյն են, և կազմում են նրանց շարունակութիւնը, բայց ձևով նոյն չեն։ Այսպէս օր. գիտենք որ «հայր» բառը հընդեւրոպական նախալեզուում պըտեր ձևն ունէր և այն բարբառի մէջ, որին պատկանում են հայերէնը, յունարէնը, իտալական, կելտական և գերմանական լեզուները արդէն դարձել էր պատեր. այս ձևը շատ ուշ, այն է Ե. դարում միայն եղել է հայր և կարելի չէ ասել թէ հէնց որ հայերը բաժանուեցին հնդեւրոպական խմբից, իսկոյն՝ պատեր դարձաւ հայր։ Փոխառութիւնը եղել է շատ դանդաղ։ Այս բառի մէջ մենք ներկայ ենք 4 ձայնական փոխառութեան. պ դարձել է հ, տ դարձել է յ, ե՝ ջնջուել

digitised by A.R.A.R.@

է, չեշտը փոխադրուել է նախորդ վանկի վրայ։ Ենթադրելով թէ ազգերի բաժանումը Ն. Ք. 25րդ դարում եղած լինի, ուրեմն պէտք է եղել 3000 տարի՝ որպէսզի պատեր դառնայ հայր։ Սակայն մենք չգիտենք թէ այդ 3000 տարուայ շրջանի ո՛ր կէտում, և ինչ հերթով են տեղի ունեցել յիշեալ չորս ձևափոխութիւնները, որովհետև մենք չըգիտենք ձայնական փոփոխութեանց ժամանակագրութիւնը։ Առանց այդ ժամանակագրութեան՝ կարող էր մէկը առաջարկել մի այսպիսի ընթացք.

Ն. Ք. 2500 թ. պատէ՛ր
» 2000 թ. փայէ՛ր
» 1000 թ. հայէ՛ր
» 500 թ. հա՛յէր
Յ. Ք. 200 թ. հայր

մի ուրիշը կարող էր առաջարկել մի ուրիշ ընթացք. բայց դրանցից ոչ մէկը ստուգել և ճշտել կարելի չէ։

Առնենք աւելի բարդ մի օրինակ. հյ. գիշեր բառը հնդեւրոպական ծագում ունի և կցւում է յն. հեսպերոս, լտ. վեսպեր, հիռլ. ֆեսկոս, քիմր. ուխեր, լիթ. վակարաս, հսլ. վեչերը, թոխար. վսե ձևերին։ Այս բոլորի նախաձևը տրւում է վեսպերո կամ վեքերո. հայկական ճիւղի բարբառը ունէր անշուշտ վեՖերո ձևը, որ Ե. դարում եղել էր գիշեր: Հայերէնի մէջ նախաշեշտ ի յառաջանում է ե ձայնից, ուստի գիշեր բառը նախապէս գեշեր ձևն ունէր։ Զանազան քննութիւններ ցոյց են տալիս որ այս ե > ի ձայնափոխութիւնը տեղի է ունեցել Յ. Ք. 2րդ դարում, ուստի այդ ժամանակ յիշեալ բառը արդէն գիշեր ձևն ունէր։ Հայերէն նախաձայն գ յառաջանում է հնխ. վ ձայնից, ինչպէս օրինակ գինի >գէնի< հնխ. վոյնիօ. այս բառը փոխառութեամբ անցնելով վրացերէնի՝ տուել է ղվինի. ուստի այն ժամանակ երբ հայերը Հայաստանում էին և վրաց հետ յարաբերութեան սկսած էին, հնխ. վ. ձայնը դեռ գ դարձած չէր հայերէնի մէջ, այլ տատանւում էր գւ. միջին աստիճանի վրայ։ Կայ նաև հնխ. Ֆ, որ անցնելով միջին Ֆյ և այլ ձևերից, պիտի դառնար վերջապէս շ: Որոշել այս բոլոր միջին ձևերը, մանաւանդ նրանց ժամանակը, հասնելու համար մինչև հնագոյն վիճակը, ուրիշ խօսքով վերականգնել նախահայերէնի ճիշտ ձևը, գիտութեան արդի միջոցներով անկարելի է։

Այս պարագային մենք պիտի բաւականանանք ուրեմն ներկայացնելով այստեղ հայերէնի 600 բնիկ բառերի ցուցակը։ Մենք դասաւորում ենք այդ բառերը ոչ թէ բառարանական այբուբենական կարգով, այլ ըստ նշանակութեան և ըստ տեսակի, որով տուած կը լինինք նաև նախահայկական քաղաքակրթութեան մնխմում պատկերը։

1. Բնութեան եւ նրա զօրութեանց մասին. — Արեւ, արեգ, արեգակն, լուսին, աստղ, լոյս, ամպ, ամպրոպ, կարկուտ, ձիւն, սառն, մէգ, բալ, թօն, հեղեղ, գետ, առու, ողողել, ջուր, մօր, աղբիւր, ալիք, անդունդ, հուն, ջեր, սար, սոր։

2. Կրօնական բառեր. — Դիք, ձօն, մաղթել, մեղք, սուրբ, տօն, երդումն, անէծք։

3. Մարդ եւ մարմնի մասեր. — Ակն, աչք, ականջ, ունկն, այտ, բերան, լեզու, ատամն, ծնօտ, ալիք, մօրուք, կոկորդ, ուլն, ուս, արմուկն, ձեռն, մատն, եղունգ, թեկն, ստինք, սիրտ, լեարդ, կող, մէջք, ողն, քամակ, որովայն, փայծաղն, ընդերք, արգանդ, երաստան, աղդր, ծունգ, ծունր, ամորձիք, ոտ, հետք, ոտն, ոլոք, սրունք.— մարմին, անձն, միս, մուկն, մկան, ոսկր, նեարդ, ջիղ, գեղձ, միտք, տեռ (կաշի), արիւն, արտօսր, արտասուք, թուք, մէզ, քիրտն։

4. Հիւանդութիւններ եւ նմաններ. — Դալուկն, ջերմ, կեղ, լործք, թանչ, երկունք, լուսն, չիլ, ործալ, տեռատես, քորել, դեղ։

5. Կենդանիներ. — ա. Ընտանի կենդանիներ. — Այծ, բուծ, գառն, եղն, էշ, կով, հաւ, ձի, մաքի, մարի, մեղու, մոզի, մուղ (էգ էշ), շուն, ուլ, սագ, սխուռդ, օդիք, ձուկն, թռչուն։

բ. Վայրի կենդանիներ. — Աղուէս, առն, արծուի, արջ, գայլ, եղն, լուսան, կռունկ, ողնի, ցին։

գ. Սողուններ, միջատներ և այլ մանրակար կենդանիներ. — Անիծ, բոռ, բրէտ, գորտ, թիթեռն, իժ, լու, մուկն, մլուկ, մուն, մրջիւն, տիզ, օձ։

6. Ընտանիք. — Այր, կին, հայր, մայր, հօրու, յօրայ, մօրու, հաւ, հանի, եղբայր, քոյր, որդի, ուստր, դուստր, մանուկ, սան, հարսն, նու, սկեսուր, տագր, քենի, ներ, որբ, ընտանիք, մարդ։

digitised by A.R.A.R.@

7. Երկրագործական. — ա. Տունկեր. — Բող, բողկ, գաղձն, գեղձ, գինձ, դաղձ, դեղձ, դեղձն, եղեւին, խատոր, կաղին, կառն, հացի, մայրի, որթ, սիսեռն, ցախ։

բ. Տունկի մասեր. — Արմատ, բողբոջ, թերթ, կիւ, կողր, մոլ, ոստ, սերմն, ստեղն։

գ. Գործիքներ. — Արօր, բահ, բիր, եղան, թի, լուծ, սամի, սամետի։

դ. Երկրագործութիւն. — Առոգանել, բրել, բուսանել, դիզել, հերկել, քաղել, արտ, արօր, բերք, բերրի, դալար, դեղ (խոտ), դէզ, բոյս, երախայրի, չիր, արգիւնք, անդ, ալիւր, գինի, հող։

8. Խաշնարածութիւն եւ գիւղատնտեսութիւն. — Արածել, բուծանել, բուռ, բտել, գեղմն, գոմ, դալ, դիել, երի, թան, թառ, թառիլ, լակ, լափ, լափել, կաթն, կոգի, կոյ, հօտ, հօրան, ձետ, մալել, մածուն, մարի, մեղր, միս, յղի, որձ, սնանիլ, ստերջ, ստին, տիկ, տաւար, քակոր։

9. Արհեստի վերաբերեալ. — Արծնել, ասեղն, աղալ, դակու, դարբին, դուրգն, երկան, թակն, թեքել, թիթեղն, լասել, լար, կարթ, հերիւն, ձաղկ, ձեւ, մածնուլ, մամուլ, մլազաց, սալ, քերել, քերթել, քերծել։

10. Գոյներ. — Դեղին, դեղձան։

11. Վաճառականութիւն. — Գին, գնել։

12. Շինարարական. — Անգ (գրանգի), անկիւն, գերան, դուռն, թումբ, կամուրջ, հնոց, սիւն, տուն, ցանկ, ցիւ, քիւ։

13. Հագուստ եւ զարդ. — Ագանիմ, առագաստ, բոկ, գինդ, զարդ, զգենուլ, զգեստ, օթոց, օծանել։

14. Ուտելիք եւ ըմպելիք. — Կեր, կուր, կերակուր, ուտել, արբ։

15. Առտնին տնտեսութիւն. — Սար, աւել, ամալ, աման, այրել, ագագել, արծարծել, բոց, բորբոքել, գեղմն, եռալ, եփել, թանալ, թաթաւել, լոգանալ, լուանալ, լուցանել, խայծաղ, կայծ, հալել, հեղուլ, կեղուլ, հինել, հնոց, հում, հուր, մուխ, մուր կամ մուրճ, նայ, ունկունք, ջեռացուցանել, ջուր, տարդալ, տառն (տանգի), քերել։

16. Թիւ եւ չափ. — Մի, երկու, երեք..., իննսուն եւ ինն, բազում, կրկին, հազ, հեղ, մէն, միայն, յոլով, քան (ակ)։

17. Մետաղներ, հանքեր եւ նմաններ. — Աղ կամ աղտ, արծաթ։

18. Ճամբի վերաբերեալ. — Արահետ, կածան, լաստ, նաւ, երթալ, ընթանալ, չոգալ, չուել, յածիլ, ոլանալ։

19. Ժամանակ եւ տեղ. — Ամ, ամառն, ամիս, արդ, գարուն, գիշեր, դեռ, երեկոյ, երեկ, հեռի, հերու, հուպ, ձմեռն, մերձ, մէջ, յետ, յետոյ, ներ, ներքս, ներքոյ, ի վեր, ի վերայ, տեւել, տի, տիք, տիւ, ցերեկ, օր։

20. Երկիր եւ պետութիւն. — Ատեան, մարտ։

բ. Զէնքեր. — Թուր, նետ։

21. Սովորական կեանքի բառեր. — Անձն, անձուկ, անուն, աղաչել, աղքատ, աղկ-աղկ, արգահատիլ, արթուն, առնել, առնուլ, ատել, արի, արու, արդար, աղմուկ, արքանեակ, անուրջ, աճիլ, արգել, աւելի, առել, ածել, ամենայն, այց, անկանել, արմանալ, բազում, բալ (ասել), բան, բառ, բամբասել, բառնալ, բարձր, բեկանել, բեռ, բերել, գալարել, գաղել, գաղտ, գող, գան, գելուլ, գլորել, գեղձալ (փափագիլ), գէջ, գիտեմ, գտանել, գոգ (գոգցես), գոյ, գործել, դարել, դադարել, դամբան, դամբարան, դառնալ, դեդեւիլ, դի, դիակ, դնել, դուլ, եզր, եկ, երգել, երգիծանել, երեւիլ, երէց, երկնչիլ, զայրանալ, զանգիտել, զատ, զարկ, զարմ, զգալ, զեղուլ, զերծ, ընթեր, ընծայ, ընկենուլ, ընկեր, ընտանի, ընկնուլ, ընկզմել, ընտիր, թառամ, թարշամ, թանձր, թեթուք, թեր, թերի, թռչել, թողել, թնձալ, լալ, լայն, լաւ, լերկ, լիզել, լի, լնուլ, լիրբ, լքանել, լուտալ, լուռ, լպիրծ, լպիրշ, լսել, խայծ, խայտ, խնդալ, խնծիղ, ծաղր, ծիծաղ, ծեր, ծնանել, կատակ, կեալ, կենդանի, կեռ, կողմն, կոր, կլանել, կրծել, հակառակ, հայցել, հասանել, հաստ, հաստատ, հարկ, հարկանել, հարթնուլ, հարցանել, հեղգ, հեռ, հին, հոլովել, հոտ, հոտոտել, ձաղել, ձիր, ձրի, ճանաչել, մանր, մատաղ, մատղաշ, մարդ, մեծ, մեղկ, մեղմ, մեռանիլ, մեալ, մոլի, մոլար, մոռանալ, մունջ, յագենալ, յանդ, յառնել, յարիլ, յարմար, յեղուլ, նետ, ներգեւ, նստել, նոր, նուրբ, չեղ, ողբալ, ողողել (1. թափել, 2. լալ), ողորկ, ողջ, ուծանալ, ունայն, ուսանիլ, չոր, ջանալ, սաստ, սաստիկ, սեռ, սիրել, սերունդ, սխալ, սին, սուտ, սուրբ, ստանալ, ստոյգ, սփռել, տալ,

digitised by A.R.A.R.@

տեսանել, տեւել, ցեղ, ցելուլ, ցտել, փանաք, փութալ, փլանիլ, քուն, քուքալ, քքուիլ։

22. **Դերանուններ, շաղկապ եւ նմաններ.** — Այս, այդ, այն, աւասիկ, աւադիկ, աւանիկ, այլ, առ, անդ, առ (մօտ), արդեօք, դա, դոյն, դու, եւ, եթէ, ես, եւս, եմ, եղանիլ, գի, թէ, ընդ, իր, իք, չիք, ինչ, իմն, իւր, մեք, մի, միւս, միթէ, նա, նոյն, ո, ով, որ, ոմն, ու, ուր, ուրեմն, ուրեք, ոք, սա, սոյն, քան։

Բնիկ հայերէն բառերի այս ցանկը՝ որ իբրեւ նախահայերէնի ուրուագիծ դրինք վերեւում, նախահայերէն լեզուի տեսակէտով մի մեծ պակասութիւն ունի. — դա է բարդ և ածանց բառերի հարցը։

Թէ՛ բարդ և թէ ածանց բառերը զարմանալի կերպով փոփոխական բախտ ունին ամէն լեզուի մէջ էլ. Առձեռն բառարանում 300ից աւելի բարդ ու ածանց բառեր ունինք Բաչ արմատից. այդ բոլորից հազիւ 25 հատը կեանք ունի այսօրուայ գրական լեզուի մէջ։ Ընդհակառակը Ոսկեդարեան հայերէնում ամեն — բառով կազմուած բարդերը շատ խոշոր թիւ չեն կազմում, իսկ այսօրուայ գրական լեզուի մէջ ամէն ածական ազատօրէն կարող է բարդուիլ նոյն բառով։ Սրանից հետեւում է թէ նախահայերէնն էլ կարող է ունենալ վերոյիշեալ 600 բառերից կազմուած բազմաթիւ բարդեր ու ածանցներ՝ որոնք գործածական չը լինէին Ոսկեդարեան հայերէնում, և ընդհակառակը կան անշուշտ շատ ու շատ բարդեր ու ածանցներ՝ որոնք թէև սովորական են գրաբարի մէջ, բայց գործածական չէին նախահայերէնում։ Այսպէս օր. տեռատես, հետեակ, աղուէսաքուն, մեղուանոց եւն. ոսկեդարեան բառերը այնպիսի բառեր են, որ կազմուած լինելով բնիկ՝ այն է նախահայերէն արմատներից, ազատօրէն կարող էին գոյութիւն ունեցած լինել նախահայերէնում. սակայն ոչ մի միջոց չունինք այս բանը հաստատելու. աւելի եւս այն բառերը՝ որոնք ոսկեդարեան հայերէնում էլ գործածական չեն, և աւանդուած են միայն յետնագոյն ժամանակի հայերէնում, ինչպէս՝ ջրաղաց, ձիաբոյծ, ծնեբեկ եւայլն։ Ի նկատի ունենալով այս հանգամանքը, մենք անհնար համարեցինք Ոսկեդարեան բնիկ հայերէն բարդ ու ածանց ձեերը մըտցնել յիշեալ ցուցակի մէջ, թէև ծրանով նախահայերէնի հարստութեան մինիմումը աւելի եւս նուազացրինք։

Կայ նաև մի երկրորդ կարեւոր հանգամանք։

Ամէն մի մեռեալ լեզուի համար մեր աղբիւրը հնից մնացած գրականութիւնն է, Բայց աշխարհում ոչ մի հին գրականութիւն ամբողջովին հասած չէ մեզ։ Ոչ եգիպտական մեհենագիր արձանագրութիւնները, ոչ սարեստանեան բեեռագիր արձանագրութիւնները, ոչ հին թագաւորների կորած գրամները կամ մետալները, ոչ մի բան ամբողջապէս ու անվթար հասած չէ մեզ։ Սրան ապացոյց է այն, որ շարունակ պեղումները երեւան են հանում նորանոր արձանագրութիւններ ու յիշատակարաններ. մի քանի տարի առաջ Փոքր Ասիայում երեւան հանուեց 10.000 կտոր արձանագրութիւն մի ազգի մասին և մի այնպիսի լեզուով, որոնց մասին 1914 թուից առաջ ոչ մի գաղափար չունէինք։ Երկու տարի առաջ գտնուեցին պարսից Աքեմենեան թագաւորների նորանոր արձանագրութիւնները եւայլն եւայլն։ Այսպիսի գիւտեր կրկնւում են շարունակ աշխարհիս զանազան անկիւններում, երբեմն աւելի մեծ, յաճախ աւելի փոքր չափերով։

Եթէ այսպէս են քարերի ու մետաղների վրայ քանդակուած յիշատակարանները, ինչ պիտի լինէր ուրեմն թղթի վրայ գրուած գրականութիւնը, որ ենթակայ է է՛լ աւելի արագ կորուստի։ Հնութիւնը առլի է մեզ բազմաթիւ հեղինակների անուններ, որոնց գործերը չեն հասել մեզ։ Այսպէս, Զրադաշտի անուան վերագրուած Աւեստայի մեծ մասը, Արիւղենոսի, Բարդածանի, նոյն իսկ Թ. դարու հայ հեղինակ՝ Շապուհ Բագրատունու պատմական գործերը կորստեան են մատնուած։ Առհասարակ՝ Ե. դարից մինչև Թ. դար, հայերէն ոչ մի ձեռագիր յիշատակարան հասած չէ մեզ։

Եթէ գրականութիւնը պակասում է մեզ, ուրեմն պակասում են նաև այն բառերը, որոնք գործածուած են եղել գրականութեան մէջ։

Բայց եթէ նոյն իսկ ենթադրենք մի րոպէ, որ եղած գրականութիւնը ամբողջովին հասած է մեզ, գարձեալ դա բաւական չէ մի կորած գնացած լեզուի ամբողջ

digitised by A.R.A.R.@

բառագանձը երեւան հանելու համար։ Միայն կենդանի լեզուներու լաւ աշխատասիրուած բառարաններն են, որ կարող են ներկայացնել լեզուի ամբողջական բառագանձը։ Ասում եմ կարող են, որովհետեւ կա՞յ ազգ, որ կարենայ պարծենալ թէ իր ժողովրդի գործածած բոլոր բառերը, գրական թէ բարբառային, վերաբերեալ ամէն մի արուեստի ու մասնագիտութեան՝ լիովին հաւաքել է։ Եթէ այսպէս անկատար են նոյն իսկ բառարանները, ո՞ւր մնաց գրականութիւնը, մանաւանդ մի աղքատ գրականութիւն, որ աւանդուել է հնից։ Գրականութիւնը կարող է աղքատ լինել գրական արտադրութեանց թուի տեսակէտից, ինչպէս օրինակ եբրայական, գոթական, հին սլաւական կամ զենդական գրականութիւնը, որոնք ընդ ամէնը մի մի գրքով են յայտնի մեզ։ Բայց գրականութիւնը կարող է աղքատ լինել նաեւ որակի տեսակէտից, երբ նա միակողմանի է, այսինքն հեղինակները գրում են միայն մի կամ երկու նիւթի շուրջը։ Այսպիսի գրականութիւնները, նոյն իսկ քանակով հարստութեան դէպքում, աղքատ են. իսկ ի՞նչ պիտի ասել, եթէ նա միաժամանակ թէ՛ քանակով և թէ որակով աղքատ է։ Այսպէս օրինակ հին յունաց գրականութիւնը հարուստ է ոչ միայն քանակով, այլ և որակով. այնտեղ կարող ենք գտնել գիտութեան բոլոր ճիւղերի մասին զանազան գրուածքներ, բազմատեսակ բարբառներով։ Այնտեղ կը գտնենք ոչ միայն կրօն, բանաստեղծութիւն, իմաստասիրութիւն, պատմութիւն և աշխարհագրութիւն, այլ և բնագիտութիւն, բուսաբանութիւն, բժշկութիւն, ձիագարմանութիւն, ռազմագիտութիւն, որսորդութեան գիտութիւն եւայլն եւայլն։ Քսենոփոնը իր «Որսորդութիւն» անուն ձեռնարկի մէջ տուել է նոյն իսկ 47 հատ շան անուն։ Ո՞ր գրականութիւնն է հասել այսպիսի մանրամասնութեանց։ Մինչդեռ Զենդական գրականութիւնը, օրինակ, կրօնականից կամ կրօնական բանաստեղծութիւնից այն կողմ չի անցնում։

Հայոց հին գրականութիւնը այս տեսակէտից, համեմատելով յատկապէս յոյն գրականութեան հետ, շատ անբաւարար է։ Արդարև Ե. դարու առաջին կէսից հասել է մեզ միայն 33 կտոր աշխատութիւն, որոնց մէջ գտնում ենք կրօն, բանաստեղծութիւն, մի քիչ փիլիսոփայութիւն, բայց գիտութեան այլ ճիւղերի մասին... ակնարկներ միայն։ Այս բոլորը բաւական չէ, որպէսզի կարենանք Ե. դարու հայ ժողովրդի լեզուն, և նրա հետ՝ կեանքը երեւան հանել։ Ո՞ւր են Հայաստանի բազմատեսակ կենդանիների, ձկների, թռչունների, բոյսերի, խոտերի, եւայլն եւայլն անունները։ Ո՞ւր են երկրագործական, գիւղատնտեսական, ձիթահանքի և ուրիշ զանազան արհեստների վերաբերեալ բառերը։ Ո՞ւր են նոյն իսկ գիւղացիների ու քաղաքացիների մարդկանց և մանաւանդ կանանց յատուկ անունները...։ Այս բոլորից պարզ է հետեւցնել՝ որ Ե. դարից, և դեռ յետոյ էլ, մեզ աւանդուած գրականութիւնը չի տալիս մեզ հայ լեզուի ամբողջական բառապաշարը։ Այս էլ ուրեմն մի մեծ թերոյթ է՝ Նախահայերէնի պատկերը երեւան հանելու համար։

Այս վերապահութեամբ քննելով ուրեմն մեր բառացանկը, Նախահայոց քաղաքակրթութեան մասին կարող ենք հետեւեալ ուրուագիծը ներկայացնել։

Բնութեան և իր ուժերի մասին բաւական հարուստ է Նախահայերէնը. պակասում է միայն երկինք, երկիր, ծով, կայծակ, շանթ, փայլակ, եւայլն բառերը, որոնց ծագումը ո՛չ հնդեւրոպական է և ոչ էլ իրանական։ Կրօնական գաղափարների վերաբերմամբ շատ աղքատ են Նախահայերը. Նրանց միակ աստուածութիւնն է Դիք. որ հնդեւրոպական ծագում ունի. միւս բոլոր աստուածները իրանեան կամ ասորական ծագում ունին. Նոյն իսկ Աստուած բառը, ինչպէս քիչ յետոյ կը տեսնենք, փռիւգական ծագում ունի։ Պակասում են նոյնպէս կրօնական դասակարգ, ծէսեր ու արարողութիւններ նշանակող բառերը։

Առանձնապէս հարուստ է Նախահայերէնը մարմնի մասերի վերաբերեալ բառերի կողմից (57 բառ, այսինքն բոլոր տեսակների մէջ թուով ամենից աւելի), թէև հիւանդութեանց համար մեծ քանակութեամբ բառեր չկան։ Այս բանը կարելի է բացատրել բժշկական արուեստի տկարութեամբ հին հայոց մէջ. յամենայն դէպս ծանօթ են դալուկն, թանչ և մանաւանդ ջերմ, որ այժմ էլ հայ գիւղացու համար ամէն հիւանդութեան համանիշ է։ Շատ կարեւոր է գեղ բառի գոյութիւնը և ծագումը։ Այս

digitised by A.R.A.R.@

բառի առաջին և հիմնական նշանակութիւնն է «խոտ». այս իմաստով գտնում ենք գործածուած շատ հազուագիւտ կերպով՝ մեր հնագոյն գրականութեան մէջ, այսպէս՝ «Եւ խոտ նորա նուաղեսցէ եւ դեղ դալար անդ մի գտցի» (Եսա. ԺԵ. 6). «Լիզանիցէ արջառ զդեղ դալար դաշտի» (Թուոց ԻԲ. 4). «Մի եղիցէ ի վերայ նորա ամենայն դեղ դալար» (Օր. ԻԹ. 23). «Ոչ գտցի ի նմա դեղ դալար» (Եսա. ԻԷ. 10). այս բոլոր վկայութեանց մէջ դեղ դալար նշանակում է «կանաչ խոտ» և նոյն է «խոտ դալար» գործածուածի հետ. համմ. «Ամենայն խոտ դալար ի կերակուր» (Ծն. Ա. 30). «Ժողովեա զխոտ դալար» (Առակ. ԻԷ. 25). Բառիս այս հնագոյն իմաստին ապացոյց է նաև վրացերէնը, որ Ոսկեդարից մի քանի դար առաջ, այն ժամանակ՝ երբ հայերէնի բառերը ջնջուած չէին տակաւին, փոխ է առել մեզանից այս բառը՝ մդելո՝ «խոտ, դալարիք» նշանակութեամբ։ Բառիս ծագումը ցոյց է տալիս որ նախահայոց մէջ բժշկութիւնը կատարւում էր խոտերով կամ արմատներով. համմ. Լաբուբ. էջ 5՝ «Զի ոչ դեղովք և արմատովք բժշկեա զու, այլ բանիւ». Իմ. ԺԶ. 11՝ «Ոչ դեղք եւ ոչ սպեղանի բժշկեցին զնոսա»։

Նախահայերը հարուստ են նաև կենդանիների կողմից. բոլոր ընտանի կենդանիների անունները գտնում ենք նախահայերէնի մէջ. բացակայում են միայն ջորի, ցուլ, և ձկների ու թռչունների զանազան տեսակները, բացի ցին թռչունից, որի անունը հնդեւրոպական է։ Վերջին կէտը կարելի է բացատրել նրանով՝ որ ձկների և թռչունների տեսակները երկրից երկիր փոխւում են և հայերը Հայաստան գալով՝ այն տեղ միայն ճանաչեցին ու բնիկներից սովորեցին տեղական ձկների և թռչունների անունները։ Նախահայերէնը գիտէ նաև բոլոր գլխաւոր վայրի կենդանիների անունները. պակասում են միայն վագր, փիղ, կոկորդիլոս կամ նհանգ, յովազ եւայլն, որոնք չգտնուելով Հայաստանում և Փոքր Ասիայում, բնականաբար փոխառեալ պիտի լինէին ուրիշ ազգերից։ Անծանօթ է բորենի բառի ծագումը։

Նախահայերէնը հարուստ է ընտանեկան կազմակերպութեան վերաբերեալ բառերով, բայց ինչպէս հնդեւրոպական շրջանում, նոյնպէս և նախահայոց մէջ կարեւոր էր միայն արական գծի ազգականութիւնը. այս պատճառով պակասում են աներ, աներորդի կամ աներձագ, զոքանչ, քենեկալ, տալ և տալայր բառերը, որոնք հնդեւրոպական ծագում չունին, և փոխառեալ են մի անծանօթ լեզուից։

Զարմանալի են նախահայերէնի երկրագործական բառերը։ Հակառակ մեր երեւակայածին՝ նախահայերը հարուստ չեն այս կարգի բառերով. երկրագործական գործիքներից շատերի անունը, ինչպէս մաճ, խոփ, մանգաղ, գերանդի, կանդրիւ, փոցխ, տափան, ցաքան, հեծանոց, հասկի եւայլն, հնդեւրոպական ծագում չունին, ուստի չկային նախահայերէնի մէջ. նոյն իսկ այն գործիքները՝ որոնց անունը հնդեւրոպական է, ինչպէս՝ բահ, բիր, թի, երկրագործական լինելուց աւելի խաշնարածական կամ գիւղատնտեսական են։ Պակասում են նախահայերէնի մէջ բոլոր հացաբոյսերի անունները. ինչպէս՝ ցորեն, գարի, հաճար, վարսակ, կորեկ, որոնցից ոչ մէկը հնդեւրոպական չէ։ Տարօրինակ է որ սրա հակառակ՝ հնդեւրոպական ծագում ունին տունկի մասերի անունները (արմատ, բողբոջ, թերթ, կողր, կլե, ոստ, սերմն, ստեղն, մոլ), երկրագործական կեանքի համար անկարեւոր մի բոյսեր (ինչպէս՝ բող, բողկ, գինձ, գաղձ, դեղձ), և մի քանի անտառային ծառեր. ինչպէս՝ եղեւին, հացի, մայրի, կաղնի, ցախ, որոնք էլ երկրագործական արժէքից աւելի, խաշնարածի համար արժէք ունին։ Հովիւը՝ եղեւնի, կաղնի կամ մայրի ծառի հովանու տակ նստած արածացնում է հօտը. խոզերը կերակրւում են կաղնի ծառի պտուղներով եւայլն։ Ընդհակառակը՝ խաշնարածութեան վերաբերեալ բառերը շատ են ու առատ՝ (34 բառ), որոնց միացնելով նաև կենդանիների տեսակների վերաբերեալ բառերը (45 բառ), մարմնի մասերի անունները (59 բառ), ինչպէս և երկրագործական բաժնում դրուած այն բառերը՝ որոնք երկրագործական լինելուց աւելի խաշնարածական են, կը տեսնենք որ նախահայերը ոչ թէ արդի հայոց պէս երկրագործ, այլ խաշնարած ժողովուրդ էին։ Նրանք զարգացած չէին ո՛չ արհեստների և ոչ էլ մանաւանդ վաճառականութեան մէջ. այս պատճառով արհեստների վերաբերեալ շատ քիչ բառ ունինք. աւելի քիչ են վաճառա-

digitised by A.R.A.R.@

կանութեան վերաբերեալ բառերը. չափ, կշիռ և գրամի վերաբերեալ ոչ մի բառ չկայ բացի արծաթ բառից, որ թէ՛ իբրև «մետաղ» և թէ իբրև «գրամ», միակ հնդեւրոպական բառն է հայերէնի մէջ։ Ոչ միայն մանաւոր բառերը, այլ և նոյն իսկ ընդհանուր նըշանակութիւն ունեցող՝ չափ, կշիռ, գրամ, կշռել, արժել, արժան, թանկ բառերը բնիկ հայ հնդեւրոպական չեն։

Յիշենք վերջապէս որ՝ նախահայերէնը չունէր պատերազմական արուեստի, զէնքերի և պետական կազմակերպութեան վերաբերեալ բառեր (ինչպէս՝ արքայ, թագաւոր, իշխան, պետ, նախարար, սեպուհ, ազատ եւայլն եւայլն), որոնք աւելի յետոյ պիտի փոխ առնուէին իրանեաններից կամ ուրիշ ազգերից։

Այս բոլոր տուեալներից հետեւում է որ նախահայերը Հնդեւրոպական նախահայրենիքից հեռանալուց յետոյ, և նախքան Հայաստան մտնելը, կիսավայրենի մի խաշնարած ժողովուրդ էին, մօտաւորապէս քաղաքակրթական, ընկերական ու քաղաքական կազմակերպութեան այն աստիճանի վրայ, որ գտնւում են արդի քրդերը։ Նըրանք էլ քրդերի պէս ունէին աշիրէթային կազմակերպութիւն. այն խմբակցութիւնները՝ որոնք յետոյ պիտի կազմէին նախարարական տոհմերը, արդի քրդական աշիրէթների նման բաներ էին։ Նախահայոց արշաւանքը ոչինչով նման չէր թաթարական և այլ ցեղերի արշաւանքներին, որոնք հրով ու սրով, ջարդով ու կոտորածով ճանապարհ էին բաց անում իրենց առաջ, այլ իրենց հօտերի համար արօտ փնտռող քոչւորների մի տարածում էր, խաղաղ ու հանդարտ, դանդաղ, բայց միօրինակ, որ Արեւմուտքից ճանապարհ ընկնելով, հասաւ վերջապէս արդի Հայաստանի բարձրավանդակը, և այնտեղ, շրջակայ ազգերի օրինակով և իր աշխատասիրութեամբ, ստեղծեց քաղաքակրթութեան մի նոր միջավայր։

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

# ԳՐԱԽՕՍԱԿԱՆ

**ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱԼԷՊԻ ՀԱՅՈՑ**, Տեղագրական, Պատմագրական, Ազգագրական. Պատկերազարդ, Ա. Հատոր. Սուրիա, Գրեց՝ Արտավազդ Արքեպս., 1940, Տպ. «Անի», Հալեպ, էջ 1093, գին՝ 100 ֆրանք:

Հալէպի Թեմին բազմարդիւն նախկին առաջնորդ Արտաւազդ Արքեպս., իր թեմի հայութեան ազգային մշակութային անցեալ կեանքը պատկերացնող աշխատութեանց շարքին, և իր տասնըհինգ տարիներու արդիւնաւոր պաշտօնավարութեան լրումին, ի լոյս ընծայեց մագիստրոսական պատմահնախօսական աշխատանքի մը՝ Պատմութիւն Հալեպի Հայոց՝ Ա. Հատորը, 1093 մեծադիր էջերէ բաղկացած։

Բանասէր Սրբազանը նախապէս ծրագրած էր միայն Հալէպի Հայոց Պատմութիւնը խմբագրել, ու այդ ուղղութեամբ հաւաքած էր ինչ որ կրնար ծառայել իբր ատաղձ, Հալէպի հայոց պատմութեան ամբողջական կառուցումին — խաչքարերու արձանագրութիւններ՝ 1534–1934 դարաշրջանը ընդգրկող, եկեղեցական նկար, զգեստ, անօթ, ձեռագիր — և հրատարակած էր «Նկարագիր Օշին Թագաւորի Ձեռագիր Ժամագրքին», «Ցուցակ Հալեպի Ձեռագրաց» Ա. և Բ. Հատորներու, և «Պատմութիւն Հալեպի Ազգ. Գերեզմանատան», Հալէպի անցեալ ազգային կեանքի շուրջ իր գրչէն ելածները միայն յիշելով։

Սակայն Հալեպի Հայոց Պատմութիւնը կարելի պիտի չըլլար լրիւ ճանչնալ իր ամբողջութեանը ու զանազան երեսներուն վրայ, առանց Հալէպ քաղաքի և Սուրիոյ տեղեկագրութեան և պատմութեան. «չոր պիտի ըլլար Հալէպի Հայոց Պատմութիւնը առանց զայն դնելու Հալէպ քաղաքի պատմութեան վրայ, ու պիտի մնար դարձեալ չոր, առանց Սուրիոյ ընդարձակ պատմութեան, որուն մէջ պիտի փայլէր ե՛ւ Հալէպ քաղաքը, ե՛ւ Հալէպի Հայ անցեալ կեանքը»։ Ու այս արդար մտահոգութեամբ, Սրբազանը, նախապէս տուած է Սուրիան իբր խորք Հալէպի Հայոց Պատմութեան, Ա. հատորով մը. ապա Բ. հատորով պիտի տրուի Հալէպը՝ «Սուրիական անապատի

digitised by A.R.A.R.@

մէջ ցցուող այս ովասխը» ․ ու Գ․ հատորով մը, հոն ապրող Հայ գաղութը, որ «խակապէս մեծ դեր կատարած է երկրին առևտուրին, արհեստներուն և մշակոյթին մէջ», և ուր հայութիւնը ունեցեր է աւելի քան «վեց դարերու մէջ բնաւ չընդմիջուած հայ ազգային կեանք մը»։

Ազգային գաղութային մշակոյթի տեսակէտէն, ամենէն շահեկանը պիտի ըլլայ մեզի համար, անտարակոյս, Գ․ հատորով տրուելիք Հալէպի Հայոց Պատմութիւնը «որ բոլորովին ինքնայատուկ տեղ մը կը գրաւէ հայկական այլ կեդրոններու պատմութեան մէջ», տրուած ըլլալով որ Հալէպի Հայ գաղութը կազմուած է Ռուբինեան իշխանապետութեան շիջումէն անմիջապէս յետոյ, զանազան հայ կեդրոններէն փրթած փոքրաթիւ, եկւոր գաղթականութեամբ մը, բայց այլազան բարքերով ու նկարագիրներով, և որուն մէջ տիրող տարրը հանդիսացած են Ջուղայեցիք, ու այդ իսկ պատճառաւ «Հալէպի հին Հայութիւնը մինչեւ այսօր պահած է իր այս դիմագիծը, ըլլալով խառնուրդ մը շատ մը քաղաք-գիւղերու հայութեան, առանց բնորոշ նըկարագրի, առանց նոյն սովորութիւններու, բարքերու և նոյնատիպ մշակոյթի»։

Հալէպ, Կիլիկեան վերջին աղէտէն յետոյ եւս իր ծոցին մէջ հիւրընկալեց գաղթական հոծ հայութիւն մը ամէն կողմերէն, ու Սուրիահայութեան համար եղաւ կարեւոր կեդրոն մը, ու իր այս հանգամանքով, անոր անցեալ և ներկայ հայ կեանքը և պատմութիւնը խորապէս կը հետաքրքրէ մեզմէ իւրաքանչիւրը։ Շատ բան չէ գրուած ցարդ Հալէպի հայութեան մասին։ Արտաւազդ Սրբազան, առաջինը եղաւ, որ փոշիներու մէջէն, կը կանգնէ ահաւասիկ մեծ գաղութի մը հայ անցեալ կեանքը, անոր պատմութիւնը, իր աւանդութիւններով, բարքերով, նիստ ու կացով, մշակոյթով, զոր հայրենազուրկ հայութիւնը ապրեցաւ իր քաղաքական երազներուն փլուզումէն ու անկախութեան խորտակումէն յետոյ, այդ օտար հողերու վրայ, ուրկէ քայլ մը անդին, Տաւրոսի բարձունքներուն վրայ իր նախնիքները ապրեր էին Միջին դարու հայ դիւցազնավէպը։ Ու այդ պատմութեան սովորոյթներուն, բարքերուն մէջէն, Սրբազանը կ'ուզէ բռնել այս ժողովուրդի ոգին՝ թաղուած այդ ամենուն մէջ, բայց կենդանի, որ մերթ դիւցազնական մարտնչումներու կրակը վառեր է այս ժողովուրդի ծոցին մէջ, մերթ քաղաքական գահավէժ դէպքերու դասաւորումով՝ խաղաղ համակերպումի քաղաքականութիւնը թելադրեր․ մեր ժողովուրդի ազգային գիտակցութեան ամենէն շեշտուած վիճակներէն մին եղած է իր սէրը դէպի իր պատմութիւնը, վասն զի պատմութիւնը, ժողովուրդի մը ոգիին երկարաձգումն է դարերու ընդմէջէն․ ու այս ժողովուրդը քալեր է ու պիտի քալէ դարերու անվերջանալի ճամբան։ Պէտք է գուրգուրալ ամէն փշրանքի վրայ, ուր այս ժողովուրդէն կայծ մը կայ թաղուած, ու համբուրել այն ձեռքերը որոնք պատմութեան ձեւին ներքեւ կ'ուզեն ջահերու վերածել այդ կայծերը․ ու Արտաւազդ Սրբազան մին է անոնցմէ, իր այս գործին մէջ։

Հալէպի Հայոց Պատմութեան Ա․ հատորը՝ Սուրիան, կը բաղկանայ Հինգ գլխաւոր մասերէ և ստորաբաժանումներէ․ Ա․ Մասին մէջ, 1–178 մեծադիր էջերով, կը տրուին հանգամանօրէն ու գիտական տըւեալներով, Սուրիոյ բնական աշխարհագրութիւնը, երկրի կլիման, ջրագրութիւնը, բուսական ու կենդանական աշխարհը (flore և faune) երկրաբանութիւնը, հանքաբանութիւնը։ Բ․ Մասը կ'ընդգրկէ 179–328 էջ, Սուրիոյ տնտեսական աշխարհագրութիւնը, ծանրանալով Սուրիոյ երկրագործութեան վրայ — Սուրիա ամենահին ժամանակներէ ի վեր եղած է առաւելապէս երկրագործական երկիր մը — անասնապահութիւնը, «կարաւաններու» վաճառականութիւնը, և Սուրիական ճարտարարուեստը։ Գ․ Մասը՝ 328–453 էջ, կը խօսի, Սուրիոյ քաղաքական աշխարհագրութեան, բնակչութեան, կրօնական համայնքներու, Սուրիոյ պետական կազմի, դատարաններու, ելեւմտական դըրութեան, հանրային կրթութեան, հնութեանց ու գեղարուեստի, ու այլ վարչական գործօններու մասին։ Սուրիոյ անապատին պէտէվինները՝ կը կազմեն գրքին վերջընթեր մասը, 451–507 էջ․ չափազանց հետաքրքրական գլուխ մըն է, ուր գրական կուռ էջերով կը տրուին մեզի պէտէվիններու բարքերն ու սովորութիւնները, անոնց նիստ ու կացը, կրօնական նախապաշարումները, ընտանեկան, ընկերային կեանքին չափա-

digitised by A.R.A.R.@

դանց հետաքրքրական կողմերը, որոնք անապատին յատուկ են, և կը յիշեցնեն աստուածաշնչական նահապետներու օրերը. շատ քիչ՝ չըսելու համար ոչինչ՝ փոխուած է անապատի մէջ Աբրահամի օրերէն ի վեր։ Գրքին վերջին և ընդարձակագոյն մասը՝ լայնօրէն կուտայ մեզի Սուրիոյ պատմութիւնը հնագոյն դարերէն մինչև Օսմանեան տիրապետութեան անկումը։ Սուրիան՝ Միջերկրական ծովուն ու Անապատին միջև սեղմուած այս երկիրը, կանգնած՝ հին աշխարհի երեք ցամաքներու քառուղիին վըրայ, ծառայած է իբր կամուրջ Արևելքէն Արևմուտք, Հարաւէն Հիւսիս խուժող բանակներու։ Իր բնական այս դիրքը նպաստաւորած է երկրի վաճառականութեան, ու զայն դարձուցած մեծ շահաստան մը. բայց միւս կողմէ, եղած է չարիք մը։ Իր հարըստութիւնն ու բնական դիրքը, ախորժակը սրած են աշխարհակալներու, որոնք իրարու ձեռքէ, յաջորդաբար խլած են այս երկիրը. «Սուրիոյ պատմութիւնը պէտք չէ բնաւ նկատել իբր պատմութիւնը անկախ պետութեան մը, ու փնտռել հոն մեծութիւններ ու քաջութիւններ անկախ ազգի մը»։ Այդ երկրէն անցած են քաղդէական, հիթիթական, եգիպտական, ասորեստանեան, բաբելական, մարական, մակեդոնական, սելևկեան, հայկական(*), հռովմէական, բիւզանդական, արաբական, խաչակրաց, մէմլուք, օսմանեան, ֆրանսական և անգղիական բանակներ, հին և նոր աշխարհներու հզօրագոյն պետութիւններ։

Ահա այս մեծարժէք, պատմական հընախօսական գործին մէկ անփոփ նկարագիրը։ Բանասէր ու պատմագէտ Սրբազանը, գրագէտի իր շնորհն ալ խառնած է գործին, զայն ընելու համար աւելի շահեկան, հեռու՝ իր գործը, Վենետիկեան հայրերու — Ինճիճեան, Ալիշան — նմանօրինակ գործերու տժգունութենէն, ուր կը գտնենք խոր հմտութիւն եւ լայն ծանօթութիւն, բայց ոչ արտայայտութեան գէթ տանելի և հանդուրժելի ոճ մը. պատմութիւնն ալ իրեն յատուկ ոճ մը ունի, որ շատ մօտիկն է գրական ոճին. այդ կերպը արհամարհած են Վենետիկեանք, և անով՝ տուժած իրենց գործը, մեծապէս. Արտաւազդ Սրբազանի գործը շահած՝ ընդհակառակը։

Տակաւին, տարբեր բան է ճոխ մատենագարանով, քարտէզներով, փորագրութիւններով երկիր մը ճանչնալ, ժողովուրդ մը ուսումնասիրել, փակուած չորս պատերէ ներս, ինչպէս ըրած են առհասարակ Մխիթարեանք, ու բոլորովին տարբեր՝ այդ երկիրը չափել քայլ առ քայլ, կոխկռտել ոտքերով, քարտէզի տեղ հողն ու ջուրը ունենալ, արձանագրութեան տեղ՝ կենդանի ու սեփական շփումը այդ քարերուն հետ։ Արժանիքներ՝ որոնք թանկագին և օգտակար կ'ընծայեն գիրքը, ինչպէս է Արտաւազդ Սրբազանինը, որ կը լրացնէ վերոյիշեալ պայմանները։

Վարչական այնքան ծանր զբաղանքներու մէջ, որոնք իր կորովը ու ժամանակին մեծագոյն մասը սպառելու կը բաւեն արդէն, Սրբազանը, չես գիտեր ուրկէ, կը գտնէ ժամանակ, հրատարակելու պատմահնախօսական ստուար հատորներ, որոնք ուրիշներու քով, վարչական տաղտուկէ ազատ լայն պայմաններով միայն երաշխաւոր են։

Մենք յարգանքով կը սպասենք յաջորդ երկու հատորներուն ալ, որոնք, կասկած չունիմ այդ մասին, պիտի գան լեցնել մեծ պարապ մը գաղթաշխարհի պատմութեան ամբողջական կառուցումին մէջ։

ԱՐԹՈՒՆ ՎԱՐԴԱՊԵՏ

(*) Սուրիոյ վրայ հայկական տիրապետութիւնը սկիզբ կ'առնէ Մեծն Տիգրանի օրով, 83ին (Ն. Ք). երբ երկրին Սուրիացի տէրը, դժգոհ սելևկեան հարկահան իշխաններու ներքին պառակտումէն, հրաւիրեց Մեծն Տիգրանը տիրել Սուրիոյ, ինչ որ օտար չէր նաև Մեծն Տիգրանի ծաւալողական ծրագրին. արշաւեց Սուրիա, Անտիոքի ու Դամասկոսի մէջ իր անունով դրամ կտրեց, ու ապա արշաւեց Պաղեստին։ Սուրիոյ վըրայ Մեծն Տիգրանի տիրապետութիւնը տևեց 18 տարի, ըստ Ապպիանոս պատմիչի, Բագարատ հայ փոխարքայի կառավարութեամբ, և Ասորւոց բազմաչարչար երկիրը 18 տարի հանդարտութիւն վայելեց։

digitised by A.R.A.R.@

# ԴԻՒԱՆ ՍՈՒՐԲ ՅԱԿՈԲԱՅ

## ԼԲ

(Ընկալագիր տասն հազար ասլանլու ղրուշի):

*Պատճառ ձեռագրիս այս է, որ ես Համթեցի Խօճա Մալիճանի քոյրորդի Կարապետս՝ կամակցութեամբ քեռորդոյս Աղամ Չէլէպուն թվին ՌՃԺԵ (= 1666) ի քաղաքն Ըստամպօլ վէքիլ եղէ առաջի բազմաց Պէլըրղացի Աբրահամ Չէլէպուն եւ նորին Աբրահամ Չէլէպուն փոլիցային, այսինքն ձեռագրովն, եկի ի սուրբ քաղաքն Երուսաղէմ դեկտեմբերի ամսոյ ի Ա. եւ ի նոյն օրն առեալ ընկալայ ի մէջ Սուրբ Յակոբայ վանացն ի Տէր Եղիազար հոգեւոր տիրէն [յ]անուն Աբրահամ Չէլէպուն տասն հազար երեսով ասլանլի ղռշ., զի վասն դրամի եղև փութանակի գալուստն իմ. եւ ետու զայս թուղթս վանից խոստովանահայր Տէր Առաքելին իւր գրովն Տէր Եղիազար հոգեւորտիրին, զի ի դիպող ժամուն տեսողացն հաճոյ լիցի. բաւ է։*

*Սորին վկայք այս են.*

*ՆԵՐՍԷՍ ԵՊՍ. ԿԵՍԱՐԱՑԻ ԱՄԻՐԽԱՆԻ ՈՒՐՀԱՅԵՑԻ ՄԱՐԿՈՍ ԵՊՍՆ. ՈՐԴԻ ԿԱՐԱՊԵՏ*

## ԼԳ

(Ապրօ Չելեպի առ Եղիազար կաթողիկոս):

*Հասցէ յերկրպագութիւն գարշապարին սուրբ Եղիազար կաթողիկոսին ամենայն հայոց։ Պէնըմ էֆէնտըմ սուլթանըմ, Տիարպէքիրտէն եազըլան մէկթուպի չէրիֆընըզ պու գուլընըզա վասըլ օլուփ, վէ պույուրմիշսընըզ քի Մարտիրոս Թէքրար մուքարէրէթի կօրտըմ, լաքին օնըն էմրի սէնին պէրաթըն պօզամազ, զիրա պէրաթ պէրաթի պօզար էմմա՝ նէ լէյըմ սիզ ելընըզտէքի պէրաթի իշլէթմայ կատըր տէկիլսընըզ, քօրքարսընըզ. հէլայ օյլէ օլմիշ նէ յապըմ։ Շինտի պիզ Թէքրար մքարար էթսէք յէրի տէկիլ տըր, քօյ տուրսուն. վէզիրէազէմ չըքաչակընայ եաքըն էա՛ տէրըզ, վէ սիզի Ըստամպօլայ կէտասընըզ տէի ըճեայ էթմիշ օլ քօփէքլէր։ Չէնէհա՞ր, զէնէհար, կիթմէսընըզ, օթուրըն Ուրֆայտայ, Հէլէպտէ սակըն օլուփ պիզ չիքինչէ։ Աստուած իւր աջովն քեզ պահապան լինի. եկեր պիր մազուլ իլէ խաղաղութիւն էտէ պիլըրսէն զՄարտիրոսէ՝ յէլան չալըշընըզ Մարտիրոսի զօլունըզզայ ալմայ. եօխսէ սաքըն վէ սէքըն Ըստամպօլայ կիթմէն. էկար Ըստամպօլայ կէլըրսէնըզ կաթլանըն զատիկտէն սօնկրայ թազաւոր Սէլանիկէ յէնկիչէհրայ կէլաճակտըր, օլ զաման Ըստամպօլայ կէլըրսընըզ, պէլքի էլամ չէքըլմէզ։ Ապայ քանի որ թագաւորն էտրանայ է, Ըստամպօլ մի գնար։ Դարձեալ իմ հոգուս հոգի, երբոր գիս քո չար պատահման դէմ էս դրեր, ինչո՞ւ համար զիմ ըստակն չես ղրկեր, ո՞ւր է քո իխրարն, ո՞ւր է քո ղօվլն, հէլպէթ հէլպէթ զիմ ըստակն ղաթըրճի Սէֆարին հետն ղրկեա Ըստամպօլ, որ որդւոյս Մաթոսին թէսլիմ լինի, թէ նորն թէ հինն. իմ աչաց լո՛յս, ինծի զուլում արիր, այսչափ ժամանակ է զիմ ըստակս պահեցիր. ես քենէ զայս ումիչ չէի աներ. ապայ ձեռնէս ի՞նչ կուգայ, էմրն Աստուծոյ է։ Թէ որ իմ կողմն հարցանես, ես զքեզ քանի ի մարմնի կամ՝ ձեռաց չեմ թողուր, մինչ քո սուրբ աղօթովն Քրիստոս յօգնութիւն անէ։ Դարձեալ իմ հայր սուրբ, Հալպայ Ղանտի զատայէին համար, որ կօմրուկի քէթիպ լինի գրեր ես, ան կու լինի, կ'անեմ կու ղրկեմ, բայց ան էսամին կու վախեմ որ չի լինիր։ Մինչեւ հիմա երկուքն այլ գրեանքն կու ղրկէի, ապա, հայր սուրբ, չորս ամիս ծանր հիւանդութիւն քաշեցի, քան օր է որ ոտից վրայ եմ ելեր. դուն գիտես որ ես քո բանին պատճառովն անցայ այս ղարիպութիւնս կու քաշեմ, թէ ոչ ասուտուր չկայ, ինչ բան ունիմ հոս։ Ըստամպօլ կ'երթայի, ապա խայմախամէն կու վախեմ։ Պունտան սօնկրայ այս ինչ խնամփուզութիւն է որ քո հրամանքդ իմ ըստակն չես ղրկեր. բաւ է։ Իզաթլի ճանի ազիզըմ, օկլըմ, սուլթանըմ Սուքիաս հայրապետէ իշտիյաքլէր իլէ, տէրուն հասրաթ իլէ սէլամ օլունուր. պէնըմ իչըն հոգեւորտիրէ սօլայմըսըն քի պէնըմ անչէմի կօնտուրսըն. խաչ խաչ ոսկըր սէմ պէն սէնին իլան սօլաշըրըմ։ Ձեր ամէն փոքրաւորաց երկրպագութիւն։*

*Գրեցաւ Փետրվարի ժթ. [1667]. Պէնտէի Աբրօ։*

digitised by A.R.A.R.@

## ԼԴ

(Երուսաղէմի միաբանն առ Եղիազար կաթողիկոս ի Տփխիս)։(*)

*Սրբազան հօրդ մերում եւ լուսաւորչածին երամոյս, վեհիդ տանս սրբոյ միաբան ծառայք քո խոնարհեալ, երեսս ի գետնի եդեալ եւ ընդ երկրաւ մածեալ՝ մատուցանեմք ողջոյն եւ համբոյր յերկնաչու սուրբ փարչապարացդ եւ հարցանեմք զորպիսութենէդ քումմէ, զճանապարհի յոգնաչխատ կրից եւ պաշխատանացն, զոր եւ Աստուածն ամենայնի տէրն մեր Յիսուս Քրիստոս բարեաւ եւ խաղաղութեամբ յաջողեսցէ զառաջիկայ գործս եւ զուղեգնացութիւնս քո, և զդարձն քո շնչաւորի յաջողութեամբ ժամանեցուսցէ առ տարագրեալ որդեակդ քո։ Բայց առ սակաւ յետ գրիս՝ զայս ծանուցանեմ քանզամենեսին յետնեալ ծառայ քո Եղիա, զի յորժամ ելեալ ի Տէր Մինասի պաղչիցն՝ գնացիր, ի նոյն պահն Հալպայ գիրն եկն հրամանուցդ. կնքեալ էն ի վերան գրեալ լատին եւ հայ գրով՝ թէ ի ձեռս քո հասցէ անբաց յումեքէ, եւ սայլին Թուանգաց լինելոյ յաղագին՝ տարեալ ի վէքիլն էր տուեալ, եւ ի միւսում օրն վաղվաղակի թարճիմանի ձեռամբ ի Ծնունդն էին ուղարկեալ, կարծելով՝ թէ դու ի Ծնունդն ես, և ոչ գտանելն զքեզ ի տեղն՝ մեք շատ ասացաք՝ թէ տուէք որ մէկ մի ճարենք ողարկենք. չլսեցին՝ թէ մինչ որ չիմանանք զտեղն որ ի նա թէօլիմ անենք, մարդոյ չենք խտար. վասն որոյ այսքան եղեւ յամեալն գրիդ. եւ փետրուարի իդ. օրն դշբթի. եկն հրամանուցդ օրհնութեան գիրն եւ պատուէրն, ապա թէ իմացաք ուր գնալդ եւ ուր լինելդ, եւ մինչ ցայն վայր ոչ ոք գիտէր։ Եւ ապա վէքիլն կրկին սայլի բռնեալ ուղարկեաց զգիրն առ քեզ եւ բնաւին չկարացաք իմանալ մեք՝ թէ զի՞նչ գիր է եւ կամ ուստի՞ է, թէ հնար իցէ՝ ծանուցես ծառայիս քո, հա՛յր սուրբ։ Եւ քանի որ հրամանքդ գնացեր ես՝ երեք չորս անգամ գիր եկաւ ի Շամայ Սարգիս իրիցուէն, Կլիմպօզի Շամ գնալն և ի քեահիեան մոնուլն, աւելի պակաս հաչմէլն, եւ կամ թէ քեօռ չանն եւ հոմանեացն չարախօսելն ի քէն, եւ կամ թէ Ըստամպօլու Մողա պիղծն եւ այլքն նման նորա գիր գրելն ի Շամ՝ թէ տեսէ՛ք եւ իմացէ՛ք մեսոն եփե՞ց մի եւ փաշան քանի՞ քիսա ճուռում առաւ յիւրմէն եւ զգատիկն յԵրուսաղէմ կանէ կու մընա՞յ մի։ Այսպիսի գրեր նոքա Շամ ուղարկեն եւ սոքա ի Շամայ զպատասխանին յԸստամպօլ կ'ուղարկեն։ Եւ եւս յանուարի իե. կրկին յԸստամպօլ սոցա ի Շամ գիր եկեր՝ թէ ի՞նչպէս արիք. սոքա ուլախով թէքրար թուղթ են գրած՝ թէ երեք չորս անգամ փաշան չաւուշ թային արար ի վերան՝ չկարաց բերել էր. բայց շատ գրամէ հանեցին չաւուշնին զինքն։ Եւ դարձեալ Սարգիս երէցն գրեր էր՝ թէ Սուլէյման աղան քո ղայրէթն շատ քաշեց, վեց քիսա սուլֆ արար, թէ զվեց քիսան ուղարկես՝ քեզ բաղում շահ կու լինայ. քո գնալն դեռ չգիտէին մինչև ցայժմ, եւ յաւուրս ի վեր ոչ գիտեմք թէ այլ ինչ գիր եւ գրուց տի գայ, յորժամ լսեն զգալն քո։ Եւ տեղացս մօլլան, երկրորդում աւուրն յորժամ հրամանուցդ գնալն ձայնեց, եւել պակաս գրուց շատ ասաց. երբեմն ասաց՝ թէ ինչո՞ւ ինձ տանըշմիշ չեղեւ, որ նորա արզ մէհսէր տայի, եւ երբեմն դարձաւ՝ թէ ֆիրար էթմիշ, հօճէթ իտէրիմ. մինչ որ գնացաք ի Յունաց պատրիկն, որ նա զթէրճիմանք ուղարկեց մէհքէմէն, երեք չորս օր մօհլէթ առաւ, մինչ իմանանք՝ թէ յո՛ւր է եւ կամ խապէր մի առնունք, եւ թէ զերեք օրն անցնին՝ ես եմ նորա տաւաճին, զի լծակից իմ է։ Եւ յետ երեք աւուրն տեսաք որ չէր լինար, մէկ՝ որ ուխտաւորք եկին յիսուն վաթսուն հոգի, եւ մէկ այլ՝ որ նա ի վերայ տանս լեզու կ'արձակէր. հարկեցին միաբան եղբարքս, տարան Յունաց մեծի մօտն եւ ասին՝ թէ գիր եհաս ի մեր մեծէն, որ զսա վէքիլ անէք, ապա թէ գնացաք մօտ ի մօլլան հանդերձ Յունաց թէրճիմաններովն՝ թէ ահա՛ այսուհետեւ Հայոց վանից վէքիլն սա է, իւր մեծէն հրաման սորա է եղեր վէքիլութեան, ապա թէ զձայնն կտրեց։ Եւ այժմ հրամանաւ Տեառն իմում, թէ՛ ծառայ քո եւ թէ այլ եղբարքս իմ ի վերայ պատուիրեալ հրամանացդ կամք աւանիկ ծառայութեան մտերմաբար սիրով հոգւով չափ։ Եւ զուխտաւորաց ճանապարհի էհվալն վասն խաֆարի՝ բնաւ մի՛ հար-*

(*) Ընդօրինակութեան մէջ նամակիս վերնագիրն է. «Երուսաղիմայ միաբանից գիրն է, որ եկն ի Տփխիսթ»։

digitised by A.R.A.R.@

*ցանէր, թէպէտ գիտակ իսկ ես, ամա այսպիսի եղեալ ոչ էր իսկի, քանզի մարդոյ գլուխ գերեսունն անցեր եւ Համա՝ Համուս թալաններ են, Համուս՝ ութ, և Համա՝ հինգ եւ պծեծն աւելի ի վերայ նոցա. հրամանքդ գիտես, ճար մի արա։*

*Գրեցաւ փետուարի ժդ. յաւուր Տեառնընդառաջի [1667]։ Անարհեստ յետնեալ Նիկօլս՝ այսք թուրապիս մի մռանայր։ Ըստամպօլու Աստուածածնայ ժամուն երեսփոխան Քրիստոսատուրի տաճիկ եղբայրն, որ Մորայ խաղնայի հետն էր, խաղնա աղասուն քէհիին քէհեան է, եկաւ յԵրուսաղէմ յԸստամպօլու, մէտաւու մի հանեց՝ թէ երեք չորս անէմ կախեցին. զուտն եւ գիրաւն ոչ գիտեմք եւ ոչ պատճառն։*

Հրատարակեց՝ Մ. Ե. Ն.

ՈՒՂՂԵԼԻՔ. — 1940 տարւոյ Սիոնի մէջ երես 315բ. տող 38՝ **Վարդանէ** կարդալ՝ **Վարդանես**։ Երես 317բ. տող 44՝ **անուն մի** կարդալ **անուն իմ**։ Երես 318ա. տող 23՝ **գիտեմ** կարդալ **գտանեմ**։

---

## ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Սուրբ Աթոռոյս Ամենապատիւ Ս. Պատրիարք Հայրը 1941 Յունուար 16 եւ 17 թուականով հետեւեալ երկու հեռագիրները ընդունեցաւ Ամենայն Հայոց Հայրապետութեան Տեղակալ Տ. Գէորգ Արքեպիսկոպոսէ՝ Երեւանէն տրուած.

*«Կը խնդրենք հեռագրել Փարիզ՝ Խամէրեանին, որ անմիջապէս կատարուի Եւրոպայի թեմերու երեք պատգամաւորներու ընտրութիւնը: Հետեւանքի մասին տեղեկացուցէք՝ հանդերձ լուսաբանութեամբ»:*

*«Կը խնդրենք հեռագրել Գահիրէի, Պաղտատի, Աթէնքի, Սէլանիկի եւ Մարսէյլի առաջնորդարաններուն, որ անմիջապէս ընտրեն իրենց պատգամաւորները: Հետեւանքի մասին հեռագրով տեղեկացուցէք Էջմիածին՝ հանդերձ լուսաբանութեամբ»:*

Ս. Պատրիարքը Տեղակալ Սրբազանի այս յանձնարարութեանց համաձայն, հեռագիրներ ուղղեց յիշեալ առաջնորդարաններուն եւ Փարիզի Եկեղեցական Վարչութեան ատենապետ Տիար Պօղոս Էսմէրեանի, որ ներկայիս կը գտնուի Վիշի, եւ այս մասին հեռագրով տեղեկացուց Ս. Էջմիածին:

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ԼԱՆՋԱԽԱՉԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ

Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, 16 Հոկտ. 1940ին, լանջախաչ կրելու արտօնութիւն շնորհած էր, 1934ին՝ Հոգելոյս Տ. Թորգոմ Պատրիարքէն վարդապետական ձեռնադրութիւն ընդունած չորս միաբան վարդապետներէն (Պարոյր Վրդ. Մինասեան, Յուսիկ Վրդ. Աւետիսեան, Պսակ Վրդ. Թումայեան եւ Միւռոն Վրդ. Կրնիկեան) վերջին երեքին: Հոգ. Տ. Պարոյր Վրդ., Կիպրոսի Մելգոնեան հաստատութեան Հոգեւոր-Հովիւ, եւ գաղութին առաջնորդական փոխանորդ եղած միջոցին, ընդունած էր արդէն լանջախաչ կրելու արտօնութիւնը, Երջանկայիշատակ Տ. Սահակ Վեհ. Հայրապետի հրամանաւ, եւ Ս. Աթոռոյս Ամեն. Ս. Պատրիարք Հօր հաւանութեամբ:

---

### ՏՕՆԱԿԱՆՔ ԵՒ ԲԵՄԱԿԱՆՔ

✻ 1 Դեկտ. Կիր. — *Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետս։ Քարոզեց Տ. Պարգեւ Վրդ.՝ բնաբան առնելով հետեւեալ խօսքը. «Զի օրէնքն ի ձեռն Մովսիսի տուան, շնորհք եւ ճշմարտութիւն ի ձեռն Յիսուսի Քրիստոսի եղեն»։ Ցոյց տուաւ Հին Օրէնքը իբրեւ աստուածային պատուիրաններու ամբողջութիւն, իսկ Նորը՝ գերազանց միջոց փրկութեան և ազատագրման։ Նոր Ուխտը հոգեւոր առաքինութեանց գործադրութիւնը կը պահանջէ։ Օրէնքը պահելով՝ յարգած կ'ըլլանք մեր ներքին եւ բարոյական կեանքը։*

✻ 4 Դեկտ. Դշ. — Ս. Կուսի Ընծայման *տօնին առթիւ, Միաբանութիւն եւ աշակերտութիւն, հակառակ աննպաստ եղանակին եւ անձրեւին, չքերթով իջան Գեթսեմանիի ձորը։ Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ կատարուեցաւ «Հրաշափառ»ով մուտքը Աստուածածնայ Տաճարէն ներս։ Ապա մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ. որու ընթացքին քարոզեց Տ. Սերովբէ Վրդ.՝ բացատրելով ընծայաբերութեան նշանակութիւնը իբրեւ խորացում Աստուծոյ կամքին, իբրեւ պատրաստակամութիւն՝ տեղ տալու, իր սրտին մէջ, Աստուծմէ բխող զգացումներու։ Եւ ներկայացուց Ս. Կոյսը իր առօրեայ կեանքին մէջ իսկ, ուր իր խօսակցութիւնները Աստուծոյ զգացումով են լեցուած, որուն պատճառաւ իսկ արժանի եղաւ հաւատացեալներու եւ Աստուծոյ Որդւոյն մայրութեան պատիւին։*

✻ 8 Դեկտ. Կիր. — *Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յակոբ։ Քարոզեց Տ. Շաւարշ Վրդ.։*

digitised by A.R.A.R.@

Պատմելէ յետոյ ագահ մեծատան պատմութիւնը, դասեր հանեց, ըսելով՝ ագահութիւնը մոլութիւն է, որ անձնասէր կը դարձնէ մարդը, անտեսել տալով իր շուրջինները, և միայն իր անձին բարիքին մէջ սահմանափակելով անոր մտածումը։ Մարդուն մէջ բնազդներ կան, ըսաւ, որոնք պէտք է արժէքի վերածուին և ներդաշնակուին։

✱ 15 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն։ Քարոզեց Տ. Եղիշէ Վրդ. բնաբան առնելով Առաքեալին խօսքը՝ «Յիսուս Քրիստոս, երէկ և այսօր, նոյն՝ և յաւիտեան»։ Ներկայացուց քրիստոնէութիւնը իբրև յաւերժութեան կրօնքը, և Յիսուս՝ մարմնացումը այդ կրօնքին, իր խորհուրդին մէջ, նոյն՝ երէկ, այսօր և յաւիտեան։

✱ 22 Դեկտ. Կիր. — Յղութիւն Ս. Աստուածածնի ի յԱննայէ. երէկ կատարուած էր նախատօնակ, Ս. Յակոբայ մայր տաճարին մէջ, կիրակմուտ ժամերգութենէն վերջ։ Այսօր, հանդիսաւոր երթով, Միաբանութիւնն ամբողջ, Գեթսեմանիի ձորը իջաւ, Ս. Կուսի գերեզմանին վրայ կատարելու համար մատուցումը Ս. Պատարագի, յետ «Հրաշափառ»ի պաշտօնական մուտքին. տեղատարափ անձրևին պատճառաւ, մեծ չէր թիւը հաւատացեալ բազմութեան։ Ս. Պատարագի ընթացքին քարոզեց Տ. Հայրիկ Վրդ. «Ո՛չ ապաքէն դուք տաճար Աստուծոյ կենդանւոյ էք» բնաբանով. եւ ներկայացուց Ս. Կոյսը իբրև գերազանց անօթը՝ ընտրուած՝ զԱստուած իր մէջը ընդունելու, քանի որ ան կրցած էր ինքզինքը դարձնել արժանաւոր տաճար, ուր կարենար բնակիլ կենդանի Աստուածը։

✱ 28 Դեկտ. Շբ. — Տօն Սրբոյն Յակոբայ Մծբնայ Հայրապետին. Նախորդ երեկոյին կատարուած էր նախատօնակի հանդիսաւոր արարողութիւնը։ Այսօր, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Գլխադրի մատրան մէջ, նոյն հանդիսաւորութեամբ. սկիհն ու պատարագի սպասը վերաբերուեցան՝ Աւագ խորանի առջև, քօղով պատրաստուած շարժական սեղանին վրայէն։

✱ 29 Դեկտ. Կիր. — Ս. Պատարագ ի Ս. Յակոբ. քարոզեց Տ. Եղիշէ Վրդ. «Յիշեա՛ որդեակ...» բառերէն մեկնելով՝ անդրադառնալու համար անցեալին։ Ներկայացուց պատմութեան անցեալին մէջ իրագործուած արժանիքներ, քաղաքակրթութիւններ, ցոյց տալու համար թէ կ'արժէ երբեմն կենալ անցեալին դիմաց, ընել հաշուեկշիռը անցեալին, տեսնալու համար թէ ի՞նչ է մնացեր ապրուած կեանքէն։ Յիշել անցեալը, կը նշանակէ գիտակցիլ թէ ինք կը պատկանի ազգի մը և եկեղեցիի մը, որ արժանիքներ է իրագործեր պատմութեան մէջ, և հպարտ ըլլալ անով, ու ջանալ շարունակել անոնց գիծն ու գործը։

✱ 5 Յուն. 1941, Կիր. — Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն։ Քարոզեց Տ. Պարոյր Վրդ. «Արք երկու ելին ի տաճարն կալ յաղօթս» բնաբանով։ Այդ երկուքը, ըսաւ, ներկայացուցիչներն են աղօթողներու երկու խումբերուն։ Այսօր ալ կան մարդիկ որոնք առօրեայի հոգերով կը մտնեն տաճար՝ աղօթելու։ Իրական աղօթողը ա՛ն է, որ կը գիտակցի իր մեղքերուն, և անոնց ծանրութենէն ինքզինքը թօթափել կը ջանայ ի՛ր իսկ ձեռքով, և ոչ թէ զայն բարդելով այլոց շալակին։ — Երեկոյին, կատարուեցաւ նախատօնակը Դաւթի Մարգարէին և Յակոբայ Տեառնեղբօր, հանդիսաւոր Հրաշափառով, Ամեն. Ս. Պատրիարք Հօր նախագահութեամբ։

✱ 6 Յուն. Բշ. — Տօն Առաքելական Ս. Աթոռոյս. Ս. Պատարագ մատոյց ի Ս. Յակոբ, լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. և քարոզեց «Հաւատք առանց գործոց մեռեալ են» բնաբանով։ Ցոյց տուաւ թէ կեանքի և մարդկային պատմութեան մէջ, անհատական ամէն գործ և յառաջդիմութիւն, արդիւնք են եղած հաւատքի։ Քայքայումը կեանքին, կը սկսի այն վայրկեանէն, երբ կը դադրի հաւատքի ներգործումը ազգերու համերաշխ կենցաղավարութեան մէջ։ «Հաւատք»ը՝ իբրև վստահութիւն, կամ «հանգանակ»ի հանդէպ յարգանք, պէտք է զօդուի սիրոյ՝ այսինքն նուիրումի, զոհողութեան գաղափարին՝ գործին։ Արդ, բարեմաղթութիւններ ըրաւ Ս. Աթոռոյ ծաղկումին, և Միաբանական Ուխտին յարատևութեան, և Ամեն. Ս. Պատրիարք Հօր արևշատութեան համար։ — Առաւօտուն՝ «Փառք ի բարձունս»էն առաջ, ըստ սովորութեան, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ եպիսկոպոսական զգեստաւորմամբ, անցաւ Ս. Յակոբոս Տեառնեղբօր Առաքելական Աթոռին առջև, մինչև «Արարչական» երգին աւարտումը։ Տարին անգամ մը, միայն այս տօնին, և վերոյիշեալ միջոցին, Ս. Աթոռիս գահակալները կը բազմին Տեառնեղբօր Աթոռին վրայ։ «Քրիստոս Աստուած մեր» մաղթանքի ընթացքին, օրուան սուրբերու յիշատակումին առթիւ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը յատուկ մաղթանքներ ըրաւ Ս. Աթոռոյս պայծառութեան համար, որմէ վերջ, ներկայ եկեղեցական դասը՝ վարդապետք, սարկաւագունք և դպիրք, մօտեցան ի համբոյր Ս. Հօր Աջին։

✱ 7 Յուն. Գշ. — Ս. Ստեփանոս. Երէկ երեկոյ՝ նախատօնակին, այսօր առաւօտ՝ ժամերգութեան և Ս. Պատարագի ընթացքին, Ս. Աթոռոյս սարկաւագները — թիւով 8 հոգի — վայելուչ հանդիսաւորութեամբ պանծացուցին տօնը իրենց մտատիպար՝ անդրանիկ և նախավկայ սարկաւագին՝ Սրբոյն Ստեփանոսի, գլխաւորութեամբ Հոգ. Տ. Տ. Շնորհք Վրդ.ի և Շահէ Աբեղայի, որոնք հրաւիրուած էին՝ Հայֆայէն։ — Երեկոյին, ժառ. Վարժարանի ճաշասրահին մէջ, սեղան մը տրուած էր սարկաւագաց տօնին առթիւ. ուսանողութեան հետ ներկայ էր նաև Վարժարանի եւ Ընծայարանի ուսուցչական կազմը. սեղանին վրայ, եղան խօսողներ՝ ուսուցիչներէն, ինչպէս նաև — իբր շնորհակալութեան խօսք — սարկաւագներէն։

✱ 9 Յուն. Եշ. — Սրբոց Առաքելոցն՝ Պետրոսի եւ Պօղոսի. Նախորդ երեկոյի նախատօնակով, և այս առաւօտեան հանդիսաւոր ժամերգութեամբ փառաւորուեցաւ տօնը քրիստոնէական եկեղեցւոյ երկու մեծ սուրբերուն և առաքեալներուն։ Ս.

digitised by A.R.A.R.@

Պատարագ մատուցանեց Ս. Յակոբայ Մայր Տաճարի ձեռնայարկին Ս. Գեւորգի սեղանին վրայ։

❋ 11 Յուն. Շբ.— Սրբոց Որդւոցն Որոտման՝ Յակոբայ Առաքելոյն եւ Յովհաննու Աւետարանչին: Մեծ հանդէսով պանծացուեցաւ տօնը «Մայր Տաճարին Սրբոց Յակոբեանց», ուր, Ս. Գլխադրի մատուռին մէջ, պատարագեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, և քարոզեց, մատրան կից՝ երկու սուրբերուն պատկերին առջև չինուած և զարդարուած շարժական սեղանին քովէն՝ «Ո՛չ գիտէք որո՛յ հոգւոյ էք դուք» բնաբանով, պարզելով նկարագիրը Որոտման երկու եղբայրներուն՝ Յովհաննու և Յակոբոսի, այն գրուածներուն մէջէն, որոնք համառօտ նկարագրականներով պատմուած են սրբազան աւետարանիչներուն կողմէ։ Երկու եղբայրներն ալ, գիտնալով հանդերձ թէ դառն է «բաժակը», որ կը մատուցանի իրենց, Յիսուսի կողմէ, յանձն առին յօժարութեամբ ըմպել զայն, և իրագործեցին իրենց խոստումը, իրենց կեանքին իսկ գինով։

❋ 13 Յուն. Բշ.— Ըստ եկեղեցական տօմարի, հին տարւոյ վերջին երեկոյեան ժամերգութենէն վերջ, ամբողջ Միաբանութիւնը, պատրիարքարանի գաւիթը բարձրացաւ, ուր, Ս. Պատրիարք Հօր ձեռքէն, արտասանուած քանի մը գեղեցիկ խորհրդածութիւններէն յետոյ, ընդունեց աւանդական կաղանդչէքը՝ Նոր Տարւոյ օրացոյցները։ — Նոյն իրիկունը, Ժառ. Վարժ. ի սրահին մէջ սարքուած էր առանձին կաղանդի երեկոյթ մը, որուն հրաւիրուած էին Միաբանութեան գրեթէ բոլոր անդամները և ուսուցչական դասը։ Աշակերտներէն մին կարդաց ուղերձ մը՝ ուղղեալ տեսչութեան և ուսուցչութեան, որուն պատասխանեց Վարժարանի տեսուչ՝ Տ. Եղիշէ Վրդ.։ Կաղանդչէքերու բաշխումէն ետք՝ ժառանգաւոր սաներ ներկայացուցին յոյժ ծիծաղաշարժ երկու տրամներ։

❋ 14 Յուն. Դշ.— Ամանոր՝ ըստ հին տօմարի. սովորութեան համաձայն, պատարագեց ի Ս. Յակոբ, Ժամօրհնող Տ. Դէորգ Վրդ.։ Պատարագէն յետոյ, Միաբանութիւնը՝ թափօրով և երգեցմամբ, պատրիարքարան ելաւ, ուր տեղի ունեցաւ Ամանորի հանդէս մը։ Ժառանգաւոր սաները երգեցին Ս. Պատրիարք Հօր երգը։ Լուսարարապետ Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. Իսրայէլեան, ի դիմաց Միաբանութեան, բարեմաղթութեան խօսքեր ըրաւ, անդրադառնալով Միաբանութեան անցեալ տարուան ընթացքին ունեցած գործունէութեան։ Ապա՝ ժառանգաւորները երգեցին իրենց քայլերգը՝ «Սիրտ ի սիրտ», իսկ Տրց. Սարգիս Սարկաւագ, ուղերձով մը՝ յանուն Ընծայարանի և Ժառ. Վարժարանի ուսանողութեան, կուգար իր որդիական զգացումները յայտնել Ս. Պատրիարք Հօր։ Ս. Թարգմանչաց Վարժարանի սանուհիները երգեցին Ամանորի երգ մը, և սաներէն մին, Վարժարանի աշակերտութեան կողմէ կարդաց ուղերձ մը։ Ի վերջոյ, Մանկապարտէզի կարմրազգեստ փոքրիկները երգեցին, և մին՝ սրտի խօսքերով, և հայեցի յստակ առոգանութեամբ, վարդերու փունջ մը ի ձեռին, իր ընկերներուն մանկական զգացումները կը բերէր աւելցնել մեծերու բարեմաղթութեանց՝ առ Նորին Ամենապատուութիւն Ս. Պատրիարք Հայրը։ Հուսկ ապա, Նորին Ամենապատուութիւնը տուաւ իր պատգամի խօսքը, որ կ'երևի «Սիոն»ի այս թիւին սկիզբը։ Հանդէսի աւարտումին՝ բոլոր ներկաներուն, Ս. Պատրիարք Հայրը բաշխեց մի մի նարինջ։

❋ 19 Յուն. Կիր.— Տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն: Երէկ՝ ճրագալոյցի առաւօտուն, ամառնային ժամը 10ին, եօթը ինքնաշարժերու պաշտօնական երթով, առաջնորդուած հեծելանուորդ երկու անգլիացի ոստիկաններէ, և հայ սկաուտներու երկվեցեակ շարքէ, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը և Միաբանութիւնը Բեթղեհէմ գացին։ Ճամբու կէսին, թափօրին կը միանան Բեթղեհէմէն դիմաւորութեան եկած հայ ազգայիններէ, և Բեթղեհէմի քաղաքապետութեան անդամներէ բաղկացած խումբին երեք ինքնաշարժերը։ Իսկ քաղաքի մուտքին, թափօրը կը դիմաւորուի կառավարական ձիաւորներու խումբէ մը, որոնք զայն կ'առաջնորդեն մինչև Ս. Ծննդեան վանքին մեծ բակը, ուր թափօր կազմելով, և «Խորհուրդ մեծ» երգելով բարձրացանք մեր վանքը, խուռն բազմութեան պատկառոտ հանդիսաւորութեան ընդմէջէն։ Թափօրին կը մասնակցէին նաև Բեթղեհէմի շրջանային կառավարիչը, քաղաքապետը և այլ պաշտօնական անձինք, որոնք, Ս. Պատրիարք Հօր՝ ժողովուրդին տուած Ծննդեան առաջին աւետիսէն յետոյ, հիւրասիրուեցան վանքի տեսչարանին մէջ։ — Յետ միջօրէի, ժամը 2ին (ամառնային), Ս. Պատրիարք Հօր հանդիսապետութեամբ, «Հրաշափառ»ով մուտք գործուեցաւ Ս. Այրը, ուր Միաբանութիւնը կատարեց իր ուխտը։ Ապա, Ս. Ծննդեան եկեղեցիի մեր բաժնին մէջ կատարուեցաւ ճրագալոյցի արարողութիւն, և Ս. Այրին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ։

Կէս գիշերին, «Փառք ի բարձունս»էն անմիջապէս առաջ, լուցեալ մոմերով Միաբանութիւնը իջաւ Ս. Այրը, ուրկէ, ձայնասփիւռին միջոցաւ, իր պաշտամունքին հաղորդ ըրաւ ի սփիւռս աշխարհին ցրուած հայ ժողովուրդը։ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ձայնասփիւռով, տուաւ Ծննդեան իր պատգամն ու աւետիսը, զոր կը ներկայացնենք այստեղ. —

Այս անգամ եւս ինծ կը վիճակի պարտականութիւն՝ Բեթղեհէմի սոյն Նուիրական Քարայրէն, ուր դարեր առաջ տեղի ունեցաւ մարդկային ազգի փրկագործութեան մեծ եւ սքանչելի խորհուրդը, սիրոյ՝ օրհնութեան եւ խաղաղութեան ողջոյն աւանդել ձեզ, Ա՛զգ իմ սիրելի, ժողովուրդ Հայոց, որ ի սահմանս Պաղեստինի եւ յարտասահմանս նորին, ի Հայրենիս եւ ի սփիւռս աշխարհի:

Մինչ՝ մարդկային սիրոյ եւ եղբայրութեան խորհրդանիշը եղող այս Նուիրական Այրէն, խաղաղութեան ողջոյնը կ'աւանդեմ, բեկեալ հոգւով կը խորհիմ թէ անդին, ամենէն բարձր ազգերու երակներէն արիւնը կը հոսի անարգել: Մարդկութեան փառքն ու պարծանքը նկատուող շքեղ ոստաններուն վրայ ռումբերու կարկուտը կը տեղայ գիշեր ու ցերեկ՝ կործանում ու կրակ սփռելով:

digitised by A.R.A.R.@

Ձեն խնայուիր, այս անսանձ սպանդին մէջ, հիւանդներ, կիներ, մանուկներ ու Աստուծոյ պաշտամունքին դարերով նուիրուած գեղեցկագոյն տաճարներն անգամ:

Մահ է ամէն ուրեք, հողերու երեսին, օդերուն մէջ, ամպերու ետին եւ ջուրերուն յատակը:

Տխուր ջանք է այս սպանդին իմաստ մը գտնել, ինչպէս փորձեցին ընել այս աշխարհի հզօրները, իմաստունները:

Վտանգուած քաղաքակրթութեան, արհամարհուած մարդկութեան այս տագնապը ի հարկէ ընդգրկած է նաեւ քեզ, ժողովո՛ւրդ Հայոց, որ յանուն Քրիստոսի փառաբանուած սկզբունքներուն քու յարումիդ՝ բոլորէն աւելի զոհաբերուողը պիտի ըլլայիր քու պատմութեան արիւնաներկ դարերուն:

Անցեալ տարի, նոյն այս տօնին, նոյն այս Սուրբ Այրէն, աչքերուս խորը ունենալով դարեր առաջ այստեղ կատարուած մեր Յիսուս Փրկչին հրաշալի ծննդեան տեսիլքը, ես մաղթեր էի քեզ համար գթութիւնը նոյն այս Մսուրքի Աստուածորդիին:

Այն ատեն ամէնուս հոգին լեցուն էր ամենախոր անձկութիւններով, արդէն՝ դէպքերու եղերական դառնութեան վերյուշումին, նախորդ մեծ պատերազմի ընթացքին քեզ սահմանուած ճակատագրին:

Աշխարհամարտին դէպքեր կը գահավիժին իրարու ետեւէ, իրարմէ աւելի ահաւոր եւ անողորմելի:

Փարթամ՝ հզօր ազգեր, կ'իյնան անմխիթար արագութեամբ: Երէկուան հարուստը այսօր տագնապն ունի չոր հացին:

Փա՜ռք եւ գոհութիւն մեր Աստուծոյն: Դեռ առայժմ խնայուած է կրկնութիւնը այդ սարսափներուն քու վրայ, Ա՛զգ իմ սիրելի:

Արդ ամոքում ու թեթեւացում մը կ'ունենանք՝ երբ կը խորհինք թէ, թէեւ տնտեսական դժնդակ պայմաններու դէմ միս մինակ, ապահովութիւնը ունիս գոնէ քու կեանքիդ, ըլլայ Հայրենիքիդ մէջ կամ ի սփիւռս աշխարհի:

Այս մտածումով է որ, սուգի, համատարած քախծութեան այս օրերուն, Յիսուսի Քրիստոսի՝ մեր պաշտելի Փրկչին Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնին սոյն խորհրդաւոր գիշերիս, սրբազնասուրբ Այրիս մէջ համախմբուած՝ Ուխտ եւ մանկունք Սուրբ Աթոռոյս, ու հաւաքուած հայ եղբայրներդ ու քոյրերդ, իբրեւ քու պատգամաւորներդ ու ներկայացուցիչներդ, ծունր դրած ենք ահա՛, ու ամէնքս միաբերան եւ միահոգի կ'աղօթենք արդարութեան, քաղաքակրթութեան եւ քրիստոնէական սիրոյ եւ եղբայրութեան յաղթանակին համար, ու կրկնելով մեր Սուրբ Նարեկացիին սրտառուչ մաղթանքը՝ կ'աղերսենք որ փարատին մէգն ու մառախուղը, չքանան չարիքն եւ յուսահատութիւնը, տարագրուին տագնապն ու տխրութիւնը աշխարհի երեսէն:

Եւ այժմ ընծայելով քեզ նուիրական Սրբավայրիս շնորհաբաշխ օրհնութիւնը, ամէնքս կը մաղթենք աւանդագին՝ որ քանի դարեր առաջ, սոյն այս հրաշալի գիշերիս, Բեթղեհէմ քաղաքի աստղազարդ երկնակամարէն հնչող հրեշտակային ձայնը, այսօր մանաւանդ, վերստին արձագանգէ ու աւետէ խռովայոյզ աշխարհին եւ տառապեալ մարդկութեան. «ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ:»

*Գիշերային ժամերգութեան, կանուխէն, Ներկայ գտնուեցան եւ մասնակցեցան Երուսաղէմի քաղաքապետը՝ Քիթ-Րօչ, Ամերիկեան հիւպատոսը, իրենց հետեւորդներով, եւ հարիւրապետ Նուպար Մ. Էքսէրճեան (որ վերջերս արժանացած է հազարապետութեան աստիճանին) իր երկու անգղիացի բարեկամներով, որոնցմէ Եդ. Հաչինսընին առ Նորին Ամենապատուութիւն գրած համակրելի նամակին թարգմանութիւնը կը դնենք ստորեւ.*

19 Յունուար 1941

Առ
Նորին Ամենապատուութիւն
Մեսրոպ Արքեպիսկոպոս Նշանեան
Պատրիարք Երուսաղէմի

Ձերդ Ամենապատուութիւն,

Իբր բարեկամներէն մին Հազարապետ Էքսէրճեանի, որուն հետ առանձնաշնորհն ունեցայ անցեալ գիշեր մասնակցելու մեր Փրկչի Ծննդեան տարեդարձի հանդիսութեան՝ Բեթղեհէմի Ծննդեան եկեղեցիին մէջ, կը զգամ թէ պարտիմ գնահատութեան խորունկ զգացում մը յայտնել այն ազնուութեան, բարութեան եւ մասնաւոր ընկալման համար զոր Ձեր Ամենապատուութիւնը հոն ցոյց տուաւ մեզի:

Կ'ուզէի նաեւ յիշել, թէ խորապէս տպաւորուած եմ պաշտամունքի հանդիսաւոր գեղեցկութենէն, եւ թէ անկէ հոգեւոր մխիթարութիւն եւ սնունդ վայելեցի, մանաւանդ այն մասէն զոր Ձեր Ամենապատուութիւնը կատարեց Ս. Այրին մէջ:

Աւելով իմ անկեղծ շնորհակալութիւններս յայտնել Ձեզի կրօնական փորձառութեան մը համար, զոր միշտ պիտի պահեմ իբր գանձ մը,

Մնամ
Ձերդ Ամենապատուութեան
Խիստ երախտապարտ եւ խոնարհ ծառայ
ԵԴՈՒԱՐԴ Մ. ՀԱՉԻՆՍԸՆ
ՏԵՂԱԿԱԼ

*Ժամերգութեան աւարտումին, Ս. Այրին առջեւ, հիւրերը շնորհաւորեցին Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, եւ մեկնեցան գոհունակ սրտով: Ս. Պատրիարք Հայրը վերադարձաւ Երուսաղէմ:*

*Տպաւորիչ արարողութեամբ կատարուեցան նոյնպէս «Ջրօրհնէք»ի կարգը, եւ Ծննդեան առաւօտեան Ս. Պատարագը, զոր, Ս. Այրին վրայ, մատոյց Տ. Գէորգ Վրդ. եպիսկոպոսական զգեստաւորմամբ: «Ջրօրհնէք»էն առաջ, քարոզեց Տ. Շաւարշ Վրդ. «Զի ոչ գոյր նոցա տեղի՝ յիջեւանին» բնաբանով. Ներկայացուց այն խումբը մարդերուն որոնք իրենց սրտին, կեանքին եւ ապրումներուն մէջ, տեղ չունին մսուրքի խոնարհ երդիքին Ներքեւ մարմնացած Աստուծոյն:*

*Կիրակի առաւօտ, Միաբանութիւնն ու ժողովուրդը, նոյն հանդիսաւորութեամբ վերադարձան Երուսաղէմ, եւ «Խորհուրդ մեծ» երգելով բարձրացան պատրիարքարանի լուսազարդուած դահլիճը, ուր, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, ընդունեց՝ իրենց բերնէն, Օրուան աւետիսը.*

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ.

*եւ ամենուն տուաւ իր հայրական փոխադարձ օրհնութիւնը.*

digitised by A.R.A.R.@

* 20 Յուն. Բշ. — Ծնունդ. Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յակոբ՝ քարոզեց Տ. Արթուն Վրդ. «Եւ զիս միայն թողուցուք. և չեմ միայն, զի Հայր ընդ իս է» բնաբանով։ Առանձնութեան, միայնութեան ամենէն տխուր և ահաւոր վիճակը, որուն միայնութեան մէջ տեսաւ և ներկայացուց։ Ճշմարտութեան, սիրոյ, արդարութեան առաքեալները, այս աշխարհի վրայ, մինակ են մնացած, ու լքուած, մերժուած, չհասկցուած։ Յիսուս ևս, իր կեանքի ապրումներով, առանձին էր, ու օտար, մերժուած, նոյնիսկ երբ մարդոցմէ շրջապատուած էր։ Բայց ինքզինք մինակ չզգաց Ան, որովհետև Հայրը՝ աստուածային գթութիւնը իրեն հետ էր։

* 26 Յուն. Կիր. — Տօն Անուանակոչութեան. Հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ. պատարագեց Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. եպիսկոպոսական թագով, և քարոզեց Ամեն. Ս. Պատրիարք Հայրը՝ «Ո՞ւր է որ ծնաւ արքայն Հրէից, զի տեսաք զաստղն նորա յարևելս» բնաբանով։ Աստուծոյ յայտնութիւններուն, ըսաւ, մարդերէ ոմանք, կը նային կա՛մ անտարբերութեամբ, կա՛մ ատելութեան ոգիով, և կամ հաւատքով։ Աստուծոյ այդ յայտնութիւններէն մին է տիեզերքը, որ «Պատմեն զփառս Աստուծոյ». ուրիշ մըն է Քրիստոսի Եկեղեցին, իր մէջ՝ դարերու կեանքով ապրուած և իրագործուած հրաշալիքներովը։ Այս, և միւս բոլոր յայտնութիւնները, մարդկային պատմութեան և կամ անհատական կեանքի մէջ շողարձակուած, պէտք է ընդունինք հաւատքով, և առաջնորդուինք դէպի լոյսը Մսուրքին, փրկարար խորհրդածութիւններով։

Վերադարձին, Միաբանութիւնը պատրիարքարան բարձրացաւ «Լոյս ի լուսոյ» շարականը երգելով. հոն, ըստ սովորութեան, կատարուեցաւ Ս. Ծննդեան տնօրհնէքի արարողութիւնը, եւ օրհնուեցան Ս. Աթոռոյս «բարութիւն»ները։

* 25 Յուն. Շբ. — Հոգ. Տ. Հմայեակ Արղ., Գազա իջաւ ի պաշտօնէ, Ս. Ծննդեան տօնին առիթով պատարագելու և հոգևորապէս մխիթարելու տեղւոյն փոքրաթիւ հայութիւնը։ Վերադարձաւ Երկուշաբթի ցերեկին։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

* Դեկ. 3 Դշ. — Երուսաղէմի Y.M.C.A.ի ընդհանուր քարտուղար Մր. Միլլըր, այցելեց Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

* Դեկտ. 4 Դշ. — Երուսաղէմի Անկլիքան եպիսկոպոս Գեր. Կրահամ Պրաուն, բարեկամական այցելութիւն տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, իր փոքր որդւոյն Ֆրանսիսի հետ։

* Դեկտ. 5 Եշ. — Այսօր, երեկոյեան, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, հետն ունենալով լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ.ը, ներկայ գտնուեցաւ Երուսաղէմի Y.W.C.A.ի տարեկան պազարին, որ տեղի ունեցաւ ընդ նախագահութեամբ Լէյտի Մաք Մայքըլի։ Նորին Ամենապատուութիւնը արտասանեց բացման աղօթքը, և օրհնեց բոլոր ներկաները։

* Դեկտ. 14 Շբ. — Այսօր, երեկոյեան, Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հետն ունենալով լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ.ը, ներկայ գտնուեցաւ Երուսաղէմի Յունաց Ամեն. Ս. Պատրիարքի կողմէ տրուած պաշտօնական թէյասեղանին՝ Յունաց պատրիարքարանին մէջ։

* Դեկտ. 15 Կիր. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր կողմէ լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ. ներկայ գտնուեցաւ Երուսաղէմի կառավարիչ Վսեմ. Մր. Քիթ-Րօչի որդւոյն՝ ընդծովեայի սպայ Մր. Մարթինի մահուան առթիւ, քաղաքիս Անկլիքան մայր եկեղեցւոյ մէջ կատարուած հոգեհանգստեան պաշտօնին։

* Դեկտ. 20 Ուր. — Բոլոնիայ Երուսաղէմի նոր ընդհանուր հիւպատոս Պր. Վիթոլտ Րիչարտ Գորսաք պաշտօնական այցելութիւն տուաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր։

* Դեկտ. 25 Դշ. — Տնօրէն ժողովոյ անդամ Գեր. Տ. Գէորգ Վրդ. Ճանտղեան այսօր մեկնեցաւ Ամման, ի դիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր ներկայ գտնուելու համար Անդրյորդանանի վեհափառ Էմիր Ապտուլլահի որդւոյն՝ Էմիր Նայիֆի ամուսնութեան հանդիսութեանց, և ներկայացնելու Նորին Ամենապատուութեան շնորհաւորութիւնները, և յանձնելու այս առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր օրհնութեան և շնորհաւորութեան գիրը։

Կը դնենք այստեղ, Ամեն. Ս. Պատրիարք Հօր և Էմիրին միջև փոխանակուած շնորհաւորագիրն ու անոր պատասխանը։

24/12/40

Նորին Արքայական Բարձրութիւն Էմիր Ապտուլլահ որդի Հիւսէյինի, Էմիր Անդրյորդանանու.

Ձերդ Բարձրութեան կը մատուցանենք մեր սրտագին շնորհաւորութիւնները Ձեր ազնիւ որդւոյն՝ իշխան Նայիֆի ամուսնութեան առթիւ, եւ կ'աղօթենք Աստուծոյ որ այդ ամուսնութիւնը ըլլայ երջանիկ եւ բարգաւաճ, եւ անոր պարգեւէ բարի զաւակներ, եւ օրհնէ անոնց կեանքը:

ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՈՑ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

Ամման 27/12/40

Նորին Ամենապատուութիւն Երուսաղէմի Հայոց Պատրիարքին.

Ամենայն գնահատութեամբ ստացած եմ Ձեր նամակը, որով զիս կը շնորհաւորէք, որդւոյս՝ Նայիֆի ամուսնական երջանիկ տօնակատարութեան համար: Այս պատեհութեամբ կը կրկնեմ իմ բարի զգացումներս եւ ծանօթ բարեկամութիւնս, Ձեզի մաղթելով բարեկեցութիւն եւ յաջո-

digitised by A.R.A.R.@

ղութիւն, եւ Հայ ժողովրդեան մաղթելով կեանքի ամէն յաջողութիւն, անոնք հոս ըլլան թէ այլուր: Ձեր Ամենապատուութիւնը կը վստահեցնեմ իմ բարեկամութեան մասին:

(Ստորագր.) ԱՊՏՈՒԼԼԱՀ

✱ Դեկտ. 26 Եշ. — Եւրոպացւոց Ծննդեան տօնին առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը Գեր. Լուսարարապետ Հայր Սուրբի եւ Հոգ. Տ. Տ. Պարգեւ, Տիրայր, Պարոյր, Յուսիկ եւ Պսակ վարդապետներու ընկերակցութեամբ այցելեց Ֆրանչիսկեան Միաբանութեան Կիւստոսին: Այս, Նորին Ամենապատուութիւնը, հետն ունենալով Գեր. Լուսարարապետ Հայր Սուրբը՝ շնորհաւորական այցելութիւն տուաւ Երուսաղէմի Անգլիքան Եպիսկոպոսին: Իսկ Հոգ. Տ. Տ. Տիրայր, Պարոյր, Յուսիկ եւ Պսակ վարդապետներ այս տօնին առթիւ այցելեցին Յոյն Կաթոլիկաց Պատր. Փոխանորդին, եւ Հոգ. Տ. Տ. Պարոյր եւ Պսակ վարդապետներ՝ Հայ Հռոմէականաց Պատր. Փոխանորդին, իսկ Հոգ. Տ. Տ. Տիրայր եւ Յուսիկ վարդապետներն ալ Գերման Կաթոլիկներու մեծաւորին:

✱ Դեկտ. 28 Շբ. — Լիբանանի Ազգային Բուժարանի տեղւոյս Տիկնանց Խնամակալութիւնը ներկայացաւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր, եւ յանձնեց, յօգուտ նոյն Բուժարանին տեղւոյս մէջ հանգանակուած գումարը՝ Լ. Պ. 91, ուղարկուելու համար յիշեալ հաստատութեան:

✱ Դեկտ. 30 Բշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելեց Եթովպիոյ Կոնտար Նահանգի պետ Ռաս Գասսա, իր հայրենիքը վերադառնալուն առթիւ ընդունելու Նորին Ամենապատուութեան օրհնութիւնը: Ամեն. Ս. Պատրիարք Հայրը օրհնեց բարեպաշտ Ռասը իր երկու թոռնիկներուն հետ միասին, Մենելիք կայսեր եւ Զօյտիթու կայսրուհիին Ս. Աթոռին նուիրած Եթովպական խաչերով:

✱ Դեկտ. 31 Գշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելեց Երուսաղէմի Ղպտոց Եպիսկոպոսի փոխանորդը, ներկայացնելու Եգիպտոսի Ղպտոց Ամեն. Պատրիարքին եղբայրական ողջոյնները:

✱ Յունուար 7 Գշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր շնորհաւորական այցելութիւն տուին Յոպպէի մեր փաստաբանները՝ Պ. Պ. Ռիչարտսըն եւ Լէվիսըն:

✱ Յուն. 8 Դշ. — Օրթոտոքս Ծննդեան տօնին առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը հետն ունենալով Գեր. Լուսարարապետ Հայր Սուրբը, շնորհաւորական այցելութիւն տուաւ տեղւոյս Ռուս Միաբանութեան Մեծաւորին՝ Գեր. Արշիմանտրիտ Անթոնիոյին: — Իսկ Տ. Գէորգ Վրդ. ընկերակցութեամբ քանի մը վարդապետներու, ի դիմաց Ամեն. Ս. Պատրիարք Հօր, շնորհաւորական այցելութիւններ տուաւ Ղպտոց, Ասորւոց եւ Հաբէշաց վանքերու եպիսկոպոսներուն եւ մեծաւորներուն:

— Իսլամական Գուրպան Պայրամի առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը շնորհաւորական քարտեր ղրկեց քաղաքիս իսլամ մեծամեծներուն:

✱ Յուն. 9 Եշ. — Ամեն. Ս. Պատրիարք Հօր այցելեց Ս. Աթոռոյս իրաւագէտ-խորհրդական Արդարիոս Պէյ:

✱ Յուն. 14 Գշ. — Մեր Նոր Տարիին առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հօր շնորհաւորական այցելութեան եկան՝ վսեմ. Բարձր Գոմիսերի կողմէ իր Թիկնապահը, եւ Պ. Ընդհ. Քարտուղարին կողմէ Րուհի Պէյ Ապտ էլ Հատի. Երուսաղէմի քաղաքապետ վսեմ. Մուսթաֆա Պէյ Խալտի. Թուրքիոյ, Ռումանիոյ, Չեխոսլովաքիոյ Պ. Հիւպատոսները. իսկ կառավարական բոլոր բարձր պաշտօնատարները եւ օտար պետութեանց բոլոր հիւպատոսները ղրկած էին իրենց շնորհաւորական նամակներն ու քարտերը:

— Յետ միջօրէի, ժամը 3.30ին, Ս. Թարգմանչաց Վարժարանի կողմէ սարքուած, Ամանորի եւ Ս. Ծննդեան հանդէս մը տրուեցաւ Ե. Հ. Բարեգործական Միութեան սրահին մէջ, ընդ նախագահութեամբ Լուսարարապետ Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ.ի: Ներկայացուեցան կաղանդի անակընկալը, հայկական եւ մանկական պարեր, տրամախօսութիւններ, արտասանութիւններ եւ Ս. Ծննդեան կենդանի պատկեր մը: Ներկայ էր Միաբանութիւնը, եւ բազմութիւն ժողովրդեան եւ ծնողքներ:

✱ Յուն. 16 Եշ. — Կէսօրէ առաջ ժամը 10.30ին Ս. Պատրիարք Հայրը Տնօրէն Ժողովի անդամներուն ընկերակցութեամբ, Ամանորի առթիւ այցելեց Ժառանգաւորաց Վարժարանը, ուր, ուսանողութենէն եւ ուսուցչական դասէն առաջնորդուած, քայլերգով, մտաւ ներս՝ կաղանդազարդուած սրահը: Ի դիմաց ուսանողութեան, Մինաս Սարկաւագ, կարդաց ուղերձ մը՝ անցնող տարուան վրայ խորհրդածութիւններով, եւ գալիքին համար՝ յուսադրութիւններով լեցուն: Ս. Պատրիարք Հօր փափաքով, Գեր. Տ. Կիւրեղ Ծ. Վրդ.ի քաջալերական խօսքերէ եւ մաղթանքներէ վերջ, Նորին Ամենապատուութեան Աջին մօտեցան ամէնքը, անկէ ընդունելով Նոր Տարւոյ պըտուղ-նուէրը՝ խնձոր:

✱ Յուն. 20 Բշ. — Մեր Ս. Ծննդեան տօնին առթիւ Ամեն. Ս. Պատրիարք Հայրը, պատրիարքարանի մեծ դահլիճին մէջ, ընդունեց շնորհաւորական այցելութիւններ՝ Ֆրանչիսկեան Կիւստոսին՝ իր հետեւորդներով, Ղպտոց եւ Ասորւոց վանքերու մեծաւորներուն՝ իրենց հետեւորդներով, Ռուսաց վանքի մեծաւորին, Հայ եւ Յոյն Հռոմէականաց Պատր. փոխանորդներուն եւ Սիոնի Տորմիսիոն վանքի մեծաւորին:

digitised by A.R.A.R.@

# ՅՈՐԴԱՆԱՆ ՏԷՐ Կ. ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ

Խորունկ վիշտով կ'արձանագրենք այս պատուական ազգայինին մահը, որ տեղի ունեցած է 8 Նոյեմբեր 1940ին, Սուրաբայայում: Հանգուցեալը ծնած է Նոր-Ջուղա, 1861ին. նախակրթութիւնը ստացած է նախ իր ծննդավայրի քաղաքային վարժարանը, ապա շարունակած զայն տեղւոյն միսիոնարական վարժարանին մէջ: Յետոյ, բարեսէր ազգայիններու օժանդակութեամբ, կ'աւարտէ Կալկաթայի Մարդասիրական ճեմարանը: Ժամանակ մը եղած է ուսուցիչ ճեմարանին մէջ եւ այլուր, ապա մտած առեւտրական ասպարէզ, հոգիով միշտ կապուած մնալով սակայն դպրոցին եւ ազգային դաստիարակութեան: Իր կեանքի վերջին տարիներուն, տխուր պարագաներու բերումով թողած է առեւտրական կեանքը, եւ նորէն նուիրուած է իր շատ սիրած ուսուցչական ասպարէզին:

Եղած է ազգասէր եւ եկեղեցասէր ջուղայեցի մտաւորական մը, Թաղիադեանցի դպրոցէն, եւ բարի ու անկեղծ հայ մը, բարեկամ ամենուն, եւ սիրուած ու յարգուած բոլորէն. մին անոնցմէ որոնք Հնդկաստանի օտարութեան մէջ հայ անցեալին եւ զգացումին անլուռ խօսնակը եղան, ընտրելով, այս կերպ, «զմասն բարի», եւ արժանանալով ազգային երախտագիտութեան:

Ութսունամեայ կը կնքէ իր մահկանացուն. իր մահը՝ շիջումը կանթեղին՝ որուն սպառած է իւղը, կատարած՝ լիովին սակայն, իր հայու պարտքը. երանի՜ իր հոգւոյն:

Հանգուցեալը, իր վերջին տարիներուն, գրած է «Նետրլանտական Արեւելեան Հնդկաստանայ Հայ Գաղութին պատմութիւնը» իբրեւ կոթող անմոռաց, յիշատակին՝ իր եւ իրեններուն:

Հանգիստ եւ օրհնութիւն իր բարի հոգիին:

Proprietor - His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem. Armenian Patriarchate, Jerusalem.
Editor - Father Torkom Manoukian. Armenian Convent, Jerusalem.
Printed by the Armenian Convent Printing Press, Jerusalem.

digitised by A.R.A.R.@